

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (23)

ԵՐԵՎԱՆ - 2017

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ ՔԱՎՈՎԵԴԵՆԻԵ»
«BANBER YEREVANI HAMALSARANI JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Գաբրուզյան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գևորգյան Վ. Ա., Գոնչար Ն. Ա. (*գլխ.
խմբագրի տեղակալ*), Խարրիևա Տ. Յա. (*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*),
Հարությունյան Գ. Գ., Հայկյանց Ա. Մ., Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտու-
ղար*), Ղազինյան Գ. Ս., Մեղրյան Ս. Գ., Յակովլև Վ. Ֆ. (*Մոսկվա*), Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: Мирзоян Г. К.

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), Айкянц А. М., Антонян Ю. М. (*Москва*),
Арутюнян Г. Г., Габузян А. А. (*ответ. редактор*), Геворкян К. А., Гончар Н. А.
(*зам. главного редактора*), Дюран Бернард (*Монпелье*), Казинян Г. С., Кури Хель-
мут (*Фрайбург*), Мегрян С. Г., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), Симонян А. Г.,
Хабриева Т. Я. (*Москва*), Яковлев В. Ф. (*Москва*)

Editor-in-chief: Mirzoyan H. Gh.

Editorial Board:

Antonyan Yu. M. (*Moscow*), Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), Duran
Bernard (*Montpellier*), Gabuzyan A. H. (*Managing Editor*), Gevorgyan K. A.,
Ghazinyan G. S., Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), Harutyunyan G. G.,
Haykyants A. M., Hovakimyan A. E. (*Executive Secretary*), Khabrieva T. Ya.
(*Moscow*), Kury Helmut (*Freiburg*), Meghryan S.G., Simonyan A. H., Yakovlev
V. F. (*Moscow*)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

Պետության դերն իրավական կարգավորման գործընթացում չի ավարտվում արգելքների, պարտականությունների կամ սուբյեկտիվ իրավունքների սահմանմամբ՝ դրանք նորմատիվ ակտերում ամրագրելով: Պետությունը, Վ. Վ. Լազարևի պատկերավոր արտահայտությամբ, «իրեն իրավունք է վերապահում նորից միջամտելու հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմանը, բայց արդեն ոչ թե ընդհանուր ձևով, այլ կոնկրետ հարաբերությունների, կոնկրետ կենսական իրադրությունների և իրական գործերի հարթության վրա»¹: Հնարավոր չէ, օրինակ՝ ձեռք բերել անշարժ գույք, ստանալ որևէ պարգև առանց իրավասու պետական մարմնի որոշման, թեև առկա են նախադրյալները՝ օրենքը և օրենքով նախատեսված բոլոր պայմանները: Ուրեմն իրավական նորմերի մի մասն անխուսափելիորեն կենսագործվում է իրավակիրառման միջոցով: Պետության բնույթը որպես իշխանավարման ապարատ, ենթադրում է իրավակիրառ գործունեության հնարավորություն և անհրաժեշտություն: Տվյալ դեպքում պետությունը հասարակական կյանքը կարգավորելու նպատակով որոշակի հարցերի լուծումը հանձնում է նախապես որոշված մարմինների իրավասությանը:

Իրավունքի կիրառումը պետական գործունեության ձևերից մեկն է, երբ իրավասու մարմինը հանդես է գալիս պետության անունից՝ նրա լիազորությամբ: Առանց իրավունքի կիրառման հնարավոր չէ իրավունքի նորմերը պահպանել իրավախախտումներից, պատժել իրավախախտներին և վերացնել իրավախախտման վնասակար հետևանքները: Իհարկե, իրավունքի կենսագործումը մեծ մասամբ տեղի է ունենում առանց պետության ու նրա մարմինների միջամտության: Անհատները և կազմակերպությունները կամավոր, առանց հարկադրանքի, փոխադարձ համաձայնությամբ մտնում են իրավական հարաբերությունների մեջ, որոնց շրջանակում օգտագործում են սուբյեկտիվ իրավունքները, կատարում են պարտականությունները, պահպանում են իրավունքի նորմերով սահմանված արգելքները: Մակայն կան որոշակի իրադրություններ, երբ առաջանում է պետության միջամտության անհրաժեշտություն: Առանց դրա իրավունքի կենսագործումն անհնար է: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ որոշ նորմերի կենսագործ-

¹ «Теория государства и права». Под ред. Г. Н. Манова. М., 1995, с. 209.

ման կառուցակարգի մեջ նախապես ծրագրված է պետության մասնակցությունը²:

Իրավունքի կենսագործման տեսության մեջ ժամանակի ընթացքում իրավագետները մշակել են իրավունքի կիրառման հասկացությունը, իրավունքի կիրառման գործառնությունները և փուլերը, իրավակիրառման ակտերը (հասկացությունը, հատկանիշները, տեսակները), իրավակիրառումը որպես ճանաչողության իրավաբանական ձև ու իրավաբանական ապացուցում, իրավակիրառման սկզբունքները, իրավակիրառման առանձնահատկությունները զանազան ոլորտներում և այլն:

Նշված հիմնահարցերի հետազոտման համար մեկնակետ է համարվում իրավունքի կիրառման հասկացությունը: Իրավունքի կիրառման ծավալուն բնորոշումներից մեկը հետևյալն է. իրավունքի նորմերի կիրառումն իրավասու հանրային (պետական) մարմնի իշխանական գործունեությունն է՝ ուղղված իրավունքի նորմերի կենսագործմանը՝ կոնկրետ կենսական դեպքերի ու անհատական որոշակի անձանց նկատմամբ, և ավարտվում է իրավաբանական գործով անհատական որոշման կայացմամբ՝ հիմք ընդունելով իրավաբանական փաստերը և կոնկրետ իրավական նորմերը³:

Սակայն, այնուամենայնիվ, իրավունքի կիրառման տեսական բնորոշումների մեջ կան որոշակի տարբերություններ: Օրինակ՝ «իրավունքի կիրառումը պետության անունից օրենքով սահմանված ձևերով իրականացվող իշխանական-կարգադրիչ գործունեություն է՝ ուղղված սուբյեկտիվ իրավունքների ու իրավաբանական պարտականությունների կենսագործման պայմանների ապահովմանը, իրավահարաբերությունների սուբյեկտների միջև վիճելի իրադրությունների լուծմանը, իրավախախտների նկատմամբ իրավաբանական պատասխանատվության միջոցների կիրառմանը»⁴:

Մեկ այլ բնորոշման համաձայն՝ իրավունքի կիրառումն իրավասու մարմինների և անձանց կազմակերպական գործունեությունն է, որի նպատակն է նպաստել իրավունքի հասցեատերերին պատկանող իրավունքների և պարտականությունների իրականացմանը, ինչպես նաև վերահսկողությունն այդ գործընթացի նկատմամբ⁵: Այս բնորոշման յուրահատկությունն իրավունքի կիրառման գործընթացում վե-

² Տե՛ս «Теория государства и права». Под ред. В. М. Корельского и В. Д. Перевалова. М., 1997, էջ 381:

³ Տե՛ս Վ. Ս. Ներսեսյանց, Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, էջ 246, **Черданцев А. Ф.** Теория государства и права. М., 2001, էջ 432, **Мухаев Р. Т.** Теория государства и права, М., 2001, էջ 387-389, **Сорокина Ю. В.** Государство и право: Философские проблемы. Курс лекций, М., 2004, էջ 169, **Скакун О. Ф.** Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, 2005, էջ 628, **Лазарев В. В., Липень С. В.** Теория государства и права. М., 2004, էջ 363, **Комаров С. А.** Общая теория государства и права (энциклопедический курс). М., 1997, էջ 304:

⁴ «Теория государства и права». Под ред. Р.А. Ромашова, СПб., 2005, с. 307.

⁵ Տե՛ս «Проблемы теории государства и права». / Под. ред. В. С. Нерсесянца, М., 2002, էջ 425:

րահսկողության դերի կարևորումն է: Հաճախ իրավունքի կիրառման տակ հասկացվում է «իրավասու մարմինների իշխանական գործունեությունը՝ ուղղված իրավաբանական գործով անհատական որոշում նախապատրաստելուն և ընդունելուն՝ իրավաբանական փաստերի և կոնկրետ իրավական նորմերի հիման վրա»⁶:

Իրավունքի կիրառման բազմազան բնորոշումների շարադրանքը կարելի է շարունակել: Մակայն այս հարցում շատ տեղին է Մ. Ն. Մարչենկոյի դիտողությունը, «որ կարիք չկա և հնարավոր էլ չէ թվարկել «իրավունքի կիրառում» հասկացության բոլոր սահմանումները: Շատ ավելի կարևոր է կենտրոնանալ իրավակիրառման գործընթացի ընդհանուր գծերի և առանձնահատկությունների վրա, որոնք այս կամ այն աստիճանով արտացոլվում են դրա բնորոշումներում և դրա վերաբերյալ պատկերացումներում»⁷: Մ. Ն. Մարչենկոյի այս դիտողությունը հաշվի առնելով՝ քննարկման առարկա չենք դարձնի «իրավունքի կիրառում» հասկացության սահմանումները, մանավանդ որ այդ բնորոշումներից շատերի տարբերությունները էական չեն, այլ ընդամենը ձևակերպման առանձնահատկություն են:

Թվարկված բոլոր բնորոշումները կարելի է համարել միատիպ, ինչը նշանակում է, որ իրենց մեթոդաբանական մոտեցումների տեսանկյունից դրանք նման են կամ համընկնող: Բոլոր մոտեցումներից բացառություն է այն տեսակետը, որ իրավակիրառումը չպետք է դիտել որպես իրավունքի կենսագործման ձև՝ մյուս ձևերի՝ օգտագործման, պահպանման, կատարման շարքում, քանի որ այն հանգում է այդ ձևերից որևէ մեկին կամ դրանց զուգակցմանը: Օ. Է. Լեյստի կարծիքով այդպիսի մոտեցմանը չի կարելի համաձայնվել հետևյալ հիմնավորումներով.

ա) մի շարք իրավական նորմեր ընդհանրապես չեն կարող կենսագործվել առանց իրավունքի կիրառման: Այդպիսիք են, օրինակ՝ իրավախախտման համար իրավաբանական պատասխանատվության վերաբերյալ նորմերը և այլն: Բացառելով իրավակիրառումը իրավունքի կենսագործման ձևերի շարքից, անհնար է պատկերացնել այդ բնույթի նորմերի իրացման որևէ այլ համակարգ,

բ) հենց իրավակիրառումն է ծնել լայն իմաստով վարույթային իրավունքը, որը սահմանում է նյութական իրավական նորմերի կենսագործման ու պահպանության ընթացակարգը⁸: Մա իր հերթին նշանակում է, որ իրավունքի կիրառումը կենտրոնական և առանձին տեղ է զբաղեցնում իրավունքի կենսագործման ձևերի շարքում:

Թվարկված տարակարծիք մոտեցումներում կողմնորոշվելու համար փորձենք վեր հանել իրավունքի կիրառման հատկանիշները: Ի-

⁶ «Теория государства и права». Под ред. В. М. Корельского и В. Д. Перевалова, с. 382.

⁷ Марченко М. Н. Проблемы теории государства и права. М., 2005, с. 685.

⁸ Ст' у «Теория государства и права». Под ред. Марченко М. Н., М., 1997, էջ 423:

րավունքի տեսության մեջ իրավունքի կիրառման՝ որպես իրավունքի իրականացման ձևի հատկանիշներ, որպես կանոն, համարում են հետևյալները. 1) իրավակիրառ գործունեությունը իրականացնում են միայն պետության իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) կամ հասարակական ինքնակառավարման մարմինները՝ պետության լիազորությամբ, 2) իրավունքի նորմերի կիրառման գործունեությունն ունի պետաիշխանական բնույթ, 3) իրավակիրառ գործունեության բովանդակությունը իրավունքի նորմերի հիման վրա անհատական իրավական պատվիրանների՝ ակտերի հրապարակումն է, 4) իրավունքի նորմերի կիրառումն իրականացվում է որոշակի հերթականությամբ ընթացող փուլերով, 5) իրավունքի նորմերի կիրառումն իրականացվում է օրենքով սահմանված խստագույն կարգով⁹:

Իրավակիրառ գործունեությունն իրականացնում են միայն պետության իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) կամ հասարակական ինքնակառավարման մարմինները՝ պետության լիազորությամբ: Իսկ առանձին քաղաքացիները, որ պաշտոնատար անձինք չեն ու չունեն հատուկ լիազորություններ, չեն կարող կիրառել իրավունքի նորմեր¹⁰:

Գրականության մեջ երբեմն արտահայտվում է տեսակետ, որ իրավունքի նորմեր կիրառում են ոչ միայն պետական մարմինները և պաշտոնատար անձինք, այլև քաղաքացիները: Այս հարցում պետք է համաձայնվել Օ. Է. Լեյստի հետ, որը մերժում է քաղաքացիների կողմից իրավունքի կիրառման հնարավորությունը¹¹: Իհարկե, քաղաքացիները կատարում են արարքներ և գործարքներ, որոնք հանգեցնում են իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման: Դրանց մի մասը շատ պարզ են, մյուսները պահանջում են հատուկ ձև՝ գրավոր պայմանագիր, որոնց մի մասն էլ պետք է նոտարի մոտ վավերացվի կամ պետական մարմնում գրանցվի: Այս հիմքով համարել, որ քաղաքացիներն իրականացնում են իրավունքի կիրառում, ճիշտ չի լինի, որովհետև իրավակիրառումն իր բնույթով պետաիշխանական գործունեություն է: Բացի այդ, քաղաքացիների բոլոր գործարքները և պայմանագրերը, ըստ էության, սուբյեկտիվ իրավունքների իրականացման և պարտականությունների կատարմանն ուղղված իրավական ակտեր են, այլ ոչ թե իրավունքի նորմերի կիրառում: Գործարքների հատուկ ձևն այս գործընթացում լրացուցիչ երաշխիքի դեր է կատարում, որպեսզի քաղաքացիների իրավական շահերը չոտնահարվեն:

Իրավունքի նորմերի կիրառման գործունեությունն ունի պետաիշ-

⁹ Տե՛ս **Ա. Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, Եր., 2011, էջ 278-280:

¹⁰ Տե՛ս «Общая теория государства и права». Академ. курс в 2-х томах. Том 2. Теория права. М., 1998, էջ 315:

¹¹ Տե՛ս «Теория государства и права». Под ред. Марченко М. Н., էջ 423:

խանական բնույթ: Այդպիսին է դատարանի կողմից արդարադատություն իրականացնելը կամ քննիչի կողմից քրեական գործի քննությունը: Իրավունքի կիրառման այս հատկանիշը գրականության մեջ երբեմն ձևակերպում են որպես պետական գործունեության կարևորագույն տեսակ, որը գոյություն ունի օրենսդիր, գործադիր և իրավապահպան գործունեությանը զուգահեռ¹²: Լինելով պետական գործունեության տեսակ՝ այն, իհարկե, կրում է պետաիշխանական բնույթ: Այդպիսով, իրավունքի կիրառումը միշտ իրականացվում է պետության անունից: Իրավակիրառման արդյունքում ընդունված ակտերն իրավական բնույթ ունեն: Դրանք երաշխավորված են պետական հարկադրանքով:

Իրավակիրառ գործունեության բովանդակությունը իրավունքի նորմերի հիման վրա անհատական իրավական պատվիրանների՝ ակտերի հրապարակումն է: Այդ ակտերը վերաբերում են որոշակի կենսական դեպքերին և հասցեագրվում են կոնկրետ անձանց: Օրինակ՝ դատարանի կայացրած դատավճիռը հանցանք կատարած կոնկրետ անձի նկատմամբ: Իրավունքի նորմերի կիրառման անհրաժեշտությունը ծագում է հետևյալ դեպքերում¹³.

ա) իրավունքի նորմերը իրավասու մարմնի կողմից կիրառվում են, երբ սահմանված իրավունքները և պարտականությունները չեն կարող ծագել կոնկրետ սուբյեկտի մոտ և իրացվել առանց պետական մարմինների պետաիշխանական գործունեության: Սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների ծագման ու իրացման համար յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է իրավասու մարմնի իշխանական որոշման հրապարակում՝ կոնկրետ անձի նկատմամբ: Օրինակ՝ տարիքային կենսաթոշակի իրավունքը իրացնելու համար անհրաժեշտ է լիազորված պետական մարմնի պաշտոնական որոշումը քաղաքացուն կենսաթոշակ հատկացնելու մասին,

բ) իրավասու պետական մարմնի իրավակիրառ գործունեությունը անհրաժեշտ է այն դեպքում, երբ կան որոշակի արգելքներ քաղաքացիների և կազմակերպությունների սուբյեկտիվ իրավունքների օգտագործման համար: Օրինակ՝ սեփականության իրավունքի խախտման դեպքում,

գ) իրավունքի նորմերի կիրառման անհրաժեշտությունը ծագում է նաև այն ժամանակ, երբ իրավաբանական պարտականությունները չեն կատարվում կամավոր: Այդ դեպքում իրավասու մարմինն իր որոշմամբ հարկադիր կարգով ապահովում է իրավունքի սուբյեկտի վրա դրված պարտականությունների կատարումը,

դ) իրավակիրառ գործունեությունը անհրաժեշտ է, եթե կատարվել է իրավախախտում, և պետք է որոշվի իրավաբանական պատասխա-

¹² Տե՛ս «Общая теория государства и права». Академ. курс в 2-х томах, էջ 316:

¹³ Տե՛ս **Мухаев Р. Т.** Теория государства и права, էջ 390, **Վ. Ն. Խրոպանյուկ**, Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, էջ 309:

նատվության միջոցը: Օրինակ՝ դատարանը քրեական իրավունքի նորմերի հիման վրա որոշում է պատժամիջոցը:

Իրավունքի նորմերի կիրառումն իրականացվում է օրենքով սահմանված խստագույն կարգով: Այդպիսի կարգը առանձնապես կարևոր նշանակություն ունի և կոչված է ապահովելու օրինականության հետևողական իրացումը, կոնկրետ իրավաբանական գործի հանգամանքների բազմակողմանի և խորը քննությունը: Օրենքը սահմանում է իրավակիրառ գործունեության ընթացակարգը, արդյունքային ակտերին ներկայացվող պահանջները, իրավակիրառ գործունեության սուբյեկտների շրջանակը և այլ հարցեր¹⁴:

Իրավակիրառ գործունեությունն իրականացվում է որոշակի փուլային հերթականությամբ: Իրավունքի կիրառումը միասնական, բարդ գործընթաց է: Այն կազմված է զանազան փոխկապակցված հերթական գործողություններից, որոնք ընդունված է անվանել իրավունքի նորմերի կիրառման փուլեր: Իրավունքի կիրառումը վարույթային, ընթացակարգային գործունեություն է: Չնայած վարույթի առանձին տեսակներում առկա շեղումներին՝ այն ենթարկվում է որոշակի ռիթմի, որովհետև, այնուամենայնիվ տարբեր վարույթներում առկա են ընդհանրություններ, վարույթի միևնույն փուլերի հետևողական կրկնություններ: Նպատակին հասնելու համար իշխանության սուբյեկտը որոշակի հերթականությամբ կատարում է մի շարք գործողություններ, որոնք հարաբերականորեն փակ ցիկլեր են: Փուլերը հետևում են մեկը մյուսին, նախորդը պատրաստում է հաջորդին: Որպես կանոն, նոր փուլը կարող է սկսվել միայն այն ժամանակ, երբ պաշտոնապես ավարտված է նախորդը: Այսպիսով, փուլն իրավակիրառ գործունեության հարաբերականորեն ինքնուրույն մաս է, որն անհրաժեշտ է ընդհանուր արդյունքը նվաճելու համար: Յուրաքանչյուր փուլ ամենից առաջ բնութագրվում է իր յուրահատուկ անմիջական նպատակով, որը կարելի է համարել աստիճան ընդհանուր՝ գլխավոր նպատակին հասնելու ճանապարհին: Յուրաքանչյուր փուլի հատուկ է նաև մասնակիցների իր կազմը, հավաքվող և օգտագործվող ինֆորմացիան, կազմվող փաստաթղթերը, ընդունվող որոշումները և կատարվող գործողությունները:

Իշխանական լիազորություններն անաչառ, նպատակահարմար, օրինական օգտագործելու համար իրավունքի կիրառման շատ վարույթներում նախատեսված է «իշխանության սուբյեկտների այսպես կոչված հերթափոխ»: Դա ակնառու է պատասխանատվության ենթարկելու իրավական գործողությունների օրինակով. իշխանության մի սուբյեկտը կազմում է արձանագրություն, մյուսը կայացնում է որոշում, երրորդը ընդունում է զանգատը այդ որոշման դեմ: Հետագա փուլերում կատարվում է նախորդների վերստուգում, որի արդյունքում վերաց-

¹⁴ Տե՛ս **Myxaev P. T.**, նշվ. աշխ., էջ 390:

վում են թերությունները կամ գործը վերադարձվում է ավելի վաղ փուլերի: Բացի փաստական հիմքերից, մի փուլից մյուսին անցնելու անհրաժեշտ պայման է նաև վարույթային հիմքը (առիթը)՝ պաշտոնական փաստաթուղթը: Օրինակ՝ վարչական գանգանքի վերաբերյալ գործը կարող է քննվել, եթե կա արձանագրություն, կամ գործի վերանայման համար առիթ կամ հիմք է գանգատը:

Ավանդաբար առանձնացվում են իրավունքի կիրառման հետևյալ փուլերը. ա) իրավաբանական գործի փաստացի հանգամանքների բացահայտում (վերլուծություն և հետազոտություն), բ) հետազոտված փաստացի հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավունքի նորմի ընտրություն և վերլուծություն, գ) իրավասու պետական մարմնի կողմից որոշում ընդունելը և այդ որոշումը շահագրգիռ անձանց ու կազմակերպություններին հասցնելը¹⁵:

Իրավունքի կիրառման գործընթացի եռափուլ բաժանման կողմնակից է իրավաբան-տեսաբանների մեծ մասը¹⁶: Սակայն կան իրավագետներ, ովքեր իրավունքի կիրառման գործընթացում առանձնացնում են չորս և ավելի փուլեր: Օրինակ՝ Մ. Ն. Մարչենկոն առանձնացնում է իրավունքի կիրառման չորս փուլ՝ 1) գործի փաստական հանգամանքների բացահայտում և հետազոտում, 2) իրավունքի նորմի ընտրություն և վերլուծություն՝ դրա իսկության, օրինականության, ժամանակի, տարածության և ըստ անձանց շրջանակի գործողության տեսանկյունից, 3) իրավունքի նորմի բովանդակության վերլուծություն և որոշման կայացում (անհատական ակտի հրապարակում), 4) ընդունված որոշման բովանդակությունը պետական և հասարակական շահագրգիռ մարմիններին ու պաշտոնատար անձանց հասցնելը¹⁷:

Ս. Ա. Կոմարովը առանձնացնում է իրավունքի կիրառման հետևյալ հինգ փուլերը. 1) գործի փաստական հանգամանքների վերլուծություն, 2) իրավունքի նորմի ընտրություն, որոնում՝ իրավահարաբերության մասնակիցների վարքագծի որոշման կամ գնահատման համար, երբ կիրառվում է սանկցիա, 3) իրավունքի նորմի իմաստի և բովանդակության պարզաբանում, 4) իրավունքի նորմի մեկնաբանում իրավասու պետական մարմնի կամ այլ սուբյեկտի կողմից, 5) իրավունքի նորմի կիրառման ակտի ընդունում¹⁸:

Ա. Բ. Վենգերովն իր հերթին առանձնացնում է իրավունքի կիրառման գործընթացի վեց փուլեր¹⁹:

¹⁵ Վ. Ն. Խրոպանյուկ, նշվ. աշխ., էջ 310-312:

¹⁶ Տե՛ս «Теория государства и права». Курс лекции. Под ред. Н. И. Матузова и А. В. Малько. М., 1999, էջ 417, «Теория государства и права». Под ред. Г. Н. Манова. էջ 209, Мухаев Р. Т., նշվ. աշխ., էջ 391-392, «Теория государства и права». Под ред. В. М. Корельского и В. Д. Первалова. էջ 383, Черданцев А. Ф., նշվ. աշխ., էջ 249:

¹⁷ Տե՛ս «Общая теория государства и права». Академ. курс в 2-х томах, под ред. проф. М. Н. Марченко. Том 2, էջ 319:

¹⁸ Տե՛ս Կомаров С. А., նշվ. աշխ., էջ 309:

¹⁹ Տե՛ս Венгеров А. Б. Теория государства и права. М., 1999, էջ 431-438:

Ինչպես տեսնում ենք, իրավակիրառման անհատական ակտի կատարումը՝ որպես իրավունքի նորմի իրացման եզրափակիչ փուլ, չի ներառվում իրավունքի նորմերի կիրառման փուլերի մեջ: Ընդունված տեսակետի համաձայն՝ իրավունքի կիրառման ակտի կատարումը դուրս է մնում իրավունքի կիրառման շրջանակներից²⁰: Նման տեսակետի համար հիմք է ծառայում այն հիմնավորումը, որ ակտի կատարումն ավելին է, քան հասարակ կիառումը: Դա նորմի իրացումն է այդ բառի լրիվ իմաստով, դրա կենսագործումը կյանքում, որը դուրս է մնում իրավունքի կիրառման շրջանակներից: Իրավունքի կիրառումը սոսկ միջոց է այդ կենսագործմանը հասնելու համար:

Եթե համակողմանիորեն մոտենանք իրավունքի կենսագործման գործընթացի՝ վերը բերված փուլային բաժանումներին, ապա կտեսնենք, որ դրանք, ըստ էության, սկզբունքային տարբերություններ չեն պարունակում: Փուլերի քանակային տարբերություն առաջ է գալիս, երբ եռափուլ բաժանման կողմնակիցների առաջ քաշած՝ հետագոտված փաստացի հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավունքի նորմի ընտրություն և վերլուծություն փուլը տրոհվում է երկու²¹ կամ երեք²² առանձին փուլերի: Դրանից հիմնախնդրի էությունը որևէ կերպ չի փոխվում: Այդ իսկ պատճառով մենք իրավունքի կենսագործման գործընթացի փուլերը կքննարկենք իրավունքի կիրառման եռափուլ բաժանման հիմքով՝ որպես մեծամասնության կողմից ընդունված տեսակետ: Մարչենկոն՝ որպես եռափուլ բաժանման կողմնակից, և սկզբունքային չի համարում փուլերի քանակական տարբերությունը՝ հետևյալ դատողություններից ելնելով. «Անշուշտ, հիմնախնդիրը հանգում է ոչ թե իրավակիրառ գործընթացի առանձնացվող աստիճանների և փուլերի քանակին, այլ դրանց բովանդակությանը, իմաստին: Ամբողջ իրավակիրառ գործունեությունը՝ որպես ամբողջական միասնական գործընթաց, տրոհվում է փուլերի ոչ թե ինչ-որ նպատակի համար, այլ բուն իրավակիրառ գործընթացի ավելի խորը և բազմակողմանի ճանաչման ու կատարելագործման համար»²³: Ուրեմն փուլային բաժանումը ինչ-որ տեղ պայմանական է: Գլխավորը իրավակիրառման գործընթացում իրավունքի սկզբնական նպատակի, օրենքում ամրագրված դրա բովանդակության կենսագործումը և հասարակական հարաբերությունների արդյունավետ, արդարացի, օրինական կարգավորումն են²⁴:

Մ. Ն. Մարչենկոն իրավունքի կիրառման վերը քննարկված հասկանիշներին ավելացնում է ևս մեկը՝ այն իրականացվում է որոշակի

²⁰ Տե՛ս **Комаров С. А.**, նշվ. աշխ., էջ 309:

²¹ Տե՛ս «Теория государства и права». Под ред. В. М. Корельского и В. Д. Перевалова, էջ 319:

²² Տե՛ս **Комаров С. А.**, նշվ. աշխ., էջ 309:

²³ «Общая теория государства и права». Академ. курс в 2-х томах, էջ 320:

²⁴ Տե՛ս **Ա. Վաղարշյան**, նշվ. աշխ., էջ 282:

հանրաճանաչ սկզբունքների հիման վրա²⁵: Օ. Ֆ. Սկակունն այդ հատկանիշներին (մի քիչ այլ ձևակերպմամբ) ավելացնում է երկու հատկանիշ՝ 1) իրավունքի կիրառումն ունի ընթացակարգային-վարույթային բնույթ, 2) իրավունքի կիրառումն ունի ստեղծագործական, մտավոր գործունեության բնույթ²⁶: Ե. Գ. Շուկինն առաջարկում է իրավունքի կիրառման այնպիսի հատկանիշ, ինչպիսին է դրա՝ որպես իրավական կարգադրագրերի իրականացման բարդ, համալիր ձև լինելը²⁷: Կարծում ենք, որ թվարկված վերջին հատկանիշները քննարկելու կարիք չկա, որովհետև դրանք էական ոչինչ չեն ավելացնում իրավակիրառման բնութագրին: Օրինակ՝ առանց իրավակիրառ գործունեության փուլայնությունը հաշվի առնելու՝ իրավակիրառման բնութագիրը թերի կլինի, հետևաբար, այն անպայման պետք է ներառվի իրավունքի կիրառման բնութագրական գծերի կամ հատկանիշների շրջանակի մեջ: Դրանցից հիմնավոր է իրավակիրառման սկզբունքների հարցը: Սակայն այս դեպքում էլ պետք է նկատի ունենալ, որ Մ. Ն. Մարչենկոյի նշած սկզբունքները բնորոշ են ոչ միայն իրավակիրառմանը, այլև ցանկացած իրավական գործունեությանը, ինչպես նաև ողջ իրավական համակարգին: Հետևաբար, դրանք զուտ և միայն իրավակիրառմանը բնորոշ սկզբունքներ համարել չի կարելի, և իրավունքի կիրառմանը բնորոշ հատկանիշների շարքում դրանք թվարկելն անընդունելի է:

Այսպիսով, ինչպես նկատում ենք, իրավունքի կիրառման՝ որպես իրավունքի իրականացման հատուկ ձևի և իրավական կարգավորման գործընթացի (փուլի) վերը թվարկված հատկանիշներում իրավունքի կիրառման օբյեկտ է դիտվում միայն իրավունքի նորմը, նորմատիվ ակտերի առկա զանգվածը: Պետք է նկատի ունենալ, որ դրական իրավունքի կիրառման օբյեկտ են ոչ միայն իրավունքի նորմերը, այլ նաև իրավունքն իր էությանմբ, որովհետև նորմն իր բնույթով կարող է նաև շեղվել իրավունքից, չարտահայտել դրա էությունը: Մյուս կողմից՝ որոշակի դեպքերում իրավունքը կենսագործվում է մարդկանց վարքագծում կամ անհատական ակտում առանց նորմի առկայության: Իրավաբանական անալոգիայի և դատական նախադեպերի կայացման պարագայում իրավունքն ուղղակի կենսագործվում (իրականացվում) է վարքագծում առանց նորմի: Հետևաբար, ինչպես իրավունքի իրականացման, այնպես էլ իրավունքի կիրառման օբյեկտ են համարվում ի-

²⁵ Որպես այդպիսի սկզբունքներ են դիտվում օրինականությունը, սոցիալական արդարությունը, նպատակահարմարությունը, հիմնավորվածությունը (տե՛ս **Марченко М. Н.**, նշվ. աշխ., էջ 686-688):

²⁶ Վերջինի տակ նա հասկանում է մտավոր ակտ, որի արդյունքը համարվում է կոնկրետացվող նորմը (տե՛ս **Скаун О. Ф.** Теория государства и права (энциклопедический курс), էջ 631): Իրավակիրառմանը նման հատկանիշ է վերագրում նաև Վ. Ն. Պրոտասովը (տե՛ս **Протасов В. Н.** Теория государства и права. Проблемы теории права и государства. М., 2001, էջ 204):

²⁷ Տե՛ս **Шукшина Е. Г.** Понятие и реализация норм права // «Теория государства и права». Под ред. Р. А. Ромашова, էջ 311:

րավունքը և դրա էությունն արտահայտող իրավական սկզբունքները, իրավական նորմերի զանգվածը: Այդ իսկ պատճառով իրավունքի կիրառման անհրաժեշտության հիմքերի թվարկման մեջ մենք չենք հայտնաբերում այդ օբյեկտով պայմանավորված իրավունքի կիրառման անհրաժեշտության հիմնավորում: Որպես կանոն, իրավաբանական գրականության մեջ իրավունքի կիրառման անհրաժեշտությունը կապում են այն դեպքերի հետ, երբ սուբյեկտը սուբյեկտիվ իրավունքները և պարտականությունները չի կարող կենսագործել առանց պետական մարմնի, երբ իրավունքների օգտագործման համար առկա են խոչընդոտներ, երբ պարտականությունները չեն կատարվում կամավոր, երբ կատարվել է իրավախախտում, և պետք է կիրառվի պատասխանատվության միջոցը, երբ իրավունքի սուբյեկտների միջև առկա է վեճ, երբ լուծվում են պետական ծառայողների կադրային հարցերը, երբ որոշվում է կազմակերպությունների կարգավիճակը, երբ որոշակի իրավահարաբերություններ պետք է անցնեն վերահսկողություն պետական համապատասխան մարմինների կողմից²⁸:

Նույն բացթողումը կա նաև իրավակիրառման գործառույթների շրջանակի և բովանդակության տեսական մեկնաբանման հարցում: Իրավակիրառման գործառույթները ցույց են տալիս դրա նշանակությունը և կոչված են լուծելու իրավակիրառման առջև կանգնած խնդիրները: Երբեմն տեսաբաններն օգտագործում են «իրավակիրառման նպատակներ» ձևակերպումը՝ այդ նշանակությունն արտահայտելու համար: Փորձենք ի մի բերել գրականության մեջ առկա մոտեցումներն իրավակիրառման խնդիրների, գործառույթների, նպատակների շրջանակի և բովանդակության պատկերացման մասին:

Վ. Մ. Սիրիխն իրավակիրառման նշանակությունն արտահայտում է դրա նպատակներում և իրավակիրառման գլխավոր նպատակ է համարում իրավական կարգադրագրերի (որ նույնն է՝ նորմերի) ճիշտ, արդար, հիմնավորված, օրինական կիրառումը, իրավունքի գործողության ապահովումը, իրավունքի նորմերի կենսագործման ճանապարհին ծագած արգելքների վերացումը: Բացի դրանից, այս տեսաբանն իրավակիրառման տեսակներն ըստ խնդիրների համարում է իրավական նորմերի կարգադրագրերի կատարման կազմակերպումը, այսինքն՝ անհատական ակտերի միջոցով դրական կարգավորումը, ինչպես նաև իրավախախտումներից պաշտպանությունը²⁹: Մեկ այլ աշխատության մեջ նա նշում է, որ իրավակիրառման նպատակներն իրավական կարգավորման կառուցակարգում հենց դրա սոցիալական

²⁸ Իրավունքի կիրառման դեպքերի կամ անհրաժեշտության մասին տե՛ս **Ա. Վաղարշյան**, նշվ. աշխ., էջ 280-281, «Проблемы теории государства и права». Под ред. В. М. Сырых. М., 2008, էջ 311, **Скакун О. Ф.**, նշվ. աշխ., էջ 632, **Мухаев Р. Т.**, նշվ. աշխ., էջ 390-391, **Черданцев А. Ф.**, նշվ. աշխ., էջ 247-248 և այլն:

²⁹ Տե՛ս «Проблемы теории государства и права». Под ред. В. М. Сырых, էջ 314-316:

արժեքներն են, իսկ ընդհանուր նպատակները որոշակիացվում, կոնկրետացվում են իրավակիրառման մասնավոր նպատակներում ու գործառույթներում³⁰: Ս. Ա. Կոմարովը որպես իրավակիրառման իրավական գործառույթներ նշում է իրավաապահովող գործառույթը³¹, իրավակոնկրետացնող գործառույթը (կազուալ կարգավորման գործառույթը)³²: Իրավակիրառման գործառույթներն իրավակիրառման ակտերի փաստական գործողության ուղղություններն են³³: Ընդ որում, իրավունքի կիրառման գործառույթները չպետք է հակասեն իրավունքի գործառույթներին: Ինչպես իրավունքի համակարգին, իրավակիրառմանը ևս բնորոշ են սոցիալական և իրավաբանական գործառույթներ: Իրավաբանական գործառույթները լինում են կարգավորող և պահպանող, որոնց համատեքստում ամրապնդվում են գերիշխող հասարակական հարաբերությունները, դրանք կարգավորվում են, ձեռք են բերում կարգ ու կանոնի որակ, խթանվում է նոր հարաբերությունների զարգացումը, ինչպես նաև հասարակական հարաբերությունները պահպանվում են ուսնձգություններից: Իրավունքի կիրառման իրավաբանական գործառույթները ձեռք են բերում յուրահատուկ տեսք և համարվում են իրավաապահովող կամ էլ կատարում են անհատական (կազուալ) իրավական կարգավորման գործառույթ³⁴: Իրավունքի կիրառումն իրավաապահովող բնույթ ունի, որովհետև այն իրավունքի կենսագործման, փաստական վարքագծի կազմակերպման եղանակ է: Իրավունքի կիրառման կազուալ կարգավորիչ գործառույթի իրականացմամբ իրավունքի կենսագործումն ապահովում է իրավունքի նորմերի հստակեցումը՝ որոշակի հանգամանքների հաշվառմամբ, կոնկրետացնում է իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները: Օրինակ դատարանի դատավճռով պատասխանատվությունը իրավունքի նորմի շրջանակում կոնկրետացվում է: Այսպիսով, իրավական կարգավորումը ընդհանուր նորմի հիման վրա տարբերակվում է ըստ կոնկրետ հանգամանքների:

Ինչպես տեսնում ենք, տեսաբանները, իրավակիրառման հասարակական նշանակությունն արտացոլելով «իրավակիրառման նպատակ», «իրավակիրառման խնդիր», «իրավակիրառման գործառույթ» հասկացությունների միջոցով, դրանք մեկնաբանում են գուտ և միայն դրական իրավունքի գործողության ու կենսագործման դիրքերից, այսինքն՝ դրականության (պոզիտիվության), նորմատիվականության դիրքերից: Նման մոտեցումը հանգեցրել է այն բանին, որ բոլոր հեղի-

³⁰ Տե՛ս «Социология права» / В. В. Глазырин, Ю. И. Грецов, В. В. Зенков. М., 2001, էջ 200-201:

³¹ Իրավաապահովող գործառույթի իրականացմամբ նախադրյալներ են ստեղծվում իրավունքի նորմերը պահպանելու, կատարելու, օգտագործելու համար:

³² Տե՛ս **Комаров С. А.**, նշվ. աշխ., էջ 307-308:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 309:

³⁴ Տե՛ս նույն տեղը:

նակները, ովքեր քննարկման առարկա են դարձրել իրավակիրառման գաղափարախոսությունը կամ սկզբունքները, մատնանշում են դրա հետևյալ դեկավար դրույթները՝ արհեստավարժությունը (պրոֆեսիոնալիզմը), օրինականությունը, հիմնավորվածությունը, նպատակահարմարությունը, արդարությունը, օբյեկտիվությունը, օպերատիվությունը, արդյունավետությունը, կատարելությունը, մարդասիրությունը³⁵: Դրանցից մեզ հետաքրքրողն օրինականության սկզբունքն է, որը, որպես կանոն, իրավակիրառման ոլորտում հասկացվում է ձևական իմաստով: Այնինչ այսօր արդեն հիմնավորված է, որ իրավունքի և իրավական կարգավորման սկզբունք պետք է համարել ոչ թե օրինականությունը, այլ իրավական օրինականությունն իր երկու բաղադրատարրերով՝ իրավաօրինականությունն և օրինականությունն³⁶:

Իրավունքի կենսագործման առաջին կառուցակարգում տեղի է ունենում իրավունքի էության (սկզբունքի, գաղափարի) նորմատիվ ամրագրում իրավական ձևերում՝ նորմատիվ ակտ, նախադեպ: Իրավաստեղծագործության՝ որպես իրավունքի կենսագործման ձևի նշանակությունն է նաև այն, որ իրավական ուժ ստացող ձևերը համապատասխանեն իրավունքին, օրինական ընթացակարգով դրական իրավունքի վերածվի միայն իրավունքը:

Իրավունքի իրականացման կառուցակարգում (իր չորս ձևերով), անշուշտ, առաջին գիծ են մղվում ձևական օրինականությունը և դրա պահպանումը: Սակայն իրավունքի իրականացման այս կառուցակարգում հատկապես իրավակիրառման դեպքում կարևոր է իրավունքի էության կենսագործման խնդիրը: Չէ՞ որ հենց իրավակիրառման ընթացքում են հայտնաբերվում իրավական կարգավորման բացերը, կայացվում են նախադեպերը, պարզվում է իրավունքի պաշտոնական ձևերի ոչ իրավական լինելը, այսինքն՝ շեղումն իրավունքից, մարդու իրավունքներից, Սահմանադրությունից: Հետևաբար, ոչ միայն իրավունքը ստեղծելիս, այլև դրական իրավունքը կենսագործելիս պարտադիր է դրանց համապատասխանությունն իրավունքին, դրա էությանը: Այսպիսով, իրավական օրինականության սկզբունքը, լինելով իրավունքի և իրավական կարգավորման սկզբունք, գործում է ինչպես իրավաստեղծագործության, այնպես էլ իրավունքի կենսագործման կառուցակարգում: Հետևաբար, իրավունքի կիրառման անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել իրավունքի բացով, իրավաբանական նախադեպերի գոյությամբ ու գործողությամբ, արդեն առկա դրական իրավական նորմերի հակաիրավականությամբ: Նշանակում է, որ իրավա-

³⁵ Տե՛ս «Проблемы теории государства и права». Под ред. В.М. Сырых. М., 2008, էջ 316-318, **Ս. Վաղարշյան**, նշվ. աշխ., էջ 288-291, **Скакун О. Ф.**, նշվ. աշխ., էջ 633-635, **Комаров С. А.**, նշվ. աշխ., էջ 308 և այլն:

³⁶ Տե՛ս **Ս. Ս. Քոչարյան**, Իրավաբանական իրավահասկացողությունը և օրինականության հիմնախնդիրները, Եր., 2008:

կիրառման ընթացքում կարծես թե անցկացվում է իրավական կարգավորման մոդելի փորձաքննություն³⁷: Այդ փորձաքննությունը ենթադրում է ոչ միայն պոզիտիվ իրավական նորմի ընտրություն և իրավական որակում, այլ նաև նորմի արժեքաբանական, գնահատողական փորձաքննություն իրավականության չափանիշով, իրավունքի էությանը (սկզբունքին, գաղափարին) համապատասխանության տեսանկյունից, որից բխելու են իրավական հետևանքներ: Այդ արժեքաբանական գործընթացը ենթադրում է իրավունքի ձևում ամրագրված նորմի և իրավունքի էության ու սկզբունքի համադրում և համեմատություն: Հետևաբար, **իրավունքի կիրառման հատկանիշ է այն, որ դրա ընթացքում շարունակվում է նորմատիվ կարգավորման գործընթացը**, որը սկսվել էր նախորդող իրավաստեղծագործության կառուցակարգում, սակայն կարիք ունի լրացման (անալոգիայի միջոցով, նախադեպի կայացման միջոցով) կամ էլ կատարելագործման՝ դատական բողոքարկման միջոցով:

Իրավունքի կիրառման գործընթացն առաջ է բերում նոր իրադրություններ, որոնց համապատասխան տեղի է ունենում նորմատիվ մոդելի ճշգրտում, կատարելագործում, լրացում: Ուստի իրավակիրառումն իրավասպահովող նշանակություն ունի ոչ միայն իրավունքի իրականացման անմիջական ձևերի համար (Ս. Ա. Կոմարով), այլ նաև իրավաստեղծագործության ձևով իրավունքի կենսագործման կառուցակարգի համար: Իրավունքի կիրառման օբյեկտ է ոչ միայն նորմը, այլև իրավունքը, իսկ իրավակիրառման գործառույթներից է նաև իրավունքի նորմերն իրավականության դիրքերից արժեքաբանական վերլուծության ենթարկելը: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ **իրավունքի կիրառման գաղափարախոսության մաս կամ դրա սկզբունքներից է իրավական օրինականությունը**: Հետևաբար, իրավունքի կիրառումը կենտրոնական տեղ է գրավում իրավունքի կենսագործման կառուցակարգում: «Իրավունքի գոյության ընդհանուր ցիկլում՝ գաղափարի ծնունդից և իրավական առարկայի որոշումից մինչև ակտի ընդունումը և դրա իրականացումը, իրավակիրառումը պետք է զբաղեցնի առաջատար տեղ: Դրանում արտահայտվում են հայեցակարգերի և նորմերի իրականացման արդյունքները և միաժամանակ հետադարձ կապը հասարակությունից դեպի իրավաստեղծները: Ստուգվում են մոդելը, նորմը և պատրաստվում են նոր իրավական որոշումներ»³⁸:

Այսպիսով, իրավունքի կիրառման հատկանիշների, անհրաժեշտության, գործառույթների հիմնահարցերի տեսական վերլուծությունն

³⁷ Այդ փորձաքննությունը կարելի է հասկանալ որպես իրավունքի կիրառման երկրորդ փուլի՝ նորմի ընտրության և իրավական որակման գործընթաց, այսինքն՝ այն, ինչ անում է իրավակիրառող սուբյեկտն ամեն անգամ: Իրավական փորձաքննությունը նման կերպ է հասկանում, օրինակ՝ Ս. Մ. Ռասսոլովը (տե՛ս **Рассолов М. М.** Актуальные проблемы теории государства и права // "Закон и право". М., 2011, էջ 274):

³⁸ **Тихомиров Ю. А.** Современное публичное право. М., 2008, с. 304.

իրավունքի կենսագործման հայեցակարգի և իրավունքի գերակայության սկզբունքի դիրքերից հիմք է տալիս հանգելու հետևյալ եզրակացությանը. իրավունքի իրականացման կառուցակարգում (իր չորս ձևերով) և հատկապես իրավակիրառման դեպքում կարևոր է իրավունքի էության կենսագործման խնդիրը: Հենց իրավակիրառման ընթացքում են հայտնաբերվում իրավական կարգավորման բացերը, կայացվում են նախադեպերը, պարզվում է իրավունքի պաշտոնական ձևերի ոչ իրավականությունը, այսինքն՝ շեղումներն իրավունքից, մարդու իրավունքներից, Սահմանադրությունից: Հետևաբար, իրավունքի կիրառման անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել նորմատիվ (օրենսդրական) կարգավորման բացով, արդեն առկա դրական իրավական նորմերի հակաիրավականությամբ: Իրավակիրառման ընթացքում անցկացվում է իրավական կարգավորման նորմատիվ մոդելի փորձաքննություն, որը ենթադրում է ոչ միայն պոզիտիվ իրավական նորմի ընտրություն և իրավական որակում, այլ նաև նորմի արժեքաբանական, գնահատողական փորձաքննություն իրավականության չափանիշով, իրավունքի էությանը, սկզբունքին, գաղափարին համապատասխանության տեսանկյունից: Այդ արժեքաբանական գործընթացը ենթադրում է իրավունքի ձևում ամրագրված նորմի և իրավունքի էության, սկզբունքի համադրում և համեմատություն: Հետևաբար, **իրավունքի կիրառման հատկանիշ է այն, որ դրա ընթացքում շարունակվում է նորմատիվ կարգավորման գործընթացը, որը սկսվել էր նախորդող՝ իրավաստեղծագործության կառուցակարգում, սակայն կարիք ունի լրացման (անալոգիայի միջոցով, նախադեպի կայացման միջոցով) կամ էլ կատարելագործման՝ դատական բողոքարկման միջոցով:** Իրավունքի կիրառման գործընթացը, դրա վերաբերյալ տեղեկություն առաջ է բերում նոր իրադրություններ, որոնց համապատասխան տեղի է ունենում նորմատիվ մոդելի ճշգրտում, կատարելագործում, լրացում: Ուստի իրավակիրառումն իրավասպահովող նշանակություն ունի ոչ միայն իրավունքի իրականացման անմիջական ձևերի, այլ նաև իրավաստեղծագործության ձևով իրավունքի կենսագործման կառուցակարգի համար: Իրավունքի կիրառման օբյեկտ է ոչ միայն նորմը, այլ նաև իրավունքը, իսկ իրավակիրառման գործառույթներից է նաև իրավունքի նորմերն իրավականության դիրքերից արժեքաբանական վերլուծության ենթարկելը: Հետևաբար, իրավունքի կիրառման սկզբունք է ոչ թե ձևական օրինականությունը, այլ իրավական օրինականությունը:

Ամփոփելով կարող ենք ձևակերպել իրավունքի կիրառման հետևյալ բնորոշումը. իրավունքի կիրառումը իրավասու հանրային մարմինների (պաշտոնատար անձանց) օրենքով սահմանված խստագույն կարգով իրականացվող իշխանական, փուլային գործունեությունն է՝ ուղղված կոնկրետ կենսական դեպքերի ու որոշակի անձանց նկատմամբ անհատական որոշման կայացմանը՝ հիմք ընդունելով իրավա-

բանական փաստերը և կոնկրետ իրավական նորմերը. ինչը կարող է ավարտվել նորմատիվ կարգավորման լրացմամբ կամ էլ կատարելագործմամբ:

Բանալի բառեր – *իրավունք, իրավունքի կենսագործում, իրավունքի կիրառում, փուլայնություն, իրավական օրինականություն, իրավաստեղծ գործառույթ*

АРТУР ВАГАРШЯН – Проблемы понятия «применение права». – В статье анализируются признаки применения права и даётся новое определение этого понятия как особой формы реализации права: применение права – это властная деятельность публичных органов (должностных лиц), осуществляемая в установленном законом процессуальном порядке и направленная на вынесение индивидуального решения в отношении конкретных случаев и определённых лиц на основе юридических фактов и норм, которая может привести к дополнению или совершенствованию нормативного регулирования.

Ключевые слова: *право, реализация права, применение права, стадийность, правовая законность, правотворческая функция*

ARTUR VAGHARSHYAN – Issues on the Concept of Application of Law.– Given article analyzes the features of the application of law on the methodological basis of the principles of the rule of law and legal legitimacy, as well as establishes the following new definition for the application of law as a special form of the exercise of law: the application of law is the domineering activity of public bodies (officials) carried out in strict procedural order established by law and aimed at making an individual decision in respect of specific cases and certain persons on the basis of legal facts and rules of law, which may lead to supplementing or improving the regulatory framework.

Key words: *law, exercise of law, application of law, stage, legal legitimacy, function of law-making*

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ավանդաբար իրավունքների իրացման և պաշտպանության երաշխիք է համարվում իրավունքների շրջանակի ընդլայնման, իրավունքների սահմանափակման հիմքերի հստակեցման, իրավունքների պաշտպանության կտրվածքով անձին իրատեսական լիազորություններ վերապահելու մեթոդաբանությունը, ինչը, մեր կարծիքով, այնքան էլ համահունչ չէ մարդու իրավունքների իրացման և պաշտպանության արդի մարտահրավերներին: Այս ոլորտում թերևս կան կարծրատիպեր, որոնց հաղթահարումը, մեր կարծիքով, հնարավորություն կտա արմատապես բարելավելու մարդու իրավունքների իրացման ողջ համակարգը: Մարդու իրավունքների անխափան իրացումը նաև պետական իշխանության համակարգի արդյունավետության երաշխիք է, քանզի ապահովում է անհրաժեշտ կանխատեսելիություն և կայունություն: Այս տեսանկյունից համամիտ ենք իրավագետ Վ. Ստեփանյանի հետևյալ դիտարկման հետ. «Բարդ համակարգերի, այդ թվում՝ պետական իշխանության համակարգի արդյունավետ կիրարկման վճռորոշ նախապայմանը դրա կայունությունն է»¹:

Օրենսդրությամբ և իրավագիտության աղբյուրներում այն միանշանակ դիրքորոշումն է ամրագրված, ըստ որի՝ մարդու իրավունքների իրացումը և պաշտպանությունը, որպես կանոն, պետք է երաշխավորված լինեն իրավունքների խախտման վերաբերյալ անձի դիմումի կամ բողոքի առկայության դեպքում հանրային իշխանության համարժեք պարտավորությամբ, ընդ որում՝ յուրաքանչյուր ոք իր իրավունքների արդյունավետ պաշտպանության համար պետք է իրավական հնարավորություն ունենա ղեկավարվելու այնպիսի հիմնարար սկզբունքներով, ինչպիսիք են՝ պատշաճ վարչարարությունը, արդարադատության մատչելիությունը, հավաստիության կանխավարկածը և այլն: Նկատենք, որ այս հարցադրումները գրեթե նույնությամբ արտացոլված են նաև ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում²:

¹ Վ. Վ. Ստեփանյան, Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրը ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր., 2017, № 1(22), էջ 3-10:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», Եր., 2014, էջ 33-39:

Այս սկզբունքները անվերապահորեն դիտվում են իբրև մարդու իրավունքների իրացման և պաշտպանության սպառիչ իրավական չափանիշներ, իսկ որպես հիմնահարց է դիտարկվում ոչ այնքան դրանց իրավաչափությունը կամ հիմնավորվածությունը, որքան դրանց շրջանակները հնարավորինս ընդլայնելը: Այսպիսով, մարդու իրավունքների իրացման և պաշտպանության ողջ համակարգի հիմքում դրված է այն մեկնակետը, ըստ որի՝ մարդու իրավունքների իրացման և պաշտպանության գործընթացը, որպես կանոն, պետք է նախաձեռնի դրա համար շահագրգռված անձը, իսկ հանրային իշխանության խնդիրն է հնարավորինս լայն իրավունքներ վերապահել այդպիսի գործընթաց նախաձեռնելու համար:

Վերը նշված ընդհանուր կանոնից կարելի է առանձնացնել որոշ բացառություն կազմող սահմանափակ թվով իրավահարաբերություններ, որոնց ծագման համար մարդու նախաձեռնությունը չի պահանջվում. դրանք հիմնականում պայմանավորված են օբյեկտիվ հանգամանքներով և իրավական որոշակիություն ապահովելու նկատառումով պետք է սահմանված լինեն օրենսդրությամբ, օրինակ՝ նիստին վարույթի մասնակցի բացակայելը օրենքի ուժով հանգեցնում է նիստը հետաձգելուն և այլն: Այսպիսով, մարդու իրավունքների իրացման կամ պաշտպանության նկատառումով իրավահարաբերությունների ծագման գրեթե անվերապահ հիմք է համարվում մարդու դիմումը կամ դրան իր իրավական նշանակությամբ հավասարեցված որևէ այլ փաստաթուղթ (հայտ, հայց, բողոք և այլն):

Համեմատական վերլուծությունը, թերևս, վկայում է, որ իրավակարգավորման բոլորովին այլ տրամաբանություն է գործում պարտականությունների, պատասխանատվության, իրավունքների սահմանափակման կամ որևէ կերպ անձի վիճակի վատթարացման դեպքում: Մասնավորապես, առնվազն ողջամիտ չի համարվի, եթե վարչական իրավախախտման փաստի ամկայության դեպքում կասկածյալի նկատմամբ վարույթ հարուցելը փոխկապակցվի վերջինիս կամահայտնության հետ: Մյուս կողմից՝ իրավաչափ չէ հանրային իշխանության մարմնի նախաձեռնությունը փոխկապակցել բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձի իրավախախտում կատարելու փաստի հետ:

Նկատենք, որ օրենսդրությամբ ամրագրված են այնպիսի ընթացակարգեր, երբ վարչական զանցանքի փաստը միանգամայն հիմնավորված է համարվում տեխնիկական միջոցների գործադրմամբ այն արձանագրելու հիմքով (օրինակ՝ տեսախցիկներով ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներն արձանագրելը), ինչը բավարար է համարվում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Ընդ որում՝ այսպիսի դեպքերում անգամ իրավաչափ է ընկալվում անձին արձանագրված իրավախախտման և այդ առնչությամբ վարույթ իրականացնելու մասին չիրազեկելը. իրավախախտ անձը

սահմանված ժամկետում պարզապես ստանում է ծանուցագիր իր նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին: Ավելին, այդպիսի դեպքերում անգամ ավելորդ է համարվում պարզել, թե կոնկրետ ով է եղել ճանապարհային երթուղիների կանոնները խախտող անձը, քանի որ օրենքի ուժով պատասխանատվության սուբյեկտ է ճանաչվում տրանսպորտային միջոցի սեփականատերը, և միայն վերջինս է պարտավոր ապացուցելու, որ իրավախախտումը կատարվել է այլ անձի կողմից: Այն, որ այսպիսի իրավակարգավորումը խնդրահարույց է սահմանադրականության տեսանկյունից, խնդրի մի կողմն է, սակայն սույն հետազոտության թեմայի շրջանակներում մենք առավել կարևորում ենք այն հարցադրումը, թե ինչ հիմնավորումներով է թելադրված այսպիսի ինքնատիպ ու նախադեպը չունեցող դիրքորոշումը և ընդհանրապես՝ ինչու է մարդու իրավունքների իրացման և պաշտպանության գործընթացում նկատվում մարդուն լրացուցիչ, իր կարգավիճակին ոչ բնորոշ պարտականություններով ծանրաբեռնելու միտումը:

Բացի գուտ իրավական չափանիշներից (Սահմանադրության ու միջազգային պայմանագրերի դրույթներ, Սահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներ և այլն), որպես կանոն, վարչարարության իրավակարգավորումների տրամաբանությունը թելադրված է լինում մի շարք գործնական բնույթի ազդակներով, որոնցից կարելի է առանձնացնել գերատեսչական շահը: Գերատեսչական շահն ինքնին բացասական երևույթ չէ, եթե հետապնդում է իրավունքի հիմնարար սկզբունքներին համահունչ գործելաճ և զուգահեռ երաշխավորում է արդյունավետ, խնայողական վարչարարություն: Մյուս կողմից՝ գերատեսչական շահերի նեղ ընկալումը, այն մյուս իրավաչափ շահերից անհարկի գերադասելը հանգեցնում են ինչպես իրավակարգավորման, այնպես էլ իրավակիրառ գործունեության խոցելիությանը. գերատեսչությունները ձգտում են ձևավորել այնպիսի համակարգ, որպիսին վերջիններիս համար վերապահում է «ազդեցիկ» կարգավիճակ՝ հնարավորինս զերծ պահելով դրան համարժեք պատասխանատվությունից: Սրա հետևանքով ունենում ենք այնպիսի իրավիճակ, երբ գերատեսչությունները անվարան ձգտում են նորանոր լիազորությունների, սակայն գործնականում ոչ միայն ի գործու չեն լինում դրանք սահմանված ընթացակարգերով ու իրավաչափ ակնկալիքով իրացնել, այլև անգամ չեն կրում նվազագույն պատասխանատվություն:

Ինչ խոսք, մարդու իրավունքների իրացման և պաշտպանության հիմնահարցերը ևս բացառություն չեն և սերտորեն առնչվում են գերատեսչական շահի ոչ համարժեք ընկալման խնդրի հետ: Ընդ որում՝ այս դեպքում վարչական մարմիններն առավել ևս հակված են իրենց համար հնարավորինս շահեկան կարգավիճակ ապահովելուն, քանզի նրանց գործունեության մի ստվար հատված անմիջականորեն առնչվում է մարդկանց իրավունքների իրացման ու պաշտպանության հետ: Դրանից գատ,

այդ ոլորտը ենթադրում է իրավասու մարմինների ակնհայտ մեծ ծանրաբեռնվածություն և օրենսդրությամբ ամրագրված որոշակի պատասխանատվություն, այդ թվում՝ նյութական և կարգապահական բնույթի:

Մեր դիտարկումները բերում են այն համոզման, որ ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության որոշ շեղումներ ուղղակիորեն պայմանավորված են վարչական մարմինների կողմից գերատեսչական շահի ոչ իրավաչափ ընկալմամբ, երբ վերջիններս ձգտում են առաջադրել այնպիսի համակարգ, որը հանգեցնում է անհրաժեշտ ծանրաբեռնվածությունից խուսափելուն, որի դեպքում հնարավորինս նվազում է նրանց պատասխանատվությունը և այլն:

Միաժամանակ, հետազոտության արդյունքները վկայում են, որ մարդու իրավունքների իրացման և պաշտպանության ոլորտում վարչական մարմինների որոշ պատկերացումներ և ակնկալիքներ նաև չեն բխում իրենց իսկ կողմից հետևողականորեն հետապնդվող նեղ գերատեսչական շահի տրամաբանությունից, ինչն արդեն վկայում է սուկ կարծրատիպերի ազդեցության մասին: Մասնավորապես, մարդու իրավունքների իրացմանն առնչվող այն, թերևս, կարծրացած մտայնությունը, ըստ որի՝ մարդու իրավունքների իրացմանն առնչվող կոնկրետ իրավահարաբերության ծագման համար որպես իրավաբանական փաստ պետք է համարել բացառապես մարդու կողմից իր իրավունքի իրացման վերաբերյալ դիմում ներկայացնելը, վկայում է հենց այն իրավիճակի մասին, որ վերջինս հավասարապես բացասաբար է անդրադառնում ինչպես մարդու իրավունքների իրացման ու պաշտպանության, այնպես էլ վարչական մարմինների գործունեության արդյունավետության վրա, որոնց հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

Մեր կարծիքով, վարչարարությանն առնչվող իրավագիտության աղբյուրներում դեռևս բացակայում են մարդու իրավունքների իրացման համար վերջինիս դիմումը որպես իրավաբանական փաստ դիտելու վերաբերյալ սպառիչ դիրքորոշումները, մասնավորապես բացակայում է ստույգ պատասխանն այն հարցադրման առնչությամբ, թե իրավունքի իրացման կտրվածքով դիմում ներկայացնելու պարտականությունն ինչ չափանիշներով պետք է թելադրված լինի: Այս խիստ առանցքային հարցի վերաբերյալ իրավական որոշակիության պակասը հանգեցնում է մի այնպիսի իրավակարգավորման, երբ դիմում ներկայացնելու պահանջը իրավական ակտերում ամրագրվում ու գործում է առանց որևէ հստակ պատճառաբանության:

Խնդիրն առավել առարկայական ներկայացնելու նկատառումով անդրադառնանք մի քանի օրինակների: Այսպես, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 83 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում

սոցիալական ապահովության իրավունք»։ Այս դեպքում հարց է ծագում՝ արդյոք նույնական են սոցիալական ապահովության նշված բոլոր տեսակների պարագայում դիմում ներկայացնելու հիմքերը։ Փաստորեն, օրենսդրությամբ նախապատվությունը տրվել է այնպիսի իրավակարգավորման, երբ վերը նշված բոլոր դեպքերում սոցիալական ապահովության հետ առնչվող կոնկրետ իրավահարաբերություն կարող է ծագել բացառապես շահագրգռված անձի դիմումի հիման վրա։

Սահմանադրական հիշյալ նորմի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ եթե սոցիալական ապահովության որոշ տեսակների համար անխուսափելի է դիմում ներկայացնելը, որին հարկ կլինի կցել նաև սոցիալական ապահովության իրավունք վերապահող հիմքերը, ապա նույն մոտեցումն իրավաչափ չէ սոցիալական ապահովության իրավունքի մյուս բաղադրիչների պարագայում։ Այսպես, խնամքի կարիք ունենալը գնահատողական է, իսկ դրա առկայությունը պարզելու համար անհրաժեշտ է ինչպես դիմողի կամահայտնությունը, այնպես էլ խնամքի կարիքի փաստը հիմնավորող բավարար հիմքերի առկայությունը։ Բոլորովին այլ է իրավիճակը, օրինակ՝ մայրության կամ ծերության կենսաթոշակի, երկարատև ծառայության թոշակի պարագայում և այլն, քանի որ այս դեպքերում սպառիչ ու լիարժեք տեղեկատվությունը սահմանված կարգով գտնվում է հանրային իշխանության իրավասու մարմինների տրամադրության տակ։

Որևէ կերպ հասկանալի չէ, թե կենսաթոշակի տարիքը լրացած անձին աշխատանքից ազատելն ինքնին ինչու չի կարող բավարար իրավաբանական փաստ համարվել վերջինիս պետական կենսաթոշակ նշանակելու համար, ինչ իրավական նշանակություն ունի անձից դիմում պահանջելը, երբ խոսքը նրան սեփականության իրավունքով պատկանող միջոցները հատկացնելու մասին է։ Ի դեպ, կենսաթոշակի՝ որպես անձին սեփականության իրավունքով պատկանող միջոցի առնչությամբ Սահմանադրական դատարանը կայացրել է մի շարք որոշումներ։ Այսպես, Սահմանադրական դատարանը, իր 2014 թ. ապրիլի 2-ի թիվ ՄԴՈ-1142 որոշմամբ անդրադառնալով կուտակային կենսաթոշակի վերաբերյալ օրենսդրության դրույթների սահմանադրականության խնդրին և ելակետ ընդունելով, որ կենսաթոշակային միջոցները մարդու սեփականությունն են, արձանագրել է այն դիրքորոշումը, որ այդ ոլորտի հարաբերությունները պետք է կարգավորվեն բացառապես օրենքով. «Նկատի ունենալով, որ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության սեփականության իրավունքն օրենքով չսահմանափակվող իրավունք է, ուստի առավել ևս դրա պաշտպանության պայմաններն ու կարգը միմիայն օրենքով կարող են սահմանվել»³։

³ Գ. Դանիելյան, Ա. Գյուլումյան, Հ. Նազարյան, Վ. Այվազյան, Հ. Ենգոյան, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը (ուղեցույց-ձեռնարկ), Եր., 2016, հատոր 1, էջ 530։

Անդրադառնանք հիշյալ հարաբերությունը կարգավորող օրենսդրական նորմին: «Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կենսաթոշակը կենսաթոշակի իրավունք ունեցող անձի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի գրավոր դիմումի հիման վրա նշանակում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա՝ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի իրավունք ունեցող անձի հաշվառման հասցեի մասին տվյալների, բացառությամբ ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի: Կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացնում է անձամբ»: Այսպիսով, պետական կենսաթոշակ նշանակելու տեսանկյունից բոլոր դեպքերում անհրաժեշտ է դիմում ներկայացնել՝ անկախ կենսաթոշակի տեսակից. սա ընդհանուր կանոն է: Այսպիսի իրավական կարգավորումը պարզապես բացառում է զուտ օրենքի ուժով՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտ կայացնելը, ինչն էլ հենց կհամարվեր իրավաբանական փաստ:

Անվերապահորեն դիմում ներկայացնելու պահանջն իրավաչափ համարելու առնչությամբ բնականաբար չկան համապատասխան հիմնավորումներ ու պատճառաբանություններ, այդպիսի մոտեցումը համարվում է ինքնըստիներքյան տրամաբանական: Սոցիալական ապահովության կառավարման ոլորտի պատասխանատուներին ուղղված մեր հարցումները պարզեցին, որ պաշտոնյաները հիմնականում բերում են հետևյալ պատճառաբանությունները՝

- դիմում ներկայացնելով՝ անձը հավաստում է կենսաթոշակ ստանալու իր մտադրության մասին: Սակայն, ինչպես արդեն նկատեցինք, կենսաթոշակային միջոցներն անձի սեփականությունն են, ուստի այդ միջոցները նրան հանձնելը չպետք է պայմանավորված լինի վերջինիս կամահայտնությամբ. եթե տվյալ անձը գտնում է, որ ինքը չունի կենսաթոշակի կարիք, ապա առնվազն կարող է այն ստանալուց հետո ուղղել իր համար ընդունելի նպատակների,

- չի բացառվում, որ անձը մինչև կենսաթոշակ նշանակվելը մահացել է, մինչդեռ անձամբ դիմում ներկայացնելու հանգամանքը կանխատեսելի է դարձնում իրավահարաբերության բաղադրիչները, բացառում է չարաշահումները: Նկատենք, որ մեր առաջարկության համաձայն, աշխատանքից ազատելու մասին հրամանի հետ մեկտեղ, հարկ է նշանակել կենսաթոշակ, ուստի այս դեպքում մահվան հանգամանքը որևէ առնչություն չի կարող ունենալ խնդրի կարգավորման հետ. մարդը կարող է մահանալ դիմում ներկայացնելուց հետո: Վերջին հաշվով, քննարկվող դեպքում կենսաթոշակ ստանալու անմիջական հիմքն աշ-

խատանքից ազատելն է, իսկ եթե դրանից հետո անձը մահացել է, ապա, որպես նոր հանգամանք, դա հիմք կհանդիսանա նշանակված կենսաթոշակի տրամադրումը դադարեցնելու համար: Ընդ որում՝ խոսքն այնպիսի հանգամանքի մասին է, որի վերաբերյալ իրավասու վարչական մարմինը բավարար հնարավորություն ունի պաշտոնական տեղեկատվություն ստանալու, քանի որ մահը գրանցվում է միայն իրավասու վարչական մարմնի կողմից: Այս դեպքում արդեն արդիական է դառնում այն հարցադրումը, որ տեխնիկական արդի հագեցվածության համատեքստում վարչական մարմինները պետք է էլեկտրոնային կառավարման արդի պահանջներին համահունչ ողջամիտ համագործակցության մեջ լինեն, ոչ թե տարաբնույթ տեղեկատվություն բովանդակող փաստաթղթեր պահանջեն անձանցից: Հաճախ մատնանշվում է, որ անձի մահը երբեմն չի արձանագրվում սահմանված կարգով, քանի որ վերջինս կարող է անհայտ բացակայող լինել, սակայն չպետք է անտեսել, որ այս դեպքում արդեն կգործեն քաղաքացիական դատավարության համապատասխան ինստիտուտները, ուստի վարչական մարմինը չի կարող վարչաիրավական եղանակով մարդուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչել,

- դիմում ներկայացնելը երաշխավորում է վարչական վարույթի և վարչարարության կանխատեսելիություն և «ծառայողական կարգապահություն», քանի որ դիմումի առկայության դեպքում վարչական մարմինները պարտավորված են լինում հարուցելու կոնկրետ վարչական վարույթ: Կարգապահության խնդիրը, մեր կարծիքով, կարիք չկա կապել դիմում ներկայացնելու առնչությամբ անձի վրա պարտականություն դնելու հետ. այն հարկ է կարգավորել վարչարարության նկատմամբ իրատեսական վերահսկողություն ներդնելու եղանակով և այլն:

Վերը շարադրված և նմանաբնույթ այլ փաստարկները խոցելի են նաև այն տեսանկյունից, որ օրենսդրությամբ սոցիալական ապահովության ոլորտին առնչվող մի շարք այլ իրավահարաբերությունների ծագումը կապվում է ոչ թե դիմումի, այլ օրենքի ուժի հետ: Այսպես, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սոցիալական վճար կատարողներ են համարվում ինչպես 1974 թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, այնպես էլ մինչև 1974 թ. ծնված վարձու աշխատողները, նոտարները, անհատ ձեռնարկատերերը, սակայն երկրորդ խմբի մեջ ներառված անձինք ձեռք են բերում սոցիալական վճար կատարողի կարգավիճակ, եթե տվյալ օրենքով սահմանված կարգով դիմում են ներկայացրել: Այս իրավական նորմից առնվազն բխում է, որ երբ խոսքը միևնույն բնույթի հարաբերության մեջ անձի պարտականության մասին է, ապա դիմումի անհրաժեշտությունը բացառվում է, մինչդեռ իրավունք ձեռք բերելու դեպքում այն ընկալվում է միանգամայն իրավաչափ: Ընդ որում՝ անտեսվում է այն, որ օրենքի ուժով սոցիալական հարկ վճար

րող անձը ևս կարող է մահանալ, ինչը գործնականում դիտվում է իբրև վարչաիրավական հարաբերությունը բացառող հանգամանք և այլն:

Իրավագետներից ոմանք ևս ընդունում են, որ իրավունքի իրացման գործընթացը ենթադրում է նաև օբյեկտիվորեն բարենպաստ հետևանքների առաջացման հնարավորություն, սակայն դա հստակ չեն կապում անձի կողմից իր նախաձեռնությամբ դիմում ներկայացնելը որպես իրավաբանական փաստ չդիտարկելու հետ, այսինքն՝ այս դեպքում առկա է սուկ հիմնախնդրի մասնակի լուծման մեթոդաբանություն, ինչը այնուամենայնիվ խոսում է իրավունքների իրացման նոր միտումների հետագա զարգացման մասին: Այսպես, գերմանացի իրավագետ Միխայել Ջաքսը նկատում է. «Սուբյեկտիվ իրավունքի նախադրյալները որոշվում են այսպես կոչված «պաշտպանվելու նորմի մասին ումունքին» համապատասխան, որն առաջացել է դեռևս 20-րդ դարի սկզբին: Ըստ այդ ուսմունքի՝ հիմնական իրավունքների պարագայում անձի սուբյեկտիվ հիմնական իրավունքը, հիմնական իրավունքի իրավագործությունը առկա է այն ժամանակ, երբ հիմնական իրավունքի դրույթն այդ անձի համար օբյեկտիվորեն բարենպաստ իրավական ներգործություն է առաջացնում, իսկ այդ բարենպաստության տրամադրումը և կենսագործումը մտադրված են»⁴:

Սկզբունքորեն արդարացված չէ նաև նորմատիվ իրավական ակտերի աճի միտումը, ինչը պայմանավորված է իրավակիրառ պրակտիկայում իրավունքի և օրենքի անալոգիայի կիրառման շրջանակների անհարկի նեղացմամբ: Մի կողմից՝ օրենսդրության գուտ թվային ցուցանիշներով աճը կարող է ընկալվել իբրև հասարակական հարաբերությունների առավել ամբողջական կարգավորման երաշխիք, սակայն մյուս կողմից՝ չպետք է անտեսել, որ այդ երևույթն ինքնին խրախուսելի չէ, քանի որ անհամապատասխան ներուժի պարագայում այն անխուսափելիորեն հանգեցնում է դրանց ոչ պատշաճ կատարմանը: Նորմատիվ իրավական ակտերի շրջանակների ընդլայնման արդի անընդունելի միտումներին անդրադարձել են ոչ միայն սահմանադրագետները, այլ նաև իրավունքի տեսության մասնագետները: Այսպես, Ա. Վադարշյանի կարծիքով. «Արդի աշխարհի իրավական համակարգերին բնորոշ մյուս գիծը նորմատիվ իրավական տեքստերի անընդհատ աճող քանակն է, առավել մանրամասնեցված ու տեխնիկական կանոնների առաջ գալը: Իրավական տեքստերի նման աճն արդյունավետ չէ, որովհետև հանգեցնում է դրանց չկատարման»⁵:

⁴ **Ջաքս Միխայել**, Գերմանիայի հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքները: Սուբյեկտիվ հանրային իրավունքները վարչական իրավունքում, Եր., 2012, էջ 22:

⁵ **Ա. Վադարշյան**, «Իրավունք» հասկացության տեսամեթոդաբանական և գործնական նշանակությունը, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Եր. 2014, № 3(144), էջ 6:

Հավելենք, որ նորմատիվ իրավական ակտերի անհարկի մեծ քանակը միշտ չէ, որ հանգեցնում է իրավակարգավորումների կանխատեսելի հասակեցումների, քանզի դրանք հաճախ ուղեկցվում են իրարամերժ իրավական նորմերով, պարբերաբար կատարվող փոփոխություններով, ինչը թույլ չի տալիս մարդկանց լիարժեք պատկերացում կազմել իրենց իրավունքների ու ազատությունների իրացման օրենսդրական հիմքերի մասին: Իրավագետներից ոմանք գտնում են, որ նշված երևույթը խաթարում է նաև քաղաքական անհրաժեշտ կայունությունն ապահովելու հնարավորությունը⁶:

Այժմ անդրադառնանք իրավունքների պաշտպանության տեսանկյունից անձին վերապահվող իրավունքների և պարտականությունների իրավակարգավորմանը: «Վարչարարության հիմունքների և վարչարարության մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածի համաձայն՝ վարչական ակտի դեմ բողոք ներկայացնելիս անձը պարտավոր չէ ներկայացնել իր բողոքի հիմքում դրված պահանջների հիմնավորումները: Վարչական մարմինն ի պաշտոնե պարտավոր է համալիր քննարկել վիճարկվող վարչական ակտը և, ըստ արդյունքների, կայացնել համարժեք որոշում: Այսպիսով, օրենսդրությամբ միանգամայն ողջամիտ լուծում է տրվել, քանի որ անձն ազատվել է վարչական ակտի ոչ իրավաչափությունն ապացուցելու պարտականությունից: Վարչական դատավարության ձևավորման սկզբնական փուլում վերը նշված մոտեցումը ևս հիմնավորված էր դիտվում, ինչն արտացոլվեց 2007 թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6 հոդվածում. մասնավորապես, ըստ այդ հոդվածի, գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»), ընդ որում, դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ, մասնավորապես՝ պահանջել վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարել կողմերին անձամբ ներկայանալու դատական նիստի: Նույն օրենսգրքի 25 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները»: Տվյալ դեպքում բողոքարկող անձը ապացույց բերելու պարտականություն ունի միայն այն դեպքում, երբ այն գտնվում է իր ազդեցության կամ տիրապետման ոլորտում, ինչը բնական ու իրավաչափ է:

⁶ Ст'я С **Синкявичюс В.** Могут ли поправки к Конституции противоречить самой Конституции? // "Конституционное правосудие". Вестник Конференции органов конституционного контроля стран новой демократии. Ер., 2014, 2(64), էջ 89:

Վարչական դատավարության օրենսդրության կայացման սկզբնական փուլում այսպիսի իրավական կարգավորումը, ըստ էության, համահունչ էր վարչական ակտը բողոքարկելիս անձին անհիմն պարտականություններով չճանրաբեռնելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ մոտեցումներին, սակայն հետագայում այս դիրքորոշումն իր տեղը զիջեց միանգամայն նոր իրավակարգավորումների, ըստ որոնց անձի վրա արդեն դրվեց ապացուցման որոշակի բեռ: Այսպես, արդեն 2013 թ. դեկտեմբերի 12-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29 հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Ապացուցման բեռը կրում է՝

1) վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով.

2) պարտավորեցման հայցով՝ վարչական մարմինը՝ հայցվող վարչական ակտի ընդունումը մերժելու հիմք հանդիսացած փաստերի մասով, և ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ այն փաստերի մասով, որոնցով հիմնավորվում է իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունումը.

3) գործողության կատարման հայցով՝ վարչական մարմինը՝ հայցվող գործողության կատարումը մերժելու կամ անգործություն ցուցաբերելու համար հիմք հանդիսացած փաստերի մասով, և ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ իր համար բարենպաստ փաստերի մասով.

4) ճանաչման հայցով՝

ա. ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստերի մասով,

բ. վարչական մարմինը՝ վարչական ակտի առ ոչինչ լինելը հերքող փաստերի մասով,

գ. վարչական մարմինը՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի, ինչպես նաև որևէ կատարված գործողության կամ թույլ տրված անգործության իրավաչափությունը հիմնավորող փաստերի մասով»:

Ակնհայտ է, որ օրենսդրական փոփոխությունների հետևանքով անձը հայտնվել է լիարժեք մրցակցային սկզբունքով գործող դատավարության շրջանակներում, ինչը եթե տրամաբանական է քաղաքացիական դատավարության դեպքում, երբ կողմերը փաստացի իրավահավասար կարգավիճակում են, բացարձակապես հիմնավորված չէ վարչական դատավարության պարագայում, երբ անձը զրկված է այն իրական լծակներից (տեղեկատվություն, արհեստավարժ անձնակազմ, այլ վարչական մարմիններից աջակցություն ստանալու իրական հնարավորություն և այլն), որոնք բնորոշ են վարչական մարմնին:

Այս տեսանկյունից հայրենական օրենսդրությունը միայն հատվածաբար է համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին, թեպետ իրավունքների իրացման ու պաշտպանության կտրվածքով անձանց համար անհարկի պարտականություններ սահմանելու ոչ իրավաչափ միտումը բնորոշ է նաև միջազգային փորձին: Ինչևէ, նկատենք, որ առնվազն կարևոր նորույթ էր Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական կարգավիճակի վերանայումը, որով վերջինս լիազորություն ձեռք բերեց փոխհարաբերվելու ոչ միայն հանրային իշխանության մարմինների, այլև մասնավոր կազմակերպությունների հետ: Այսպես, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 191 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների (ընդգծումը մերն է – Գ. Դ.) կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը»:

Այս նորամուծությունը ցույց է տալիս, որ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում նախապատվությունն աստիճանաբար տրվում է այն մոտեցմանը, ըստ որի՝ «թիրախում» են հայտնվում ոչ միայն հանրային իշխանության մարմինները, այլև մասնավոր կազմակերպությունները, օրինակ՝ կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունները, որոնց հետ փոխհարաբերություններում, ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, անձինք առավել հաճախ են հանդես գալիս իրենց խախտված իրավունքների պաշտպանության հարցով: Մյուս կողմից՝ հիշյալ նորամուծությունն ընդգծում է այն, որ իրավունքների պաշտպանության նախաձեռնությունը առավել խելամիտ է վերապահել հենց հանրային իշխանության մարմիններին: Մասնավորապես՝ սահմանադրական այս դրույթի իրացման շրջանակներում 2016 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում նախատեսվել են դրույթներ, որոնք պարտավորեցնում են Մարդու իրավունքների պաշտպանին օրենքով սահմանված միջոցներ ձեռնարկել ոչ միայն անձի բողոքի, այլև դրա բացակայության դեպքում: Ընդ որում, ի տարբերություն նախկին օրենսդրության, այս դեպքում իր նախաձեռնությամբ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ քննարկումներ իրականացնելիս Մարդու իրավունքների պաշտպանը կաշկանդված չէ սոսկ խախտման աստիճանով կամ բնույթով⁷:

⁷ Ըստ 2003 թ. հոկտեմբերի 21-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 4-րդ մասի՝ «Պաշտպանն իրավասու է սեփական նա-

Ինչևէ, հանգամանորեն չանդրադառնալով օրենսդրությամբ ամրագրված բոլոր հնարավոր դրսևորումներին, առանձնացնենք մեր կարծիքով անընդունելի այն չափանիշները, որոնք ներկայումս դրված են իրավունքների իրացման և պաշտպանության իրավակարգավորման հիմքում՝

- բոլոր այն դեպքերում, երբ խոսքը անձի պարտականությունների և պատասխանատվության մասին է, վերջինից դիմում չի ակնկալվում. իրավահարաբերությունը ծագում է համապատասխան վարչական ակտի հիման վրա՝ օրենքի ուժով: Ընդ որում, եթե իրավախախտումն արձանագրվում է տեխնիկական միջոցներով, ապա հիմնավորված է համարվում, առանց անձի լսվելու իրավունքի իրացման, նրա նկատմամբ վարչական տույժ նշանակելը,

- իրավունքների իրացման դեպքում չի կիրառվում տարբերակված մոտեցում, ցանկացած իրավունքի իրացման հետ առնչվող իրավահարաբերության ծագման համար իրավաբանական փաստ է համարվում, որպես կանոն, անձի կողմից համապատասխան դիմում ներկայացնելը, ինչն անհարկի ծանրաբեռնում է վարչարարությունը՝ այն դարձնելով խիստ ծախսատար, ինչպես նաև բարդացնում է մարդկանց իրավունքների իրացման գործընթացը,

- իրավունքների պաշտպանության եղանակների տեսանկյունից առանցքային միտում է համարվում ոչ թե մարդկանց անհարկի պարտականություններից, այդ թվում՝ ապացուցման բեռից ազատելու, այլ լրացուցիչ բեռ նախատեսելու տարբերակը, ինչը սխալմամբ մեկնաբանվում է իբրև կողմերի իրավահավասարության և դատավարության մրցակցության սկզբունքի երաշխիք,

- իրավունքների պաշտպանության ողջ կառուցակարգային և ընթացակարգային համակարգում վճռորոշ նշանակություն է տրվում ոչ թե հանրային իշխանության մարմինների ողջամիտ նախաձեռնողականությանը, այլ անձին լրացուցիչ դատավարական իրավունքներ (արդարադատության մատչելիություն, խմբային հայցեր և այլն) վերապահելուն:

Ամփոփելով մարդու իրավունքների իրացման և պաշտպանության առնչությամբ իրավակարգավորումների ու իրավակիրառ պրակտիկայի առավել բնորոշ դիրքորոշումներն ու միտումները, այդ ոլորտում առկա հիմնախնդիրները և դրանց բացասական հետևանքները՝ ստորև համակարգված ներկայացնում ենք իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության բարելավման հիմնարար ուղղությունների վերաբերյալ մեր տեսլականը՝

խաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները»:

- հարկ է վերանայել իրավունքների իրացման համար անհրաժեշտ իրավահարաբերությունների ծագման համար անձի դիմումն անվերապահորեն իրավաբանական փաստ ճանաչելու իրավական պատկերացումները: Դիմում ներկայացնելը կարող է իրավաչափ ու խելամիտ համարվել միայն այն դեպքում, երբ տվյալ իրավունքի իրացման համատեքստում առկա են այնպիսի այլընտրանքային տարբերակներ, որոնց ընտրությունը կարող է վերապահվել անձին: Օրինակ՝ միաժամանակ ծագել է մի քանի տեսակի պետական թոշակ նշանակելու իրավունք, և միայն հասցեատերն է իրավասու ընտրել դրանցից որևէ մեկը: Ինչպես նկատում է սահմանադրական իրավունքի մասնագետ Կարոլինա Գերդա-Գուցմանը, պասիվ ընտրական իրավունքին մասնակցելու համար բավարար չէ միայն կուսակցության առաջադրումը, ողջամտորեն անհրաժեշտ է նաև թեկնածուի համաձայնությունը հավաստող դիմումը⁸:

Դիմում ներկայացնելու հաջորդ իրավաչափ հիմքն այն է, երբ ընդհանրապես իրավունքի իրացումը ամբողջովին գտնվում է անձի բացարձակ հայեցողության տիրույթում: Օրինակ՝ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքից անձը կարող է օգտվել բացառապես իր հայեցողությամբ, ընդ որում՝ ընտրելով կոնկրետ մասնագիտությունը:

Վերջապես, դիմում ներկայացնելու իրավաչափ հիմք կարող է համարվել այն, երբ անձը ակնկալում է, որպեսզի այս կամ այն ոլորտում իր կամահայտնության հիման վրա դադարեցվի իրավունքի իրացումը, օրինակ՝ անձը իր դիմումի համաձայն կամենում է դադարեցնել հանրային ծառայության իր կարգավիճակը և այլն,

- իրավունքների իրացման համակարգը կարող է էապես բարելավվել, եթե արմատապես վերանայվի վարչական մարմինների փոխօգնության ինստիտուտը, երբ մարդիկ ազատվեն հանրային իշխանության մարմինների ազդեցության տիրույթում գտնվող տարաբնույթ տեղեկատվություն բովանդակող փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունից: Ընդ որում՝ այս խնդրի լավագույն լուծումը «մեկ պատուհանի» սկզբունքը միանգամայն նոր մոտեցումներով ու չափանիշներով երաշխավորելն է: Մասնավորապես, հիշյալ սկզբունքի հետ աղերսներ չունի անհարկի տարածված այն պրակտիկան, երբ յուրաքանչյուր վարչական մարմին իր համակարգում ստեղծում է առանձին «մեկ պատուհանի» համակարգ, որի միջոցով փորձում է ծառայություն մատուցել անձանց: Հարկ է ողջ հանրապետությունում ձևավորել մեկ ինքնուրույն կառույց (դա կարող է կոչվել «Բնակչության սպասարկման հանրային կենտրոն», «Վարչական սպասարկման համակարգ» և այլն), որին անձինք հնարավորություն կունենան կենտրոնացված կարգով դիմելու վարչական վարույթի բոլոր տեսակի գործերով: Օրի-

⁸ Sté u **Carolina Cerda-Guzman**, Droit Constitutionnel et Institutions de la V^e République, Paris, Édition 2013-2014, Gualino éditieur, Lextenso éditions 2013, էջ 208:

նակ՝ նույն այդ կենտրոնին անձը կկարողանա դիմել սկսած անձնագիր ստանալու հարցից, վերջացրած սեփականության իրավունքի վկայագիր ստանալու հարցով և այլն,

- իրավունքների պաշտպանության համակարգում նպատակահարմար է մարդկանց ազատել վարչական մարմինների ակտերի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափությունը հիմնավորելու պարտականությունից, ինչը բացառապես հանրային իշխանության խնդիրն է: Անձը առավելագույնը կարող է դիմել և մատնանշել, որ խախտվում է իր այս կամ այն իրավունքը, սակայն տրամաբանական չէ նաև վերջինիս պարտավորեցնել իր իրավունքների խախտման հիմք հանդիսացող վարչական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափությունը հիմնավորելու պարտականությամբ: Բացի այդ, իրավունքների խախտումները կանխելու և իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասի հատուցման խնդրի կարևորությունից ելնելով՝ հարկ է նշել, որ այս դեպքում առավել հուսալի եղանակը հենց վարչական մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելն է: Վարչական մարմիններն իրենք պետք է ներդնեն այնպիսի համակարգ, որ խախտված իրավունքների փաստերը առանց կողմնակի ահազանգերի բացահայտվեն և ընթացք ստանան: Իրավախախտումների վերաբերյալ դիմումները կարող են ողջամիտ համարվել միայն այն դեպքում, երբ վարչարարության ընդունված կանոններով ու եղանակներով գրեթե հնարավոր չէ բացահայտել իրավունքի խախտումների փաստերը:

Ինչ խոսք, իրավունքների իրացման ու պաշտպանության ողջ համակարգը չափազանց ընդգրկուն է, ուղեկցվում է բազում հարցադրումներով, սակայն այս դեպքում մենք անդրադարձանք միայն առավել ընդհանուր, ելակետային խնդիրներին, որոնց համարժեք լուծման համար հարկ կլինի որոշակի օրենսդրական փոփոխություններ կատարել ու վերանայել իրավական մշակույթի առանձին բաղադրիչներ:

Բանալի բառեր – *սահմանադրական իրավունքների իրացում, իրավունքի պաշտպանություն, իրավական մշակույթ, իրավունքների իրացման կառուցակարգ, իրավունքների պաշտպանության վարչական եղանակ, իրավունքների պաշտպանության դատական եղանակ, վարչական վարույթ, վարչարարություն*

ГЕВОРГ ДАНИЕЛЯН – Правовая культура реализации конституционных прав. – В статье рассмотрены существующие в названной сфере проблемы, выдвинуты конкретные направления для их решения. Поддерживается мнение, что при реализации прав необходимо меньше загружать обязательствами физических или юридических лиц, а в некоторых случаях – избавиться от инициативы реализовать свои права, в частности, речь об обязанностях представлять заявления. Систематизированно представлены критерии, которые могут определить точный круг случаев реализации прав по собственной инициативе.

При отсутствии соответствующих механизмов и процедур становятся уязвимыми не только реализация и защита права, но и эффективность администрирования, так

как это приводит к ненужным финансовым затратам и бюрократической волоките.

Ключевые слова: *реализация конституционных прав, защита права, правовая культура, институционализм реализации права, административный порядок реализации права, судебный порядок реализации права, административное производство, администрирование*

GEVORG DANIELYAN – *Legal Culture for Exercising Constitutional Rights.* – Components of legal culture for exercising and defending rights, problems existing in this field and possible ways for their solution are discussed in the article presented.

The following position is endorsed by the author: in the process of exercising rights it is necessary to reduce significantly burdening of physical person or legal entity with various liabilities. In some cases it is also necessary to eliminate their liability to act as an initiator for exercising their rights, for example when dealing with the their liability to submit application. At the same time, those criteria that may predict the distinct scope of cases when the persons should act on their own initiative for exercising rights are systematically presented in the article.

According to the approaches reflected in the article in case of absence of relevant mechanisms and procedures for exercising rights not only exercise and protection of rights but also efficiency of administration become vulnerable as far as it results in great inappropriate financial expenses and bureaucratic foot-dragging.

Key words: *exercise of constitutional law, protection of right, legal culture, mechanism for exercising rights, administrative way of defending rights, protection of rights judicially, administrative proceedings, administration*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՆԱՐԴԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ, ՄՈՎՍԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների միջև պայմանագրի կնքմանը նախորդում են պայմանագրերի պայմանների շուրջ բանակցությունները, դրանց փոխհամաձայնեցումը և պայմանագրի վերջնական տեքստի ձևավորումը: Տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ ապրանքներ վաճառող, ծառայություններ մատուցող, աշխատանքներ կատարող անձինք հասկացան, որ տարբերվող բովանդակությամբ պայմանագրերի կազմումը և իրենց առևտրային շահերին այդ պայմանագրերի համապատասխանեցումը յուրաքանչյուր դեպքում մարդկային և ֆինանսական մեծ ռեսուրսներ են պահանջում: Ռեսուրսների խնայողության և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով նշված անձանց մի մասը սկսեց կազմել բոլոր հաճախորդների համար ընդհանուր և ստանդարտ բովանդակությամբ պայմանագրեր, որոնց պայմաններն ամբողջությամբ իրենք էին կազմում, և պայմանագրի մյուս կողմը, չմասնակցելով դրան, համաձայնում էր դրա բոլոր պայմաններին: Արդյունքում ձևավորվեց պայմանագրերի առանձին տեսակ, այսպես կոչված՝ **միանալու պայմանագրեր:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹ (այսուհետ՝ Օրենսգրք) 444 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ **միանալու է համարվում այն պայմանագիրը, որի պայմանները կողմերից մեկը սահմանել է բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով, իսկ մյուս կողմը դրանք կարող է ընդունել առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալով:** ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում ընդգծել է միանալու պայմանագրերի հետևյալ երկու հիմնական առանձնահատկությունները.

- նախ՝ **միանալու պայմանագրի բոլոր պայմանները պետք է սահմանված լինեն միակողմանի՝ բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով: Ընդ որում, բանաձևային կամ այլ ստանդարտ ձևեր չեն կարող համարվել միասնական նմուշի ձևով (ձևաթղթով) կազմված պայմանագրերը, որոնք հաճախ օգտագործվում են քաղաքացիական շրջանառությունում, քանի որ նշված դեպքում պայմանագրի մյուս կողմն իրա-**

¹ Ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: ՀՀՊՏ 1998.08.10/17(50) ՀՕ-239:

վունք ունի և կարող է իր անհամաձայնությունը հայտնել պայմանագրի առանձին դրույթների կամ ամբողջ պայմանագրի նկատմամբ, ինչի արդյունքում պայմանագրի պայմանները ենթակա կլինեն սահմանման ընդհանուր կանոնի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ: Մինչդեռ միանալու պայմանագրի դեպքում պայմանագրի բոլոր պայմանները սահմանելու իրավունքն անվերապահորեն տրամադրված է դրա միայն մի կողմին,

- և երկրորդ՝ մյուս կողմը պայմանագրի արդեն իսկ սահմանված պայմանները կարող է ընդունել ոչ այլ կերպ, քան առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալով, ինչը նշանակում է, որ միանալու պայմանագրի դեպքում բացառվում է կողմերի համաձայնությամբ պայմանագրի ստանդարտ ձևում նշված պայմաններից տարբերվող այլ պայմանների ձևակերպումը, իսկ միացող կողմի համար բացառված է սահմանված պայմանների նկատմամբ անհամաձայնություն հայտնելու հնարավորությունը: Վերջինս կարող է արդեն իսկ սահմանված պայմաններն ամբողջությամբ ընդունել կամ չընդունել և ըստ այդմ միանալ կամ չմիանալ պայմանագրին²:

Ե. Ա. Սուխանովը նշում է, որ միանալու պայմանագիր պետք է համարվեն այն պայմանագրերը, որոնցում միացող կողմը չունի մյուս կողմի սահմանած ստանդարտ պայմաններից որևէ մեկը փոխելու հնարավորություն, և պայմանագիրը կնքվում է ամբողջությամբ մյուս կողմի սահմանած պայմաններին միանալով: Միանալու պայմանագրերից պետք է տարբերել այն դեպքերը, երբ մի կողմը կազմում է պայմանագրի օրինակը (նախագիծը), որի պայմանները մինչև պայմանագիրը կնքելը քննարկվում են կողմերի միջև³:

«Միանալու պայմանագիր» հասկացությունն արտացոլում է դրա կնքման կարգը, մասնավորապես՝ պայմանագրի պայմանների միակողմանի՝ բանաձևային կամ այլ ստանդարտ պայմաններով սահմանված լինելը և մյուս կողմի դրանց միանալը՝ առանց պայմանների բովանդակությունը փոփոխելու⁴:

Օրենսգրքի 999 հոդվածի 1-ին մասը հնարավորություն է տալիս ապահովագրության պայմանագիրը կնքելու ապահովագրողի կողմից կազմված բանաձևային, ստանդարտ պայմաններով: Մասնավորապես՝ նշված հոդվածը սահմանում է. «Պայմանները, որոնցով կնքվում է ապահովագրության պայմանագիրը, կարող են որոշվել ապահովագրողի կամ ապահովագրողների միության ընդունած կամ հաստատած ապահովագրության համապատասխան տեսակի, դասի համար սահմանված ստանդարտ պայմաններով (ապահովագրության ընդհանուր պայ-

² Տե՛ս ՀՀ վճարելի դատարանի թիվ ԵԷԴ/0632/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015թ. որոշումը:

³ Տե՛ս «Российское гражданское право». Том 2. М., 2015, էջ 146:

⁴ Տե՛ս «Энциклопедия будущего адвоката». М., 2007, էջ 201:

մաններ): Եթե ապահովագրության պայմանագիրը կնքվել է ապահովագրողի կամ ապահովագրական միությունների կողմից հաստատված ապահովագրության պայմանագրի ընդհանուր պայմանների հիման վրա, ապա ապահովագրության պայմանագիրը պետք է հղում պարունակի այդ պայմաններին»:

Հարց է առաջանում՝ արդյո՞ք ապահովագրողի հաստատված ընդհանուր պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագիրը կարելի է համարել միանալու պայմանագիր, թե՞ ոչ:

Նշված հարցին տեսաբանների գերակշռող մասը դրական պատասխան է տալիս: Մասնավորապես՝ Մ. Ի. Բրագինսկին և Վ. Վ. Վիտրյանսկին գտնում են, որ ապահովագրողի կողմից սահմանված ստանդարտ պայմաններով կնքված լինելու դեպքում ապահովագրության պայմանագրի նկատմամբ կիրառելի են միանալու պայմանագրին վերաբերող կանոնները⁵: Ե. Ա. Սուխանովը նույնպես համարում է, որ ապահովագրողի սահմանված ստանդարտ պայմաններով կնքված ապահովագրության պայմանագիրը միանալու պայմանագրի տեսակ է⁶:

Վ. Յու. Աբրամովը, համաձայնելով նշված տեսակետին, ավելացնում է, որ այսօրվա պայմաններում ապահովագրության պայմանագիրը ապահովագրողի սահմանված ընդհանուր պայմաններով կնքելուց հրաժարվելու դեպքում ֆիզիկական անձինք, չունենալով այլընտրանք, ստիպված կլինեն ընդհանրապես հրաժարվել ապահովագրության պայմանագիր կնքելուց⁷: Ստանդարտ պայմաններով կնքված ապահովագրության պայմանագիրը միանալու պայմանագիր համարելու օգտին են արտահայտվել նաև Ա. Վ. Պոպովան⁸, Ե. Վ. Պրոտասը⁹, Յու. Ն. Անդրեևը¹⁰:

Հակառակ տեսակետ ունի Յու. Բ. Ֆոգելսոնը՝ նշելով, որ անգամ ապահովագրողի սահմանված ընդհանուր պայմանների հիման վրա կնքված լինելու դեպքում ապահովագրության պայմանագիրը չի համարվի միանալու պայմանագիր, քանի որ ապահովագրության պայմանագրի էական պայմանների մի մասը, ինչպիսին են ապահովագրության օբյեկտը, ապահովագրության գումարը, ապահովագրավճարը, միշտ սահմանվում են կողմերի փոխհամաձայնությամբ, մինչդեռ միանալու պայմանագրի սահմանումից բխում է, որ պայմանագրի պայմանները ամբողջությամբ պետք է կազմված լինեն ստանդարտ ձևով, իսկ կողմը դրան միանա ամբողջությամբ¹¹: Նմանատիպ դիրքո-

⁵ Տե՛ս **Брагинский М. И., Витрянский В. В.** Договорное право Книга третья, Статут. М., 2008, էջ 608:

⁶ Տե՛ս «Российское гражданское право», под редакцией Е. А. Суханова, էջ 844:

⁷ Տե՛ս **Абрамов В. Ю.** Комментарий к страховому законодательству, М., 2008, էջ 338:

⁸ Տե՛ս **Попова А. В.** Международное частное право. Краткий курс. СПб., 2009, էջ 139:

⁹ Տե՛ս **Протас Е. В.** Страхование. Учебник. М., 2007, էջ 139:

¹⁰ Տե՛ս **Андреев Ю. Н.** Имущественное страхование, теория и судебная практика. М., 2008, էջ 95:

¹¹ Տե՛ս **Фогельсон Ю. Б.** Страхование: Теоретические основы и практика применения. М., 2012, էջ 262:

րոշում է արտահայտվել նաև ՌԴ արբիտրաժային պրակտիկայում¹²:

Մեր կարծիքով, Յու. Բ. Ֆոգելսոնի տեսակետը արդարացված չէ, քանի որ «մաքուր» միանալու պայմանագրեր, որոնցում որևէ պայման չի սահմանվում կողմերի փոխհամաձայնությամբ, խիստ սահմանափակ են: Օրինակ՝ անգամ բանկի կողմից ստանդարտ պայմաններով կնքվող բանկային ավանդի պայմանագրերում ավանդի գումարի չափը, կողմերի հաղորդակցման կարգը, եղանակը սահմանվում են ավանդատուի կողմից: Միանալու պայմանագրերի հասկացության նեղ մեկնաբանման պարագայում միանալու պայմանագրերի համար Օրենսգրքի 444 հոդվածով սահմանված իրավակարգավորումը չի տարածվի այնպիսի պայմանագրերի վրա, որոնք թեև կնքվել են մի կողմի կազմած պայմանագրի հիմնական և որոշիչ մասը կազմող ստանդարտ պայմաններով, սակայն, ստանդարտ պայմաններից բացի, ներառում են նաև մի քանի պայման, որոնք սահմանվել են կողմերի փոխհամաձայնությամբ: Անդրադառնալով անմիջականորեն ապահովագրության պայմանագրին՝ պետք է նշել, որ գործնականում ֆիզիկական անձանց հետ կնքվող ապահովագրության պայմանագրերը կազմված են լինում ապահովագրողի ձևանմուշի հիման վրա մշակված վկայագրից և ապահովագրական ընկերության կողմից կազմված մի քանի տասնյակ էջերի հասնող ապահովագրության պայմաններից: Գտնում ենք, որ մի քանի տասնյակ էջերի հասնող ստանդարտ պայմաններից բացի՝ ապահովագրության օբյեկտի, ապահովագրավճարի չափի, վճարման կարգի, ապահովագրական գումարի և այլնի պայմանները կողմերի փոխհամաձայնեցմամբ կազմված լինելը դեռևս բավարար չպետք է լինի ապահովագրության պայմանագիրը միանալու պայմանագրերի շարքին չդասելու համար: Այդպիսի պայմանագիրը միանալու պայմանագիր համարելու հարցը լուծելիս պետք է հիմք ընդունել պայմանագրի ընդհանուր գնահատականը: Մասնավորապես, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է գնահատել կողմերի համաձայնությամբ կազմված և ստանդարտ պայմաններում չներառված պայմանների տեսակարար կշիռն ամբողջ պայմանագրի մեջ: Ապահովագրության այն պայմանագրերը, որոնցում թեև մի քանի պայմաններ սահմանվել են կողմերի փոխհամաձայնությամբ, սակայն պայմանագրերի պայմանների հիմնական մասը կազմում է ապահովագրողի կողմից միակողմանի կազմված ստանդարտ պայմանները (որոնց ձևավորմանը ապահովադիրը չի մասնակցել), պետք է համարել միանալու պայմանագրեր և կիրառել միանալու պայմանագրերի համար սահմանված իրավակարգավորումները:

Ապահովագրության պայմանագրի՝ միանալու պայմանագիր լինելու փաստը որոշելիս անհրաժեշտ է գնահատել ստանդարտ պայմանների փոփոխման հնարավորությունը: Մասնավորապես, Օրենսգրքի

¹² См. у «Постановление ФАС Северо-Кавказского округа от 28 сентября 2006 г.» № Ф08-4760/2006:

999 հողվածի 3-րդ մասը սահմանում է. «*Ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովադիրը և ապահովագրողը պետք է գրավոր (ապահովագրական պայմանագրով կամ առանձին համաձայնությամբ) պայմանավորվեն ապահովագրության ընդհանուր պայմանների առանձին դրույթներ փոփոխելու, վերացնելու կամ լրացնելու կարգի վերաբերյալ: Ընդ որում, եթե նախատեսված է ընդհանուր պայմանների միակողմանի փոփոխումն առանց ապահովադրի համաձայնության, ապա պայմանագրում պետք է ամրագրվի այդպիսի փոփոխության դեպքում ապահովագրողի կողմից ապահովադրին նախապես ծանուցելու պարտականությունը և այդպիսի փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում պայմանագիրն անմիջապես լուծելու ապահովադրի իրավունքը*»:

Մեր կարծիքով, ապահովադրին սեփական նախաձեռնությամբ ապահովագրության ընդհանուր պայմանները միակողմանիորեն փոփոխելու հնարավորություն ընձեռելու դեպքում ապահովագրության պայմանագիրը չի համարվի միանալու պայմանագիր, քանի որ չի պահպանվի միանալու պայմանագրի որոշիչ հատկանիշներից մեկը, այն է՝ ստանդարտ պայմաններին ամբողջությամբ, առանց դրա առանձին դրույթներ փոփոխելու միանալու: Այն դեպքերում, երբ նախատեսված է ընդհանուր պայմաններն ապահովագրողի կողմից միակողմանիորեն (առանց ապահովադրի համաձայնության) փոփոխելու հնարավորություն, ինչպես նաև այն դեպքերում, երբ սահմանվել է, որ պայմանների փոփոխությունը կարող է կատարվել կողմերի փոխհամաձայնությամբ՝ ապահովագրության պայմանագիրը կշարունակի պահպանել միանալու պայմանագրի հատկանիշները: Մեր կարծիքով, վերջին դեպքում պետք է հիմք ընդունել ոչ թե կողմերի համաձայնությամբ պայմանագրի պայմանները փոփոխության ենթարկելու հնարավորությունը, այլ արդեն իսկ կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի առանձին դրույթները փոփոխության ենթարկված լինելու փաստը, որի դեպքում ապահովագրության պայմանագիրը նույն հիմնավորմամբ չի համարվի միանալու պայմանագիր:

Ամփոփելով ասվածը՝ գտնում ենք, որ ապահովագրության պայմանագիրը միանալու պայմանագիր ճանաչելու համար այն պետք է բավարարի հետևյալ պահանջները

- *ապահովագրության պայմանագիրը կնքվել է ապահովագրողի կողմից կազմված ստանդարտ պայմաններով (ապահովագրության ընդհանուր պայմաններ), որոնց կազմելուն ապահովադիրը չի մասնակցել, և որոնք կողմերի համաձայնությամբ փոփոխության չեն ենթարկվել,*
- *ապահովագրության պայմանագրի հիմնական, որոշիչ մասը կազմում են ապահովագրության ընդհանուր պայմանները,*
- *ապահովագրության ստանդարտ պայմանների դրույթները ապահովագրողի կողմից միակողմանիորեն փոփոխելու, վերացնելու կամ լրացնելու հնարավորություն նախատեսված չէ:*

Միանալու պայմանագրերի համար առանձին իրավակարգավորում նախատեսելն ինքնանպատակ չէ և հետապնդում է միացող «թույլ» կողմի համար լրացուցիչ երաշխիքներ սահմանելու նպատակ: Մասնավորապես՝ Օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «*Պայմանագրին միացած կողմն իրավունք ունի պահանջել լուծելու կամ փոփոխելու պայմանագիրը, եթե միանալու պայմանագիրը թեկուզն չի հակասում օրենքին և այլ իրավական ակտերին, սակայն այդ կողմին գրկում է նման տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար կամ պարունակում է միացած կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա, ելնելով ողջամտորեն գիտակցված իր շահերից, չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցել պայմանագրի պայմանների որոշմանը*»:

Ստանդարտ պայմաններով կազմված պայմանագրին միացող «թույլ» կողմի պաշտպանության խնդրին սերտորեն առնչվում է ժամանակակից իրավագիտության մեջ լայնորեն օգտագործվող **«անարդար պայմաններ»** հասկացությունը: Մասնավորապես՝ այս հասկացության ձևավորման համար հիմք է դարձել 1993 թ. ապրիլի 5-ին ԵՄ-ի ընդունած թիվ 93/13/EEC դիրեկտիվը (unfair terms in consumer contracts): Այն վերաբերում է միայն սպառողների հետ կնքված պայմանագրերին և անարդար (unfair) է համարում այն պայմանը, որը ի վնաս սպառողի զգալի անհավասարություն է առաջացնում կողմերի իրավունքների և պարտականությունների միջև: Դիրեկտիվը սահմանում է, որ «անարդար» կարող է որակվել միայն այն պայմանը, որը պայմանագրի կնքման ժամանակ արդեն իսկ կազմված է եղել և չի համաձայնեցվել սպառողի հետ¹³: Դիրեկտիվի 3 հոդվածը նույնպես սահմանում է, որ անգամ որոշ պայմանների՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ կազմված լինելը հիմք չէ դիրեկտիվը պայմանագրի մնացած մասի նկատմամբ չկիրառելու համար, եթե պայմանագրի ընդհանուր գնահատականի հիման վրա հանգում ենք այն եզրակացության, որ դրա ծանրակշիռ մասը միակողմանիորեն կազմված ստանդարտ պայմաններն են: Դիրեկտիվի 6 հոդվածը սահմանում է, որ պետությունները պարտավոր են հետևել, որ սպառողների հետ կնքվող պայմանագրերում տեղ գտած անարդար պայմանները կիրառություն չունենան, իսկ պայմանագրերը որքան հնարավոր է շարունակեն գործել մնացած մասով¹⁴: Դիրեկտիվը ԵՄ պետություններում իմպլեմենտացնելու վերաբերյալ ԵՄ հանձնաժողովի՝ 2000 թ. զեկույցի համաձայն՝ առավել մեծ թվով «անարդար պայմաններ» նախատեսող պայմանագրերի շարքում

¹³ Տե՛ս **Кратенко М. В.** Злоупотребление свободой договора: частноправовые и публично-правовые аспекты. М., 2010, էջ 71-72:

¹⁴ Տե՛ս Council Directive 93/13/EEC of 5 April 1993 on unfair terms in consumer contracts // <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX%3A31993L0013>:

ապահովագրությունը 2000 թ. դրությամբ զբաղեցրել է 4-րդ տեղը¹⁵:

Անարդար պայմանների առնչությամբ, որպես դիրեկտիվի կիրառման գործնական օրինակ, հետաքրքրական մի գործ ներկայացնենք անգլիական դատական պրակտիկայից: Այսպես, ապահովագրության պայմանագիրը ներառում էր պայման, որը պարտավորեցնում էր ապահովադրին ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում անմիջապես տեղեկացնել ապահովագրական ընկերությանը և անհապաղ ներկայացնել պատահարին առնչվող բոլոր փաստաթղթերը: Նշված պարտականությունը չկատարելը իրավունք էր տալիս ապահովագրական ընկերությանը մերժելու ապահովագրական հայտը նույնիսկ այն պարագայում, երբ անհապաղ չտեղեկացվելու հետևանքով իրեն որևէ վնաս չէր պատճառվում: Նշված գործով անգլիական դատարանը պետք է ընտրություն կատարեր երկու իրարամերժ տեսակետների միջև. մի կողմից՝ քննարկվող պայմանը հնարավորություն էր տալիս ապահովագրական ընկերությանը մերժելու ապահովագրական հատուցման վճարումը գուտ «տեխնիկական» պատճառներով, մյուս կողմից՝ ապահովագրական պատահարի մասին ընկերությանը տեղեկացնելու պարտականություն և ապահովագրական հայտի ներկայացման համար ժամկետային սահմանափակում նախատեսելը ինքնանպատակ չէր, այլ հետապնդում էր ապահովագրական ընկերության՝ երրորդ անձանց նկատմամբ ունեցած իր սուբբոգացիայի իրավունքի իրականացումն ապահովելու նպատակ: Ուստի դատարանը որոշեց, որ ապահովագրական ընկերությունն իրավունք ունի նշված կետով մերժելու ապահովագրական հատուցումը միայն այն դեպքերում, երբ ապացուցում է, որ դրանով սահմանված պարտավորությունը չկատարելու հետևանքով իրեն վնաս է պատճառվել¹⁶:

«Անարդար պայմաններին» սերտորեն առնչվում է ապահովագրության պայմանագրի վերաբերյալ 1970 թ. Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Կետոնի ներկայացրած **«ողջամիտ ակնկալիքների» սկզբունքը (principle of objectively reasonable expectations)**: Որպես սկզբունքի ձևավորման պատճառ հեղինակը նշում էր. «ԱՄՆ-ում մարդկանց մեծ մասը առնչվում էր ապահովագրությանը: Նրանք, օգտվելով ապահովագրական ընկերության ծառայություններից և վճարելով դրա դիմաց, հիմնականում չէին ծանոթանում ապահովագրության պայմաններին՝ դրանց չափազանց մասնագիտական և շփոթեցուցիչ լինելու պատճառով: Ընդ որում՝ պայմանագրերը կնքվում էին ապահովագրական ընկերության ներկայացրած ստանդարտ պայմաններով՝ առանց

¹⁵ St' u Report of the Commission of the European Communities "On the implementation of Council Directive 93/13/EEC of 5 April 1993 on unfair terms in consumer contracts" Brussels, 27.04.2000 COM(2000) 248 final / The official web-page of the European Union: http://ec.europa.eu/consumers/consint/safe_shop/unfconterms/uct03en.pdf:

¹⁶ St' u **Chris Willet**, Fairness in consumer contracts, the case of unfair terms, Ashgate Publishing, Ltd, 2007:

ապահովադիրների հետ դրանց շուրջ բանակցելու»¹⁷: Ռոբերտ Կետոնի ներկայացրած սկզբունքի բովանդակությունը հետևյալն էր. «Ապահովադիրի (շահառուի) օբյեկտիվ և ողջամիտ ակնկալիքները ենթակա են բավարարման, եթե անգամ դրանք, ըստ ապահովագրության պայմանագրի պայմանների, ենթակա են մերժման»¹⁸:

Որպես քննարկվող սկզբունքի գործնական կիրառման օրինակ՝ ներկայացնենք ԱՄՆ Այովա նահանգի դատարանի՝ «C & J Fertilizer Inc. vs Allied Mutual Insurance Co» գործը: Այսպես, շինության սեփականատերը գողության հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցման համար դիմել էր շինությունն ապահովագրած ընկերություն: Ապահովագրության պայմանագրում «գողություն» հասկացության բնորոշումը սահմանվել էր այնպես, որ գողություն կատարելու համար շինություն մուտք գործելը պետք լիներ բնության և ուժի գործադրման միջոցով կամ որպես կատարված գողության փաստի հավաստում, շինության վրա պետք է տեսանելի լինեին մուտք գործելիս օգտագործված գործիքների, քիմիական և պայթուցիկ նյութերի հետքերը: Քննարկվող դեպքում շինության վրա արտաքինից գողության տեսանելի հետքեր չէին հայտնաբերվել, սակայն շինության ներսում դրանք առկա էին: Նշված գործով դատարանը փաստել էր, որ ապահովագրության պայմանագրում, ի տարբերություն գողության իրավական հասկացության, տրվել էր սահմանափակ մեկնաբանություն: Արդյունքում դատարանը կայացրել էր սեփականատիրոջ՝ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ ողջամիտ ակնկալիքները բավարարելու վերաբերյալ որոշում¹⁹:

Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ գտնում ենք, որ ներկայիս օրենսդրական կարգավորման պայմաններում Օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասը հենց այն օրենսդրական հիմքն է, որի միջոցով կարող ենք սահմանափակել «անարդար պայմանների» կիրառումն ապահովագրության պայմանագրերի շրջանակներում: ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրության ընթացքում ապահովագրության պայմանագրերի նկատմամբ Օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասի կիրառության դեպքեր չհայտնաբերեցինք: Հարց է առաջանում, թե ինչ չափանիշների առկայության պայմաններում կարող ենք պայմանը «անարդար» որակել և կիրառել Օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական հետևանքները: Քննարկվող նորմի բովանդակությունից բխում է, որ պայմանն «անարդար» համարելու և միացող կողմի պայմանագիրը լուծելու և փոփոխելու պահանջը բավարարելու համար այն պետք է բավարարի հետևյալ պահանջներից որևէ մեկը՝

¹⁷ Laurie Kindel Fett, The Reasonable Expectations Doctrine: An Alternative to Bending and Stretching Traditional Tools of Contract Interpretation, William Mitchell Law Review, 1992, <http://open.mitchellhamline.edu/cgi/viewcontent.cgi?article=2310&context=wmlr>, p. 1113.

¹⁸ Տե՛ս Laurie Kindel Fett, նշվ. աշխ., էջ 1123:

¹⁹ Տե՛ս David J. Seno, The Doctrine of Reasonable Expectations in Insurance law: What to expect in Wisconsin, Marquette Law Review, 2002, էջ 861:

ա) պետք է առաջացնի **զգալի անհավասարակշռություն՝ ի վնաս միացող կողմի**, մասնավորապես՝ այն պետք է շահառուին զրկի նման տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառի կամ սահմանափակի մյուս կողմի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար: Նման պայմանի օրինակ կարող է լինել այն դեպքը, երբ ապահովագրության պայմաններով սահմանվում է ոչ պայմանական չհատուցվող գումարի այնպիսի չափ, որը նույնական ապահովագրավճարի չափի և ապահովագրական ծածկույթի պայմաններում էականորեն գերազանցում է սովորաբար նման տեսակի պայմանագրերի շրջանակներում սահմանվող ոչ պայմանական չհատուցվող գումարի չափը: Ստացվում է, որ նշված պայմանը, առերևույթ չհակասելով օրենքին կամ այլ իրավական ակտերին, զրկում է ապահովադրին նման տեսակի ապահովագրության պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից,

բ) ողջամտությանը հակասող ակնհայտ ծանր պայմանների ներառումը, որը կողմը չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցելու պայմանագրի պայմանների որոշմանը: Օրինակ՝ ապահովագրության պայմանագրում կարող է սահմանվել պայման, որը պարտավորեցնի ապահովադրին (շահառուին) ապահովագրողին ներկայացնել հայցային դիմում հնարավորինս շուտ, սակայն ոչ ուշ, քան պատահարը տեղի ունենալու օրվանից երկօրյա ժամկետում, որը չկատարելը, ըստ պայմանների, ապահովագրական հատուցում չվճարելու հիմք է՝ անկախ այն հանգամանքից, թե դրա հետևանքով ապահովագրողը որևէ վնաս կրում է, թե ոչ: Նշված պայմանը նույնպես չի հակասում օրենքին կամ այլ իրավական ակտերին, սակայն կոնկրետ իրավիճակում, կախված գործի փաստական հանգամանքներից, կարող է որակվել որպես ակնհայտ ծանր պայման:

Պետք է նշել, որ նշված կարգավորումը տարածվում է ապահովագրության այն պայմանագրերի վրա, որոնք կնքվել են ոչ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակներով: Ինչ վերաբերում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով կնքված ապահովագրության պայմանագրերին, ապա Օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասով սահմանված հետևանքները կիրառելու համար վերևում թվարկված պահանջների առկայությունից բացի, անհրաժեշտ է հաստատել, որ ապահովադիրը գիտեր կամ պետք է իմանար, թե ինչ պայմաններով է կնքում պայմանագիրը:

Օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջների առկայության դեպքում, որպես հետևանք, ապահովադրին (շահառուին) հնարավորություն է տրվում ապահովագրության պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու պահանջ ներկայացնել: Պայմանագիրը փոփոխելու պահանջ ներկայացվելու դեպքում կատարված փոփոխություններն ուժի մեջ կմտնեն այդ պահից, մինչդեռ հաճախ «անարդար

պայմանների» առկայության մասին ապահովադիրը (շահառուն) տեղեկանում է, և Օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հետևվանքները կիրառելու անհրաժեշտությունն առաջանում է միայն ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո: Պայմանագրի լուծման և փոփոխման պահանջ ներկայացնելու հնարավորությամբ սահմանափակված լինելու դեպքում նշված պաշտպանության միջոցը արդյունավետ չի լինի: Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ ապահովագրության պայմանագրի շրջանակներում Օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխանող պայմանի առկայության դեպքում ապահովադիրն (շահառուին) պետք է հնարավորություն ընձեռվի «անարդար պայմանը» չկիրառելու վերաբերյալ պահանջ ներկայացնել՝ պահպանելով ապահովագրական հարաբերությունները: Նշված պահանջը ենթակա է բավարարման այն դեպքում, եթե առանց վիճարկվող պայմանի հնարավոր է պայմանագրի գործողությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

- **Օրենսգրքի 999 հոդվածի 1-ին մասը** շարադրել հետևյալ խմբագրությամբ. «*Պայմանները, որոնցով կնքվում է ապահովագրության պայմանագիրը, կարող են որոշվել ապահովագրողի կամ ապահովագրողների միության ընդունած կամ հաստատած ապահովագրության համապատասխան տեսակի, դասի համար սահմանված ստանդարտ պայմաններով (ապահովագրության ընդհանուր պայմաններ) (հոդված 444): Եթե ապահովագրության պայմանագիրը կնքվել է ապահովագրողի կամ ապահովագրական միությունների կողմից հաստատված ապահովագրության պայմանագրի ընդհանուր պայմանների հիման վրա, ապա ապահովագրության պայմանագիրը պետք է հղում պարունակի այդ պայմաններին»:*

- **Օրենսգրքի 999 հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով՝** հետևյալ բովանդակությամբ. «*Դատարանը, արբիտրաժային տրիբունալը, ֆինանսական համակարգի հաշտարարը ապահովադիր (շահառուի) պահանջով կարող են կողմերի միջև կնքված ապահովագրության պայմանագրից բխող վեճերի լուծման ժամանակ չկիրառել ապահովագրության ընդհանուր պայմաններում առկա և սույն օրենսգրքի 444 հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխանող պայման, եթե պայմանագրի գործողությունը հնարավոր է առանց նշված պայմանի»:*

Կարծում ենք, որ առաջարկվող փոփոխությունները կարող են էապես նպաստել քննարկվող ինստիտուտի արդյունավետությանը:

Բանալի բառեր - *միանալու պայմանագրեր, ստանդարտ պայմաններով կնքված ապահովագրության պայմանագրեր, անբարեխիղճ պայմաններ, պայմանագրի թույլ կողմ, ողջամիտ ակնկալիք, զգալի անհավասարակշռություն*

АРМЕН АЙКЯНЦ, МОВСЕС ХАЧАТРЯН – *Несправедливые условия в договорах страхования.* – В статье рассмотрены общие черты договоров присоединения. Со ссылкой на договоры страхования, заключенные по стандартным правилам, доказывается, что они являются договорами присоединения. Предлагается распространить регулирование, предназначенное для договоров присоединения, также на договоры страхования. Представлены критерии, которым должны соответствовать условия, чтобы считаться несправедливыми. Предложено также новое регулирование, которое позволяет страхователю (выгодоприобретателю) отказаться от применения несправедливого условия.

Ключевые слова: *стандартные условия договора страхования, договор присоединения, несправедливые условия, слабая сторона договора, разумное ожидание, значительный дисбаланс*

ARMEN HAYKYANTS, MOVSES KHACHATRYAN – *Unfair Terms in Insurance Contracts.* – The main features of adhesion contracts are discussed in the article presented. Referring to insurance contracts formulated in standard terms, it is substantiated that such contracts are also adhesion contracts. It was also proposed to apply the regulation intended for adhesion contracts to insurance contracts formulated in standard terms. The authors characterize the criteria that the conditions must meet to be considered unfair. A new regulation is also proposed, which allows the insured (beneficiary) to demand the unfair term not to be applied to him/her.

Key words: *standard terms of insurance contract, adhesion contract, unfair terms, the weak side of the contract, reasonable expectation, significant imbalance*

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

(ՀՀ աշխատանքային օրենսգրքի
գիտագործնական մեկնաբանություններ)

ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37 հոդվածի համաձայն՝ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է:

Օրենսգիրքը չի մեկնաբանում «աշխատանքային իրավունքների չարաշահում» արտահայտությունը¹, ինչի հետևանքով որոշակիորեն դժվարանում է աշխատանքային իրավահարաբերության մասնակցի գործողությունները «աշխատանքային իրավունքների չարաշահում» համարելու հարցի որոշումը, քանի որ տարբեր աշխատակիցների կողմից միևնույն արարքը կատարելը մի դեպքում կարող է համարվել (որակվել) աշխատանքային իրավունքների չարաշահում, մեկ այլ դեպքում՝ ոչ՝ դրանից բխող տարբեր հետևանքներով: Ստացվում է, որ բոլորը խոսում են դրա մասին, սակայն ոչ ոք չի ասում, թե դա ինչ է: Այս առումով առաջանում է իրավունքի չարաշահման էությունն ըմբռնելու և դրա բնորոշ գծերը վեր հանելու անհրաժեշտություն:

Նախևառաջ, կարծում ենք, պատահական չէ, որ Օրենսգիրքն աշխատանքային իրավունքների չարաշահման արգելքն անմիջականորեն կապում է օրինականության, բարեխիղճության և ողջամտության հետ: Այստեղից կարելի է բխեցնել, որ աշխատանքային իրավահարաբերություններում իրավունքի չարաշահման մասին հնարավոր է խոսել, եթե սուբյեկտը խախտում է օրենքը, դրսևորում է անբարեխիղճ մո-

¹ Ի դեպ, ՀՀ աշխատանքային օրենսգրքում «աշխատանքային իրավունքների չարաշահում» արտահայտության մեկնաբանության բացակայությունը, մեր կարծիքով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջի խախտում է: Մասնավորապես, հիշյալ օրենքի 42 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաձայնորեն հասկացություններ կամ տերմիններ: Եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները»:

տեցում կամ չի դրսևորում ողջամիտ պահվածք: Նշվածը, սակայն, չափազանց ընդհանուր պատկերացում է աշխատանքային իրավունքների չարաշահման՝ իբրև իրավական երևույթի վերաբերյալ:

Աշխատանքային իրավունքների չարաշահումը միանշանակ ընկալվող, անվիճելի հասկացություն չէ: Միանգամայն իրավացի համարելով մասնագիտական գրականության մեջ արտահայտված պնդումը, թե իրավունքների չարաշահումը տարբեր ընկալում և դրսևորումներ ունի իրավունքի յուրաքանչյուր ճյուղում², կարելի է ասել, որ այդ հասկացությունն առավելապես զգայուն է աշխատանքային հարաբերությունների ոլորտում՝ պայմանավորված դրանց մասնակիցների հակադիր շահերով: Եթե նկատի ունենանք նաև այն, որ օրենսդրորեն ամրագրված է աշխատանքային իրավունքների հինքնապաշտպանության իրավունքը՝ իբրև իրավունքների պաշտպանության հինքնուրույն եղանակ (ՀՀ աշխ. օր. 38 հոդվ., մաս 3, կետ 6), ապա միանգամայն ակնհայտ է դառնում աշխատանքային իրավունքների չարաշահումը և աշխատանքային իրավահարաբերության մասնակիցների վարքի հարակից կամ առնչվող մյուս դրսևորումները միմյանցից տարբերելու բարդությունը:

Հարկ ենք համարում նշել, որ «իրավունքի չարաշահում» արտահայտությունը ՀՀ օրենսդրության մեջ նորույթ չէ: Մինչև Օրենսգրքում նախատեսվելն այն արդեն գործածելի էր մեր օրենսդրության մեջ, իսկ ավելի ստույգ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Մասնավորապես, ՀՀ քաղ. օր. 12 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում: Օրենքի այս դրույթից կարելի է կարծել, որ բոլոր դեպքերում «իրավունքի չարաշահումն» այլ անձանց վնաս պատճառելուն միտված գործունեություն է: Միաժամանակ, մեր կարծիքով, աշխատանքային իրավահարաբերության մասնակցի արարքն իրավունքի չարաշահում համարելու հարցում այլ անձի վնաս պատճառելու նպատակի՝ իբրև պարտադիր բաղադրիչի ներդրումը կարող է շեղել արարքի ճիշտ գնահատումը: Այլ կերպ ասած՝ աշխատանքային իրավունքում «աշխատանքային իրավունքների չարաշահումը» չպետք է նույնացնել քաղաքացիական իրավունքում «շիկանայի» հետ: Միշտ չէ, որ հեշտ է լինում ապացուցել սուբյեկտի մեջ հանդիպակաց սուբյեկտին վնաս պատճառելու որոշակի նպատակի առկայությունը, հատկապես երբ արարքի հեղինակը չի խոստովանում այլ անձի վնաս պատճառելու իր ցանկությունը կամ մտադրությունը: Այս դեպքում անհրաժեշտ է կարևորել ողջամտության սկզբունքը, թե որքանով կարող էր հավանական ու խելամիտ լինել արարք կա-

² Մանրամասն տե՛ս **Маслова А. Е.** Злоупотребление правом в трудовых отношениях: научно-практический анали. Барнаул, 2016, էջ 2:

տարած սուբյեկտի մեջ տվյալ հանգամանքներում այլ անձի վնաս պատճառելու մտադրության բացակայությունը: Բոլոր դեպքերում սուբյեկտի արարքն «իրավունքի չարաշահում» համարելու ամենակարևոր չափանիշը մնում է արարքի կատարմամբ այլ անձի վնաս պատճառելու ցանկությունը (մտադրությունը) կամ առնվազն այդպիսի վնաս պատճառելու իրական հավանականության գիտակցումը:

Իրավունքի չարաշահում կարող է թույլ տալ այն սուբյեկտը, որին օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով վերապահված է տվյալ իրավունքը: Սրանից բխում է, որ Օրենսգրքի իմաստով չարաշահման սուբյեկտը պետք է լինի իրավունքի իրական (այլ ոչ թե ենթադրյալ, կարծեցյալ) կրողը:

Բացի այդ, իրավունքի չարաշահում չի կարող համարվել ազատությունը: Նկատի ունենք այն, որ իրավունքի չարաշահում գոյություն ունի միայն այն դեպքում, երբ առկա է կոնկրետ իրավունք, որն ամբողջովն է օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով: Եթե աշխատողը, օրինակ, ազատ է իր հանգստի ժամանակն իր հայեցողությամբ տնօրինելու հարցում, ապա այդ ազատությունը սահմանափակելուն կամ դրանից աշխատողին զրկելուն ուղղված ցանկացած պահանջ չկատարելը ոչ մի դեպքում չի կարող որակվել «իրավունքի չարաշահում»: Նույն կերպ, իրավունքի չարաշահում չի կարող համարվել արձակուրդից հետ կանչվող աշխատողի հրաժարվելը, քանի որ դա աշխատողի ազատությունն է (ՀՀ աշխ. օր. 166 հոդվ.), որը ենթակա չէ արգելման կամ սահմանափակման, և դրա իրացման համար աշխատողը պարտավոր չէ հայցել և ստանալ որևէ մեկի թույլտվությունը կամ համաձայնությունը:

Իրավունքի չարաշահում չեն կարող համարվել նաև բոլոր այն դեպքերը, երբ իրավահարաբերության մասնակիցն իրականացնում է բացարձակ իրավունք, որին համապատասխանում է հանդիպակած սուբյեկտի՝ այդ իրավունքի իրացումն ապահովելու կամ առնվազն դրա իրականացումը չխոչընդոտելու պարտականությունը: Օրինակ՝ ոչ մի պարագայում իրավունքի չարաշահում չի կարող համարվել արհեստակցական միության անդամ դառնալու աշխատողի իրավունքի իրականացումը:

Իրավունքի չարաշահում չի կարող համարվել նաև այն արարքը, որը կատարվել է որպես հրաման կամ կարգադրություն, ինչը չկատարելը համապատասխան սուբյեկտի համար կարող էր առաջացնել պատասխանատվություն: Մտացվում է, որ արարքն իրավունքի չարաշահում ճանաչելու համար անհրաժեշտ է, որ անձն ունենա վարքագծի ընտրության ազատություն, ինքը որոշի տվյալ արարքը կատարելու կամ չկատարելու հարցը: Եթե աշխատողը ստանում է հանձնարարական (հրաման, կարգադրություն, որոշում), որը ենթակա է պարտադիր կատարման, ապա այդ հանձնարարականի կատարմանը միտված ա-

րարքը չի կարող որակվել որպես աշխատանքային իրավունքների չարաշահում նաև այն դեպքում, երբ հետագայում դատական կամ վերադատության կարգով վերացվել է տրված հանձնարարականը, կամ այն ճանաչվել է անօրինական:

Ինչպես երևում է, չնայած իր մի շարք որոշակի հատկանիշներին, այնուամենայնիվ «իրավունքի չարաշահում» արտահայտությունն առավելապես գնահատողական բնույթ ունի: Պետք է կարևորել արարքի կատարման բոլոր հանգամանքները: Օբյեկտիվորեն նույն արարքը մի դեպքում կարող է համարվել «իրավունքի չարաշահում», մեկ այլ դեպքում՝ ոչ:

Իրավահարաբերության մասնակցի արարքն իրավունքի չարաշահում գնահատելու համար, մեր կարծիքով, պարտադիր չէ, որ բուն արարքը լինի հակաիրավական (հակասի օրենքին, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտին կամ կազմակերպության հետ կնքված կոլեկտիվ կամ անհատական աշխատանքային պայմանագրին): Արարքը կարող է չլինել կարգապահական զանցանք՝ չնայած դրանում զանցանքի առանձին բաղադրիչների առկայությանը: Այսինքն՝ արարքը կարող է ինքնին հակաօրինական չլինել, բայց որոշակի հանգամանքներում համարվել իրավունքի չարաշահում: Օրինակ՝ աշխատողների ներկայացուցիչ լինելը և այդ հիմքով աշխատանքային պարտականությունների կատարումից ազատվելն ինքնին հակաօրինական արարքներ չեն, սակայն դրա տևական ու բազմիցս կատարումը կարող է դիտվել իրավունքի չարաշահում: Աշխատանքային իրավունքների չարաշահումը սովորական զանցանքներից տարբերակելու մոտեցումը հանդիպում է նաև ռուսական իրավագիտական գրականության մեջ: Օրինակ՝ իրավագետ Ե. Մ. Օխմանը կարծում է, որ աշխատանքային իրավունքների չարաշահումն ինքնուրույն իրավական երևույթ է, և այն չպետք է նույնացնել ո՛չ կարգապահական զանցանքի, ո՛չ էլ իրավաչափ վարքագծի հետ³: Մասնագիտական գրականության մեջ այլ հեղինակներ նույնպես (օրինակ՝ Ն. Բ. Մանկինան, Ա. Տ. Մամեդովան, Ե. Վ. Սիդենկոն, Յու. Վ. Ֆոկենան, Ա.Մ. Ուստյուշենկոն, Ա. Վ. Յուդինը և այլք) կարևորել են աշխատանքային իրավունքների չարաշահումը բարեխիղճ մոլորությունից տարբերելու մոտեցումը⁴՝ իրավամբ ընդգծելով այդ հասկացության խորությունն ու չբացահայտված լինելու հանգամանքը:

Ընդհանուր պատկերացմամբ՝ «իրավունքի չարաշահում» ասելով կարելի է հասկանալ այս կամ այն իրավունքի այնպիսի իրացումը, որը ենթադրում է դրա հետևանքով այլ անձին վնասի պատճառում կամ վնասի առաջացման իրական հավանականության առկայություն կամ

³ Մանրամասն տե՛ս **Офман Е. М.** Злоупотребление правом субъектами трудовых отношений: Автореферат диссертации на соискание ученой степени канд. юрид. наук. Екатеринбург, 2006:

⁴ Տե՛ս **Маслова А. Е.**, նշվ. աշխ., էջ 14:

այդ անձի համար ոչ իրավաչափ պարտավորությունների ծագում կամ այլ անցանկալի բեռի առաջացում: Իրավունքի չարաշահում կարող է համարվել, օրինակ, այս կամ այն իրավունքից անձի հաճախակի օգտվելը այն դեպքում, երբ օրենքում բացակայում է տվյալ իրավունքի իրականացման կարգի ու պայմանների հստակ կանոնակարգումը, կամ կարգավորող նորմի բովանդակությունը տարրնկալման կամ հակասական մեկնաբանության տեղիք է տալիս: Օրինակ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 175 հոդվածի համաձայն՝ որպես աշխատողների ներկայացուցիչ դատական նիստերին մասնակցելիս աշխատողն ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից, որի ընթացքում պահպանվում է աշխատողի աշխատատեղը (պաշտոնը): Օրենքը չի սահմանում դատական նիստերին մասնակցության քանակի կամ ժամանակի սահմանափակում, ինչը նշանակում է, որ դա կարող է կրել պարբերական և տևական բնույթ ու վնասել գործատուի օրինական շահերին:

Իրավունքի չարաշահումը կարող է արտահայտվել նաև այնպիսի գործողություններով, որոնք ուղղակիորեն միտված չեն մյուս կողմին վնաս պատճառելուն, սակայն անխուսափելի են դարձնում ապագայում կողմին վնաս պատճառելը կամ նրա համար այլ անցանկալի հետևանքներ առաջացնելը: Օրինակ՝ Օրենսգրքի 167 հոդվածը սահմանում է, որ ամենամյա արձակուրդի տեղափոխումը թույլատրվում է միայն աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ: Օրենսգրքի կոնկրետ դրույթ չի նախատեսում արձակուրդի տեղափոխման մասին միջնորդությունը գործատուի կողմից մերժելու հիմքերի վերաբերյալ, ինչից հետևում է, որ այդպիսի միջնորդությունը կարող է կատարվել բազմիցս, և այն պարտադիր է գործատուի համար: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170 հոդվածի համաձայն՝ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս՝ անկախ դրա գործողության ժամկետից: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար: Փաստորեն, աշխատողի արձակուրդը ժամանակին տրամադրելու փոխարեն գործատուն ստիպված է աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելիս նրան միանվագ վճարել կուտակված արձակուրդի համար հասանելիք ամբողջ գումարը, ինչը երբեմն անհնարին է լինում ֆինանսական միջոցների անբավարարության, բյուջեում այդպիսի վճարումների համար առանձին հատկացումների բացակայության և այլ պատճառներով: Աշխատողներին հասանելիք ինչպես մյուս վճարումները, այնպես էլ նշված գումարները ժամանակին չվճարելը գործատուի համար առաջացնում են հիմնական գումարներին տոկոսներ հաշվարկելու և վճարելու պարտականություն (ՀՀ քաղ. օր. 411 հոդվ.):

Իրավունքի չարաշահում կարող է համարվել նաև իրավունքը կրողի կողմից այդ իրավունքը կամայականորեն իրականացնելը, եթե դա արտահայտվում է աշխատանքային օրենսդրության սկզբունքների խախտումներով: Օրինակ՝ Օրենսգրքի 113 հոդվածի համաձայն՝ գործատուն կարող է լուծել աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը (ինչպես ժամկետային, այնպես էլ անորոշ ժամկետով կնքված), եթե աշխատողը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել իր աշխատանքային պարտականությունները (մաս 1, կետ 5): Կարծում ենք, *իրավունքի չարաշահում կարող են համարվել նաև այն դեպքերը, երբ աշխատողների նկատմամբ կարգապահական միջոցառումներ իրականացնելիս գործատուն միանման (կամ գրեթե միանման) հանգամանքներում դրսևորում է տարբերակված կամ կամայական մոտեցում՝ խախտելով աշխատողների իրավահավասարության և օրենքի առջև հավասարության սկզբունքը* (ՀՀ աշխ. օր. 3 հոդվ.):

Աշխատանքային իրավահարաբերության մասնակիցների կողմից իրենց աշխատանքային իրավունքների չարաշահումը կարող է արտահայտվել նաև այլ գործողություններով:

Այսպես, Օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել, եթե աշխատողը չի համապատասխանում իր զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին: Նույն օրենսգրքի 120 հոդվածը սահմանում է, որ զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին աշխատողի մասնագիտական ունակությունների համապատասխանությունը *գնահատում է* գործատուն: Օրենքը չի վկայակոչում աշխատողի մասնագիտական ունակությունների գնահատման որևէ չափանիշ կամ միջոց, ինչը նշանակում է, որ գործատուն ազատ է աշխատողի համապատասխանության գնահատման չափանիշներն ու միջոցները որոշելու հարցում: Դա էլ կարող է աշխատողների աշխատանքային ունակությունները գնահատելու և նրանց հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու իր իրավունքը գործատուի կողմից չարաշահելու հիմք լինել: Նույնը կարող է տեղի ունենալ նաև աշխատողների թվաքանակի կամ հաստիքների կրճատման պատճառով աշխատողներին աշխատանքից ազատելու (ՀՀ աշխ. օր. 113 հոդվ., մաս 1, կետ 3) հարցը որոշելիս, քանի որ ՀՀ գործող աշխատանքային օրենսգիրքը չի սահմանում նշված հիմքով աշխատանքից ազատվելիս աշխատանքում մնալու՝ աշխատողների նախապատվության իրավունքը, ինչը նախատեսված էր ՀՄՄՀ 1972 թվականի աշխատանքային օրենսգրքում⁵:

⁵ ՀՄՄՀ 1972 թվականի հունիսի 16-ի աշխատանքային օրենսգրքի 37 հոդվածը սահմանում էր, որ թվաքանակի կամ հաստիքների կրճատման հիմքով աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր էր աշխատանքում մնալու նախապատվությունը տալ առավել բարձր որակավորում և աշխատանքի արտա-

Որոշակի հանգամանքներում իրավունքի չարաշահում կարող են համարվել նաև ձևական առումով օրինական համարվող գործողությունները: Հաճախ աշխատողը, հաստատապես տեղյակ լինելով իր հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ գործատուի մտադրության (օրինակ՝ գրավոր կամ բանավոր ծանուցումը, այլ աշխատողների միջոցով տեղեկացումը) մասին, չի ներկայանում աշխատանքի՝ պատճառաբանելով անաշխատունակության հետևանքով աշխատանքային պարտականությունները կատարելու իր անընդունակությունը՝ խնդրելով իր բացակայությունը համարել հարգելի: Տվյալ դեպքում, կարծում ենք, առկա է աշխատողի կողմից անաշխատունակության ընթացքում աշխատանքից ազատվելուց պաշտպանված լինելու իրավունքի չարաշահում, քանի որ Օրենսգրքի 114 հոդվածի 1-ին մասի 1-ին կետն արգելում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում:

Ողջամիտ և բարեխիղճ գործելու պահանջը, որը հավասարապես ուղղված է ինչպես վարձու աշխատողներին, այնպես էլ գործատուին (նրա իրավասու անձին), վերաբերում է ոչ միայն իրավահարաբերության մասնակիցների կողմից իրենց իրավունքների իրականացմանը, այլև նրանց համար օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը:

Իրենց գործառույթներն իրականացնելիս օրենքի պահանջներն անշեղորեն պահպանելու, ողջամտորեն և բարեխիղճորեն գործելու պահանջը վերաբերում է նաև աշխատանքային պայմանագրի կողմ չհանդիսացող սուբյեկտներին, որոնք աշխատանքային հարաբերություններին մասնակցում են այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով: Այսինքն՝ աշխատողների և գործատուների ներկայացուցիչները նույնպես իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ ու ողջամիտ:

Հայաստանի Հանրապետությունում աշխատողների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանող մարմիններն արհեստակցական միություններն են (ՀՀ աշխ. օր. 38 հոդվ., մաս 1): Արհեստակցական կազմակերպությունների իրավունքները, պարտականությունները

դրողականություն ունեցող աշխատողին, իսկ այդ պայմանի հավասարության դեպքում՝ երկու և ավելի խնամարկյալ ունեցող ընտանիքավորներին. այն անձանց, որոնց ընտանիքում ինքնուրույն վաստակով այլ աշխատողներ չկան. տվյալ ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում անընդհատ աշխատանքի տևական ստաժ ունեցող աշխատողներին. տվյալ ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում աշխատանքային հաշմանդամություն կամ պրոֆեսիոնալ հիվանդություն ստացած աշխատողներին. առանց արտադրությունից կտրվելու բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում իրենց որակավորումը բարձրացնող աշխատողներին. պատերազմի հաշմանդամներին և ԽՍՀՄ պաշտպանության ժամանակ զոհված կամ անհետ կորած զինծառայողների ու պարտիզանների ընտանիքների անդամներին:

րը և գործունեության երաշխիքները սահմանվում են օրենքով: «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքն արհեստակցական կազմակերպություններին օժտել է աշխատողների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ մի շարք կարևոր լիազորություններով, որոնց իրականացումը խոչընդոտելը պատասխանատվություն է առաջացնում դրանում մեղավոր անձանց (գործատուի ղեկավարի, նրա տեղակալ(ներ)ի, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, այլ պաշտոնատար անձանց) նկատմամբ: Ճիշտ է՝ արհեստակցական միությունները գործատուների նկատմամբ անմիջականորեն ազդելու (նրանց գործունեությունը լրիվ կամ մասնակի դադարեցնելու մասին որոշում կայացնելու, տուգանքներ նշանակելու և այլն) իրավասություն չունեն, այնուամենայնիվ արհմիությունների կողմից իրենց ունեցած լիազորությունները հետևողականորեն իրականացնելը զգալի նշանակություն կարող է ունենալ վարձու աշխատողների աշխատանքային իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում:

ՀՀ գործող օրենսդրությունն ընդարձակ լիազորություններով է օժտել նաև գործատուների իրավունքների ու շահերի պաշտպանության գործառույթներ իրականացնող հասարակական մարմիններին՝ գործատուների միություններին, որոնց գործունեությունը կարգավորվում է «Գործատուների միությունների մասին» ՀՀ օրենքով: Աշխատողների ու գործատուների ներկայացուցչական մարմիններն իրավունք չունեն կամայականորեն միջամտելու իրենց կողմից ներկայացվող սուբյեկտների ներքին գործերին, խախտելու վերջիններիս ինքնուրույնությունը կամ հանդես գալու այլ անձանց գործառույթների իրականացումը խոչընդոտող գործողություններով:

Վերը շարադրվածից տրամաբանորեն բխում է իրավունքի չարաշահման փաստի հիման վրա դրա իրավական հետևանքների պարզաբանման խնդիրը, որը ոչ պակաս կարևոր է աշխատանքային հարաբերությունների ներդաշնակ զարգացումն ապահովելու հարցում: Եթե օրենսդրությունը որևէ իրավական հետևանք չսահմանի աշխատանքային իրավունքների չարաշահման մեջ մեղավոր սուբյեկտի համար, ապա կարելի է պնդել՝ լրիվ անիմաստ է դառնում աշխատանքային իրավունքների չարաշահման արգելքի օրենսդրական ամրագրումը: Հակառակը պնդելու դեպքում ստացվում է, որ կա արգելք՝ առանց այն խախտելու հետևանքի:

Անշուշտ, իրավունքի (այդ թվում նաև՝ աշխատանքային իրավունքների) չարաշահման իրավական հետևանքների խելամիտ կանոնակարգումը բավական բարդ խնդիր է, առավել ևս, երբ, ինչպես արդեն նշել ենք, գործ ունենք երկու հակադիր շահերով օժտված սուբյեկտների միջև ծագած վիճելի հարցերի հետ: Միշտ էլ աշխատանքային իրավահարաբերության մեկ կողմը մյուսին մեղադրում է իրա-

վունքների չարաշահման մեջ, և միշտ էլ հիմնական խնդրո առարկան, ըստ էության, վիճող կողմերից մեկի գործողություններում իրավունքի չարաշահման փաստ որոնելն է, որով էլ վճռվում կամ գոնե կանխորոշվում է աշխատանքային վեճը: Թերևս այդ է պատճառը, որ, օրինակ, Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկան զարգացել է աշխատանքային իրավահարաբերության մասնակիցների մասնակցությամբ վեճերի լուծումն աշխատանքային իրավունքների չարաշահման փաստի հաստատման հետ կապելու ճանապարհով: Ընդ որում՝ խնդիրը դրված է բավականին հստակ. մերժել հայցը, եթե դատարանը հաստատված է համարում հայցվորի կողմից իր աշխատանքային իրավունքները չարաշահելու փաստը, կամ, հակառակը՝ բավարարել հայցը, եթե դատարանը հաստատված է համարում պատասխանողի կողմից իր աշխատանքային իրավունքները չարաշահելու փաստը⁶:

Անշուշտ, աշխատանքային իրավունքների չարաշահումը՝ որպես իրավական երևույթ, չպետք է մնա անհետևանք: Եթե օրենսդրորեն ամրագրված է այդպիսի գործելակերպի արգելք, ապա տրամաբանորեն և անհրաժեշտաբար պետք է լինի նաև հետևանք՝ արգելքը խախտելու համար: Այս պնդումը համահունչ է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջին, ըստ որի՝ «իրավական ակտում չպետք է նախատեսվեն նորմեր, որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն» (հոդվ. 45, մաս 3):

Բնավ էլ տուրք չտալով օտարերկրյա փորձի մեխանիկական և անհաշվենկատ փոխառության մոտեցմանը, այնուամենայնիվ կարծում ենք, որ աշխատանքային իրավունքների չարաշահման արգելքը խախտելու հետևանքներ սահմանելն անհրաժեշտ է այդ արգելքի (իրավադրույթի) իրացումը երաշխավորելու նպատակով, և մի շարք հավանական հետևանքների շարքում առավել արդյունավետ է թվում վիճելի իրավահարաբերությունների լուծումն արգելքի խախտման հետ կապելու մոտեցումը⁷:

Բանալի բառեր – *աշխատանքային օրենսգիրք, աշխատանքային իրավունքների չարաշահման արգելք, իրավունքների բարեխիղճ իրականացում, սովորական աշխատանքային իրավախախտումներ*

⁶ Մանրամասն տե՛ս «Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 17 марта 2004 г. № 2. О применении судами Российской Федерации Трудового кодекса Российской Федерации». "Российская газета" – федеральный выпуск № 3449 (0), <https://rg.ru/2004/04/08/kodeks-dok.html>՝ 31.08.2017:

⁷ Սույն աշխատանքի հիմնական բովանդակությունից չչեղվելու նկատառումով՝ մենք ձեռնպահ ենք մնում աշխատանքային իրավունքների չարաշահման արգելքը խախտելու հետևանքների վերլուծությունից, քանի որ դա առանձին քննարկման և նաև դատավարագիտության խնդիր է, որը նպատակահարմար է հնչեցնել նաև դատավարագետների կարծիքներն ու դիրքորոշումները լսելուց հետո:

ГЕВОРГ ПЕТРОСЯН – О злоупотреблении трудовыми правами (Научно-практические комментарии к Трудовому кодексу РА). – В отечественной юриспруденции отсутствуют теоретические суждения об одном из важнейших принципов трудового права – запрете злоупотреблять трудовыми правами, что делает рискованным использование этого положения закона. Фактически существует ситуация, когда закон без комментариев запрещает злоупотребление законом. Правоохранительным и правозащитным субъектам это позволяет использовать положения закона в собственных целях. В статье проясняется суть выражения «злоупотребление трудовыми правами», а также подчёркнуты те нюансы, которые позволяют отличить злоупотребление трудовыми правами от добросовестного их использования и от обычных трудовых правонарушений.

Автором изучены современные российские источники, проведён сравнительный анализ общих и специальных норм Трудового кодекса РА, а также определены границы реализации трудовых прав и злоупотребления ими.

Ключевые слова: *трудовой кодекс, запрет злоупотребления трудовыми правами, добросовестное использование прав, обычные трудовые правонарушения*

GEVORG PETROSYAN – On the Issue of Abuse of Labour Rights (Scientific-practical interpretations of Labour Code of RA). – Domestic jurisprudence doesn't provide theoretical conclusions and interpretations on one of the important principles of Labour Code of RA-the principle of *prohibition of labour rights` abuse*, which is causing considerable risk to proper application of that clause of law. In fact, there is a situation, when the law prohibits the *abuse of right* without interpreting it. This leads to entailing the clause of law into individual solutions by law implementing and law enforcement entities. The aim of this article is to clarify the essence of phrase of '*abuse of employment rights`*', the attributes of abuse of right, as well as to emphasize the peculiarities, that allow to differentiate *abuse of employment rights from exercising rights in good faith and from ordinary labour offences*.

In order to solve these problems the sources of contemporary Russian labour law literature have been scrutinized, comparative analysis has been carried out on general and special norms of Labour Code of RA and it has been attempted to emphasize the borders of exercising and abusing of employment rights using particular examples.

Key words: *Labour Code, prohibition of labour rights` abuse, abuse of right, abuse of labour rights, exercising rights in good faith, ordinary labour offences*

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ՝

ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ, ՏԱԹԵՎ ՍՈՒՋՅԱՆ

Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանող շշ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 404 հոդվածը մինչև օրս թերևս օրենսդրական առավել հաճախակի փոփոխությունների և լրացումների ենթարկված նորմերից է՝ Այս հարցում օրենսդրական զարգացումներն առավելապես կապված են վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման անմիջական և միջնորդավորված կարգի զուգակցումների և դրանց անընդհատ հերթափոխների հետ: Ընդ որում, օրենսդրական կարգավորման պարբերական փոփոխություններին նպաստել են 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, առանձին օրենսդրական կարգավորումների վերաբերյալ Մահմանադրական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները: Վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման կարգի օրենսդրական կարգավորման տեսանկյունից ժամանակագրական առումով կարելի է առանձնացնել հետևյալ մոդելները:

1) Օրենսգրքի ընդունումից հետո մինչև 2006 թվականի հուլիսի 16-ը գործող մոդելը, երբ նախատեսված էր օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու անմիջական և օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ՝ շշ գլխավոր դատախազի և նրա տեղակալների, ինչպես նաև դատավարության մյուս մասնակիցների՝ հատուկ արտոնագիր ունեցող և վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների միջոցով վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված կարգ:

2) 2006 թվականի հուլիսի 16-ից մինչև 2007 թվականի ապրիլի 7-ը գործող մոդելը, երբ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների սահմանադրական ինստիտուտի վերացմամբ պայմանավորված՝ Օրենսգրքից հանվեց փաստաբանների միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտը: Ըստ այդմ, նախատեսվեց շշ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից օրինական ուժի մեջ մտած, ինչպես նաև առաջին աստիճանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական

^{*} Հոդվածը պատրաստվել է 15-T-5E236 թեմատիկ հայտի շրջանակներում:

¹ Տե՛ս Օրենսգրքի 404 հոդվածի փոփ. 18.02.04 չՕ-34-Ն, 13.09.05 չՕ-178-Ն, լրաց. 25.05.06 չՕ-91-Ն, փոփ., խմբ., լրաց. 01.06.06 չՕ-108-Ն, խմբ., փոփ. 21.02.07 չՕ-93-Ն, խմբ. 28.11.07 չՕ-270-Ն, փոփ. 26.12.08 չՕ-237-Ն, լրաց. 10.06.14 չՕ-48-Ն:

ակտերի և վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ դատավարության մասնակիցների կողմից անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորություն:

3) 2007 թվականի ապրիլի 7-ից մինչև 2009 թվականի հունվարի 1-ը գործող մոդելը, երբ դարձյալ ներմուծվեց հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը, և նախատեսվեց առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռների, դատավճիռների ու որոշումների² դեմ բացառապես ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների, ինչպես նաև դատավարության մասնակիցների (բացառությամբ մեղադրողի) կողմից միջնորդավորված կարգով բողոք բերելու հնարավորություն: Հավատարմագրված փաստաբանների ինստիտուտը, որոշակի առանձնահատկություններով հանդերձ, ոչ այլ ինչ էր, քան դրա նախատիպը կազմող՝ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով բողոք բերելու ինստիտուտի վերականգնում, ինչպես իրավաչափորեն դիտարկել է Մահմանադրական դատարանն իր 2008 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՄԴՈ-765 որոշման մեջ: Այս որոշման մեջ վճռաբեկ բողոքարկման առարկայի՝ օրենսդրական կարգավորման փոփոխությունների զարգացումների, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի դրույթների և գործնականում քննարկվող ինստիտուտի կիրառության արդյունքների համակարգային վերլուծության համատեքստում գնահատելով հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի ազդեցությունը արդարադատության մատչելիության իրավունքի վրա՝ Մահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) հաշվի առնելով, (...) որ օրենսդրությունը վճռաբեկ դատարան դիմելիս հստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, (...) նկատի ունենալով հավատարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկատիրական բնույթով պայմանավորված՝ վճռաբեկ բողոք կազմելուց հրաժարվելու ազատությունը[՝] (...) արդարացի հավասարակշռությունը ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի և դրանով հետապնդվող նպատակի միջև, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ

² Ավելի վաղ՝ 2007 թվականի հուլիսի 7-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-152-Ն օրենքով սահմանվել էր վերաքննիչ դատարանի դատական ակտերի՝ հրապարակման պահից ուժի մեջ մտնելու կարգ, և ըստ այդմ՝ վճռաբեկության կարգով կարող էին բողոքարկվել ոչ միայն առաջին ատյանի, այլև վերաքննիչ դատարանի արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Ավելի ուշ՝ արդեն հիշատակված ՀՕ-270-Ն օրենքը վճռաբեկ բողոքարկման առարկան սահմանափակեց բացառապես վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերով՝ վերագնելով առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն անմիջականորեն վճռաբեկ դատարան բողոքարկելու հնարավորությունը:

դատարանի մատչելիության իրավունքի էությունը: (...) փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պահանջը կարող է իրավաչափ համարվել, (...) երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից»:

4) 2009 թվականի հունվարի 1-ից մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը գործող մոդելը, երբ նախատեսվեց քրեական դատավարության մասնակիցների կողմից վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ անմիջականորեն վճռաբեկ բողոք բերելու հնարավորությունը՝ բնականաբար պայմանավորված Սահմանադրական դատարանի արդեն իսկ հիշատակված որոշմամբ:

5) 2014 թվականի հուլիսի 3-ից գործող վերջին մոդելը, որը ներմուծվել է ՀՕ-48-Ն օրենքով, որում դարձյալ նախատեսվեց դատավարության մասնակիցների (բացառությամբ քրեական հետապնդման մարմինների) և դիմողի կողմից վճռաբեկ բողոք բերելու միջնորդավորված, այն է՝ փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու կարգ: Վերջինիս՝ հատուկ արտոնագիր ունեցող կամ հավատարմագրված բողոք բերելու ինստիտուտից թերևս էական տարբերիչ հատկանիշը ցանկացած փաստաբանի բողոք բերելու հնարավորությունն է: Այդուհանդերձ, այս օրենսդրական կարգավորմանն անդրադառնալով՝ Սահմանադրական դատարանն իր 2015 թվականի մարտի 15-ի թիվ ՍԴՈ-1196 որոշման մեջ գտել է, որ առկա իրավակարգավորումների պայմաններում այն սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար: Եվրոպական դատարանը ևս իր նախադեպային իրավունքում բազմիցս հաստատել է, որ վճռաբեկ ատյանի դատարանում փաստաբանի կողմից ներկայացվելու պահանջն ինքնին չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, այն հստակորեն համահունչ է իրավունքի հարցեր քննող բարձրագույն դատական ատյանի կարգավիճակին և Եվրոպայի խորհրդի մի շարք անդամ երկրների իրավական համակարգերի բնութագրիչ առանձնահատկությունն է³: Անդրադառնալով հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության շրջանակներում՝ «Թովմասյանն ընդդեմ Հայաստանի» և «Շամոյանն ընդդեմ Հայաստանի» գործերով Եվրոպական դատարանը գտել է, որ նշված ինստիտուտը ինքնին չի հակասում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին, սակայն «իրավաբանական օգնության դիմելու հնարավորության բացակայությունը, հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում գործող ընթացակարգային այն պահանջը, որի համաձայն՝

³ Տե՛ս «Gillow v. the United Kingdom», 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ, գանգատ թիվ 9063/80, կետ 69, «Vacher v. France», 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռ, գանգատ թիվ 20368/92, կետեր 24, 28, «Tabov v. Poland», 2007 թվականի մարտի 22-ի վճիռ, գանգատ թիվ 8932/05, կետ 42:

վճռաբեկ բողոքները վճռաբեկ դատարան կարող էին ներկայացվել միայն հավատարմագրված փաստաբանների միջոցով, անհամաչափորեն սահմանափակում էր դիմումատուի՝ դատարանի արդյունավետ մատչելիության իրավունքը»⁴: Այսպիսով, Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի վերոհիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից բխում է, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտն ինքնին չի հակասում դատական պաշտպանության իրավունքին, սակայն այն խնդրահարույց է անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու պատշաճ իրավական ընթացակարգերի բացակայության համատեքստում: Մյուս կողմից՝ փաստաբանի միջոցով բողոք բերելու ինստիտուտի նախատեսումը վճռաբեկ դատարան ներկայացվող բողոքների որակը բարձրացնելու իրավաչափ նպատակ է հետապնդում: Օրենքով սահմանված բովանդակային խիստ պահանջներին համապատասխանող պատշաճ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար պահանջվում են մասնագիտական խոր գիտելիքներ, Սահմանադրական դատարանի որոշումների, Եվրոպական դատարանի և վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համակողմանի իմացություն: Վերոհիշյալ հանգամանքները նվազագույնի են հասցնում մասնագիտական իրավաբանական գիտելիքներ չունեցող անձանց կողմից որակյալ բողոքներ ներկայացնելու հնարավորությունը: Նման պայմաններում պրոֆեսիոնալ իրավաբանական օգնությունը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Այսպիսով, բացառապես փաստաբանի միջոցով բողոք բերելու պայման նախատեսելը կարող է դիտվել որպես դատական ակտի վերանայման իրավունքի իրավաչափ և անհրաժեշտ սահմանափակում, եթե նախատեսվեն անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու պատշաճ իրավական ընթացակարգեր: Ավելին, անգամ պարտադիր իրավաբանական ներկայացուցչության պահանջի բացակայության պարագայում իրավաբանական օգնություն ցույց տալու պատշաճ իրավական ընթացակարգեր նախատեսելը, կարծում ենք, կարող է լուծել վճռաբեկ դատարանն անորակ բողոքներով չձանրաբեռնելու խնդիրը: Այս դեպքում հարցն արդեն իրավաբանական օգնություն տրամադրելու հիմքերի և ընթացակարգի հստակեցումն է⁵: Այս հարցում որոշակիորեն ուղղորդող նշանակություն կարող են ունենալ Եվրոպական դատարանի նա-

⁴ «Թուվմասյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի 2016 թ. հունվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ 11578/08, 31-րդ կետը, «Շմավոնյանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանի 2015 թ. հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 18499/08, 30-րդ և 36-րդ կետերը:

⁵ Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի նախագահը ևս սույն դատարանի օրինակով նշել էր, որ վիճակագրության համաձայն՝ առավելապես հաջողության են հավակնում վճռաբեկ դատարան փաստաբանի միջոցով ներկայացվող բողոքները (տե՛ս *G. Canivet, The system of justice and fair trials, Juris-classeur périodique, Study, I 361, no. 46, 2001* թվականի նոյեմբերի 14, էջ 2089):

ինչպիսիք են՝ իրավաբանական օգնություն ստանալու դիմումի անհապաղ քննությունը, դիմումների քննության գործընթացի հետ կապված հնարավոր կողմնակալության դեմ երաշխիքների առկայությունը: Ընդ որում, քննարկվող խնդրի առնչությամբ Եվրոպական դատարանը քննարկման առարկա է դարձրել իրավաբանական օգնության համար դիմումի քննության շրջանակներում բողոքի հիմքերին անդրադառնալու օրենսդրական կարգավորումները՝ դրսևորելով ոչ միատեսակ, հակասական մոտեցումներ: Այսպես, օրինակ, Բելգիայի դեմ գործերից մեկով Եվրոպական դատարանը որպես Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետի խախտում էր արձանագրել այն, որ դիմողի՝ իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքը անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժվել էր Իրավաբանական օգնության ներպետական խորհրդի կողմից (domestic Legal Aid Board): Եվրոպական դատարանը գտել էր, որ բողոքի հիմնավորվածությունը գնահատելը ոչ թե խորհրդի, այլ վճարելի դատարանի խնդիրն էր: Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ նշված խորհրդի կողմից իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքը մերժելը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ, արժեզրկել է արդարադատության մատչելիության իրավունքը: Սույն գործով Եվրոպական դատարանը հաշվի էր առել նաև վճարելի բողոքը փաստաբանի միջոցով բերելու պարտադիր օրենսդրական պահանջի առկայությունը¹²: Մինչդեռ, օրինակ, «Դել Սոլն ընդդեմ Ֆրանսիայի» գործով Իրավաբանական օգնության ներպետական խորհրդի կողմից վիճարկելի հիմքի բացակայության պատճառաբանությամբ քաղաքացիական գործով վճարելի բողոք բերելու համար անվճար իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքը մերժելը դարձյալ վճարելի բողոքը փաստաբանի միջոցով բերելու պարտադիր օրենսդրական պահանջի առկայության պարագայում Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6 հոդվածի խախտում չէր դիտել: Եվրոպական դատարանը իբրև որոշիչ գործոն հաշվի էր առել իրավաբանական օգնություն տրամադրելու ներպետական ընթացակարգի արդյունավետությունը, մասնավորապես իրավաբանական օգնություն ստանալու դիմումի անհապաղ քննությունը, դիմումների քննության գործընթացի հետ կապված՝ հնարավոր կողմնակալության դեմ երաշխիքների առկայությունը: Բացի այդ, Եվրոպական դատարանը գտել էր, որ բողոքի անհիմն լինելու բելգիական չափանիշն ավելի խիստ է, քան ֆրանսիական «վիճարկելի հիմքի բացակայությունը»¹³: Նույն գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում էր արտահայտել, ըստ որի՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կոնկրետ պայմանի նախատեսումը ուղղված է իրավաչափ այն նպատակի իրացմանը, որ հանրային

¹² Տե՛ս «*Aerts v. Belgium*», 1998 թվականի հուլիսի 30-ի վճիռ, գանգատ թիվ 61/1997/548/1051:

¹³ «*Del Sol v. France*», 2002 թվականի փետրվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 46800/99:

միջոցները պետք է հասանելի լինեն միայն այն դիմումատուներին, որոնց բողոքները ողջամտորեն հավակնում են հաջող արդյունքի: Եվ իրավաբանական օգնություն տրամադրելու համապատասխան ընթացակարգերը կարող են գործել, եթե նախատեսված են համապատասխան գործերի ընտրության մեխանիզմներ¹⁴: Հաշվի առնելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական լիազորությունների հետ կապված գործնականում առկա խնդիրները՝ կարծում ենք՝ իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ դիմումների քննության ընթացակարգերի համանման կարգի կիրառումն այն առումով, որ դիմումը բավարարելու պայման դիտվի բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը, կարող է ավելի սրել գործնականում առկա խնդիրները: Անվճար իրավաբանական օգնություն տրամադրելը բողոքի հիմքերի և հիմնավորումների բովանդակությամբ պայմանավորելու կարգավորումը, կարծում ենք, ոչ այնքան իրավաչափ է նաև այն առումով, որ այս փուլում անձը իրավաբանական օգնության է դիմում հենց այն պատճառով, որ անձամբ հնարավորություն չունի բավարար հիմքեր և հիմնավորումներ պարունակող պատշաճ որակի բողոք ներկայացնելու: Ինչ վերաբերում է այն հարցին, թե որ մարմինը պետք է քննի համապատասխան դիմումները, ապա կարծում ենք՝ մեզանում ավելի կիրառելի կլինի Լեհաստանի փորձը, երբ բողոք բերելու համար իրավաբանական օգնություն ստանալու դիմումը ներկայացվում է դատական ակտը կայացրած դատարան:

Այժմ անդրադառնանք բողոքարկման իրավունք ունեցող կոնկրետ սուբյեկտներին և վերջիններիս կողմից բողոքարկման իրավունքի իրացման պայմաններին: Քրեադատավարական տեսության մեջ առանձնացնում են դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացման ընդհանուր և հատուկ նախադրյալներ: Այսպես, օրինակ, Ն. Ն. Կոփտունը դատախազի կողմից վճռաբեկ բողոք բերելու իրավունքը կապում է ընդհանուր բնույթի այնպիսի նախադրյալի հետ, ինչպիսին ստորադաս դատարանի անօրինական և չհիմնավորված դատական ակտ կայացնելու հետևանքով խախտված հանրային շահը պաշտպանելու անհրաժեշտությունն է¹⁵: Մեկ այլ բնորոշմամբ՝ դատախազի կողմից ստորադաս դատարանի անօրինական, չհիմնավորված և ոչ արդարացի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունքը ոչ միայն հասարակության և պետության օրինական շահերի, այլև անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության միջոց է: Բազմաթիվ դատավարագետներ դատախազի կողմից վճռաբեկ բողոք բերելու այս պայմանը կապում են վճռաբեկ վարույթի

¹⁴ Տե՛ս «*X v. the United Kingdom*», 1980 թվականի հուլիսի 10-ի վճիռ, գանգատ թիվ 8158/78, «*Garcia v. France*», 1991 թվականի հունվարի 10-ի վճիռ, գանգատ թիվ 14119/88:

¹⁵ Տե՛ս **Ковтун Н. Н.** Судебный контроль в уголовном судопроизводстве России: понятие, сущность, формы, дис. ... д-ра юрид. наук. М., 2003, էջ 347-348:

շրջանակներում դատախազի մեղադրանքի պաշտպանության և օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառնությունների հետ: Դատավարագետների կարծիքով՝ բոլոր այն դեպքերը, երբ դատախազը բողոք է բերում ամբաստանյալի (արդարացվածի) վիճակը վատթարացնելու պահանջով, ըստ էության ոչ այլ ինչ են, քան մեղադրանքի գործառնության շարունակություն¹⁶: Այդ նույն դատավարագետների կարծիքով՝ դատախազը քրեական դատավարությունում իրականացնում է ոչ միայն մեղադրանքի, այլև օրինականության նկատմամբ հսկողության գործառնություն: Այդ պատճառով դատախազն իրավունք ունի բողոք բերելու ոչ միայն մեղադրանքի շահերից ելնելով, այլև ի շահ ամբաստանյալի¹⁷: Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը հանրային շահից անկախ դիտելու դիրքորոշումը քննադատության տեղիք է տալիս այն առումով, որ հանրային շահը նույնացվում է սուսկ պետության շահի հետ՝ դրան հակադրելով մասնավոր շահը: Հանրային շահի պաշտպանությունը չի ենթադրում ի վնաս ամբաստանյալի ցանկացած, այդ թվում՝ ոչ արդար դատական ակտն ուժի մեջ թողնելը: Դատախազի կողմից ոչ արդար դատական ակտի բողոքարկումը հոգուտ ամբաստանյալի ևս հանրային շահի պաշտպանության գործառնության շրջանակներում է: Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, որ վճռաբեկ բողոք բերելը և այն պաշտպանելը մեղադրանքի գործառնության շարունակությունն է դատավարական նոր պայմաններում, ապա մենք հակված ենք տեսության մեջ առկա հակառակ այն մոտեցմանը, որ վճռաբեկ վերանայման վարույթի շրջանակներում դատախազի կողմից իրականացվում է բացառապես վճռաբեկ բողոքի պաշտպանության գործառնություն¹⁸: Վերաքննիչ բողոք բերելու գործառնության վերաբերյալ նույն դիրքորոշումն է արտահայտել նաև վճռաբեկ դատարանը *Գ. Ղազարյանի* գործով 2012 թվականի մարտի 30-ի ԱԲԴ/0121/01/11 որոշման մեջ՝ հստակեցնելով, որ դատախազի կողմից մեղադրանքի գործառնության իրականացումն ավարտվում է առաջին ատյանի դատարանում դատավճռի կայացմամբ, և ըստ այդմ դատախազը վերաքննիչ դատարանում պաշտպանում է իր բերած վերաքննիչ բողոքը կամ հարուցած միջնորդությունը: Այսպիսով, վճռաբեկ վարույթի շրջանակներում դատախազն իրականացնում է բացառապես վճռաբեկ բողոքի պաշտպանության գործառնություն, որն ուղղված է հանրային շահի պաշտպանությանը, այդ թվում և՛ քրեական դատա-

¹⁶ Տե՛ս **Руденко Р. А.** Задачи органов прокуратуры и новых общесоюзных законов. "Социалистическая законность", 1959, № 4, էջ 12, **Строгович М. С.** Проверка законности и обоснованности судебных приговоров. М., 1956, էջ 180:

¹⁷ Տե՛ս **Калмыков В. Б.** Кассационное производство в уголовном процессе: Проблемы теории и правоприменения. Дисс.... канд. юрид. наук. Казань, 2010, էջ 105-107, **Куцова Э. Ф.** Советская кассация как гарантия законности в правосудии. М., 1949, էջ 42, **Гродзинский М. М.** Кассационное и надзорное производство в советском уголовном процессе. М., 1949, էջ 23-24, 37, 41:

¹⁸ Տե՛ս **Строгович М. С.**, նշվ. աշխ., էջ 180:

վարության մասնակիցների մասնավոր շահերը պաշտպանելու եղանակով: Ինչ վերաբերում է մասնավոր շահերի պաշտպանությունը օրինականության նկատմամբ հսկողության գործառնության շրջանակներում դիտարկելու մոտեցումներին, ապա դրանց հետ դժվար է համաձայնել, քանի որ դատախազությունն առհասարակ այլևս չի իրականացնում օրինականության նկատմամբ ընդհանուր հսկողության գործառնություն:

Եթե դատախազի կողմից ստորադաս դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելը հանրային շահի պաշտպանության միջոց է, ապա վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող մյուս սուբյեկտների համար՝ իրենց մասնավոր շահերի պաշտպանության միջոց: Վերջին դեպքում բողոք բերելու ընդհանուր պայմանը դատական ակտով բողոք բերող սուբյեկտի օրինական շահերի խախտումն է¹⁹: Վերոհիշյալ ընդհանուր պայմանին պետք է ավելացնել նաև Օրենսգրքի 404 հոդվածի 2-րդ մասի այն կարգավորումը, համաձայն որի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում: Այս օրենսդրական կարգավորման առումով կարելի է որոշակի զուգահեռներ անցկացնել Մահմանադրական դատարան կամ Եվրոպական դատարան դիմելիս իրավական պաշտպանության միջոցները սպառելու պահանջի հետ: Խոսքը, մասնավորապես, այն մասին է, որ անձը պետք է վերաքննիչ բողոքում բարձրացնի իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստը, արձագանքի ստորադաս դատարանի թույլ տված դատական սխալներին, առարկի ստորադաս դատարանի ենթադրյալ անօրինական գործողությունների և որոշումների դեմ՝ հետագայում վճռաբեկ դատարանում այդ հարցերի վերստին քննարկմանը հավակնելու համար: Մինչև ժամանակ, իհարկե, պետք է նշել, որ այս պայմանի տառացի մեկնաբանությունից բխում է, որ վճռաբեկ բողոք բերելիս անձը կաշկանդված է բացառապես բողոքի հիմքերով, սակայն ոչ հիմնավորումներով, և վճռաբեկ բողոքում անձը կարող է լրացնել, հարստացնել վերաքննիչ բողոքում նշված հիմքերի առկայությունը հիմնավորող փաստարկները: Այս եզրահանգման օգտին է խոսում նաև այն, որ վճռաբեկ բողոքում, ի տարբերություն վերաքննիչ բողոքի, անձը պետք է լրացուցիչ հիմնավորի նաև բողոքը վարույթ ընդունելու պայմանների առկայությունը: Բացի այդ՝ պետք է նշել, որ թեպետ վերոհիշյալ նորմն ուղղակիորեն որևէ բացառություն չի նախատեսում, այդուհանդերձ, չսահմանափակվելով դրա տառացի մեկնաբանությամբ և առաջնորդվելով իրավական նորմը մեկնաբանելու ոսկե կանոն-

¹⁹ Տե՛ս **Ռ. Ն. Մելիքյան**, Վերաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում, Եր., 2007, էջ 90-91, **Беззубов С. И.** Производство по уголовному делу в апелляционном суде: проблемы теории, нормативного регулирования и правоприменительной практики. Дисс... канд. юрид. наук. Н. Новгород, 2007, էջ 53, **Калмыков В. Б.** նշվ. աշխ., էջ 116:

նով, որի էությունը օրենսդրի կամքը բացահայտելու հնարքն է, կարծում ենք, դրա գործողությունը ողջամտորեն չի կարող տարածվել այն դեպքերի վրա, երբ անձը չի բողոքարկել իր համար բարենպաստ դատական ակտը վերաքննիչ դատարան, սակայն մյուս կողմի բերած վերաքննիչ բողոքի քննությամբ վերաքննիչ դատարանը կայացրել է իր շահերին հակասող դատական ակտ: Կարծում ենք՝ հակառակ մեկնաբանությունը չի կարող բխել այս նորմը նախատեսելու օրենսդրի կամքից: Այս իրավակարգավորմանն անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-849 որոշման մեջ՝ ընդհանուր առմամբ ընդունելի համարելով այն մոտեցումը, որ եթե իրավական բողոքում նշված հիմքի (հիմքերի) վերաբերյալ ստորադաս դատական ատյաններում քննություն չի կատարվել, ապացույցներ չեն հավաքվել, հետազոտվել ու գնահատվել, ապա վճարել դատարանը զրկվում է տվյալ դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու հնարավորությունից: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանի կարծիքով, առկա իրավակարգավորման տառացի մեկնաբանությունը վերաքննիչ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և նոր դատական ակտ կայացնելու դեպքում դատավարության մասնակիցներին կարող է զրկել ըստ էության նոր դատական ակտի դեմ վճարել բողոք բերելու իրավունքից: Ըստ այդմ Սահմանադրական դատարանը գտել է, որ պետք է ապահովվեն վճարել բողոքի պարտադիր ընդունումն ու քննությունը բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքի շրջանակներում վերաքննիչ դատարանը շահագրգիռ կողմի բողոքի քննության արդյունքներով կայացրել է առաջին ատյանի դատարանի դատական ակտից տարբերվող ըստ էության նոր դատական ակտ: Քննարկվող նորմի նման մեկնաբանությունը կոչված է երաշխավորելու վերաքննիչ դատարանի կայացրած ըստ էության նոր դատական ակտի վերանայման իրավունքը, ինչը կարող է սահմանափակվել վճարել բողոքը վարույթ ընդունելու հայեցողությամբ պայմանավորված: Սակայն, մեր կարծիքով, վերաքննիչ դատարանի կայացրած ըստ էության նոր դատական ակտի վերանայման իրավունքը երաշխավորելու խնդիրը պետք է լուծել ոչ թե վճարել դատարանի հայեցողական լիազորությունները սահմանափակելով, կամ կոնկրետ դեպքերում վերաքննիչ դատարանի կողմից ոչ թե նոր դատական ակտ կայացնելով, այլ գործը ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու պահանջ նախատեսելով: Բացի այդ, նույն հիմքով դատական ակտը վերաքննիչ դատարան բողոքարկելու՝ վճարել բողոք բերելու պայմանի տառացի մեկնաբանության հետևանքով առաջացող տարբերումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք 404 հոդվածի 2-րդ մասի «դատական ակտը» բառակապակցությունից առաջ հավելել «իր համար անբարենպաստ» բառերը:

Ինչ վերաբերում է վճարել բողոքարկման հատուկ նախադրյալ-

ներին, ապա այդպիսիք կանխորոշում են քրեական դատավարության այս կամ այն սուբյեկտի՝ դատական ակտի բողոքարկման լիազորությունների շրջանակը (ծավալը): Հատուկ նախադրյալներն ուղղակիորեն կախված են քրեական դատավարության համապատասխան սուբյեկտի դատավարական կարգավիճակից²⁰: Օրենսգիրքը, ինչպես արդեն նշվել է, վճռաբեկ բողոք բերելու իրավունք վերապահում է դատավարության մասնակիցներին՝ այդ շրջանակից բացառելով քրեական հետապնդման մարմիններին՝ դատախազին, քննիչին և հետաքննության մարմնին: Վերոհիշյալ նորմի և դատավարության մասնակիցների շրջանակը սահմանող՝ Օրենսգրքի 6 հոդվածի 31-րդ կետի համակարգային վերլուծությունից բխում է, որ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը:

Այսպիսով, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում օրենսդիրն առաջին հերթին նախատեսում է տուժողին: Մինչև «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-34-Ն օրենքն ուժի մեջ մտնելը տուժողն իրավունք ուներ վճռաբեկ բողոք բերել միայն մասնավոր մեղադրանքի գործերով: Վերոհիշյալ օրենքով տուժողի վճռաբեկ բողոքարկման իրավունքի այդ ոչ իրավաչափ սահմանափակումը վերացվեց: Տուժողն իրավունք ունի վճռաբեկ բողոք բերել վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա ցանկացած դատական ակտի դեմ, որը խախտում է իր իրավունքներն ու օրինական շահերը: Քրեադատավարական տեսության մեջ կարծիք կա, որ տուժողն իրավունք ունի բողոքարկելու միայն դատավճռի այն հատվածը, որն անմիջականորեն վերաբերում է իրեն և կապված է իրեն պատճառված վնասի հետ²¹: Կարծում ենք՝ նման դիրքորոշումը տուժողի կողմից՝ դատական ակտի իր համար անբարենպաստ մասի դեմ բողոք բերելու պայմանի չափազանց նեղ և ոչ իրավաչափ մեկնաբանություն է: Տուժողը, օրինակ, կարող է բողոքարկել մեղադրական դատավճիռը՝ դրանով նշանակված պատժի կամ ամբաստանյալին մեղսագրվող արարքին տրված իրավական գնահատականի հետ համաձայն չլինելու կամ ստորադաս դատարանի կողմից իր իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական իրավունքի խախտումներ թույլ տրված լինելու դեպքում²²: Տեսական գրականության մեջ քննարկման առարկա է դարձել տուժողի կողմից ամբաստանյալի վիճակը բարելավող բողոք բերելու իրավունքը: Կա այն տեսակետը, որ տուժողը

²⁰ Տե՛ս **Ковтун Н. Н.**, նշվ. աշխ., էջ 351:

²¹ Տե՛ս **Калмыков В. Б.**, նշվ. աշխ., էջ 36:

²² Տե՛ս **Гродзинский М. М.**, նշվ. աշխ., էջ 26:

նման իրավունք չունի, քանի որ դա չի բխում իր մասնավոր շահերից, իսկ համապատասխան խախտումները կարող են դատախազի կողմից բողոք բերելու հիմք ծառայել²³: Քննարկելով ամբաստանյալի վիճակի բարելավման խնդրանքով տուժողի կողմից վերաքննիչ բողոք բերելու իրավաչափությունը՝ Ռ. Ն. Մելիքյանը դիրքորոշում է արտահայտել, որ տուժողի օրինական շահերի մեջ է մտնում ոչ թե որևէ անձի, այլ հենց իրեն վնաս հասցրած անձին դատապարտելը, ուստի նա համաձայնել է Մ. Մ. Վիդրյայի այն տեսակետին, որ տուժողին պետք է իրավունք վերապահվի բողոքարկելու մեղադրական դատավճիռը հանցագործությանն ամբաստանյալի մասնակցության ապացուցված չլինելու հիմքով: Բացի այդ, Ռ. Ն. Մելիքյանի կարծիքով, օրենքի վերլուծությունից չի բխում, որ ի շահ ամբաստանյալի բողոք բերելու տուժողի իրավունքը որևէ կերպ սահմանափակված է, ուստի անհրաժեշտ է ճանաչել տուժողի իրավունքը՝ վերաքննիչ բողոքում խնդրելով նվազեցնել նշանակված պատիժը²⁴: Մենք ինքներս հակված ենք այն մոտեցմանը, որ տուժողի կողմից դատական ակտի բողոքարկումը ի շահ ամբաստանյալի առանձին դեպքերում կարող է համահունչ լինել վերջինիս մասնավոր շահերին, ինչը չի սահմանափակում մրցակցության սկզբունքը, և չեն խախտվում տուժողի իրավունքները²⁵:

Վճռաբեկ բողոք բերելու ինքնուրույն սուբյեկտ է նաև քաղաքացիական հայցվորը: Քաղաքացիական հայցի մասով դատարանի գործողություններն ու այլ որոշումները բողոքարկելու քաղաքացիական հայցվորի ընդհանուր իրավունքն ամրագրված է Օրենսգրքի 61 հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում: Բացառապես քաղաքացիական հայցի մասով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու հատուկ պայմանը նախատեսված է վերաքննիչ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը սահմանող՝ Օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասում: Նման հատուկ պայման Օրենսգրքի 404 հոդվածը չի նախատեսում, սակայն նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ արդեն իսկ հիշատակված ընդհանուր պայմանի և նույն օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասի համակարգային վերլուծությունից բխում է, որ քաղաքացիական հայցվորը վճռաբեկ բողոք կարող է ներկայացնել բացառապես քաղաքացիական հայցի մասով: Դատավճիռը կարող է շոշափել քաղաքացիական հայցվորի շահերը քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու կամ քաղաքացիական հայցն այս կամ այն չափով բավարարելու մասով²⁶, քանի որ քաղաքացիական հայցվորը

²³ Ст'я Александров А. С., Ковтун Н. Н. Субъекты апелляции обжалования приговора: пределы процессуальных прав и полномочий // "Журнал российского права", 2002, № 5, էջ 108-115:

²⁴ Ст'я Ռ. Ն. Մելիքյան, նշվ., աշխ., էջ 97:

²⁵ Ст'я Сухова О. А. Кассационное обжалование судебных решений в Российском уголовном процессе. Дисс. ... канд. юрид. наук. Саранск, 2004:

²⁶ Ст'я Куцова Э. Ф., նշվ. աշխ., էջ 54-55, Калмыков В. Б., նշվ. աշխ., էջ 121:

շահագրգռված է, որ քաղաքացիական հայցը բավարարվի այն չափով, որն անհրաժեշտ է իրեն պատճառված գույքային վնասն ամբողջ ծավալով հատուցելու համար: Քաղաքացիական հայցվորն իրավունք ունի բողոքարկելու մեղադրական դատավճիռն այնպիսի հիմքերով և այն մասով, որոնք վերաբերում են իր ներկայացրած քաղաքացիական հայցին: Քաղաքացիական հայցվորն իրավասու չէ բողոքարկելու ստորադաս դատարանի դատական ակտը արարքին տրված իրավական գնահատականի կամ ընտրված պատժատեսակի կամ նշանակված պատժաչափի մասով²⁷: Որոշ իրավական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք քաղաքացիական հայցվորին պետք է ընձեռվի արդարացման դատավճիռը բողոքարկելու հնարավորություն: Այս հարցի առնչությամբ դատավարագետների մտեցումը միանշանակ չէ: Որոշակիորեն գերակշռող է այն տեսակետը, որ քաղաքացիական հայցվորի՝ իր իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավորման նպատակով վերջինիս պետք է իրավունք վերապահել բողոքարկելու արդարացման դատավճիռը՝ հիմքերի մասով այնքանով, որքանով դրանք կապված են քաղաքացիական հայցի հետ²⁸: Քաղաքացիական հայցվորը, սակայն, պետք է իրավունք ունենա բողոքարկելու ոչ թե ինքնին արդարացումը, այլ արդարացման հիմքն այնքանով, որքանով դրանից է կախված քաղաքացիական հայցի հետագա ճակատագիրը, ուստի իր գույքային շահերի պաշտպանությունը²⁹:

Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող ինքնուրույն սուբյեկտ է քաղաքացիական պատասխանողը, որն իրավունք ունի իր դեմ ներկայացված քաղաքացիական հայցի մասով բողոքարկելու ստորադաս դատարանի դատական ակտը (Օրենսգրքի 75 հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ): Քաղաքացիական հայցվորը կարող է բողոքարկել մեղադրական դատավճիռը, օրինակ՝ իրեն որպես քաղաքացիական պատասխանող, իր կարծիքով, առանց օրինական հիմքերի ներգրավելու և հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու պարտականություն դնելու, քաղաքացիական հայցը բավարարելու որոշման կամ քաղաքացիական հայցի չափի մասով: Առանձին դատավարագետների կարծիքով՝ իր բողոքում քաղաքացիական պատասխանողն իրավասու է անդրադառնալու նաև հանցադեպին ու հանցակազմի հատկանիշներին՝ հիմնավորելով ամբաստանյալի անմեղությունը³⁰: Իրավացիորեն հիմնավորելով այս դիրքորոշումը՝ Ռ. Ն. Մելիքյանը նշում է, որ քաղաքացիական հայցի և քրեական պատասխանատվության հիմքերի միա-

²⁷ Տե՛ս **Калмыков В. Б.**, նշվ. աշխ., էջ 121:

²⁸ Տե՛ս **Калмыков В. Б.**, նշվ. աշխ., էջ 122:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 59, 62:

³⁰ Տե՛ս **Познанский В. А.** Вопросы теории и практики кассационного производства в советском уголовном процессе. Саратов, 1978, էջ 56:

ձուլման պայմաններում, ի տարբերություն քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և ամբաստանյալի միջև օրինական շահերի բախումը բացակայում է, և իրավական խոչընդոտ չկա, որպեսզի քաղաքացիական պատասխանողը բողոքարկի քաղաքացիական պատասխանատվության հիմքի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի հետևությունները: Դատավարագետի կարծիքով՝ չի բացառվում նաև քաղաքացիական պատասխանողի կողմից առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճռի կամ գործը կարճելու մասին որոշման բողոքարկումը, եթե արդարացման հիմքն այնպիսին է, որ քաղաքացիական պատասխանողին չի ազատում գույքային վնասը հատուցելու պարտականությունից³¹:

Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում քրեադատավարական օրենքը նախատեսում է կասկածյալին (մեղադրյալին): Ընդ որում, հաշվի առնելով, որ կասկածյալն օրենքով նախատեսված դեպքերում օրենքի ուժով կարող է համարվել արդարացված, իսկ մեղադրյալը՝ ամբաստանյալ³², կարելի է եզրակացնել, որ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն նաև ամբաստանյալը, արդարացվածի կարգավիճակ ձեռք բերած կասկածյալը: Կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ անձը կարող է ունենալ բացառապես քրեական գործով մինչդատական վարույթում: Հետևաբար, կասկածյալը կամ մեղադրյալը որպես վճռաբեկ բողոքարկման սուբյեկտ կարող են հանդես գալ, եթե վճռաբեկ դատարան են բողոքարկվում մինչդատական վարույթում գտնվող գործերով՝ այդ փուլի նկատմամբ դատական վերահսկողության կարգով կայացված դատական ակտերը: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքարկման առարկա են դատական քննության փուլում կայացված դատական ակտերը, ապա այս դեպքում վճռաբեկ բողոքարկման սուբյեկտը ամբաստանյալն է: Ամբաստանյալն օժտված է վճռաբեկ բողոքարկման լայն իրավունքով, կարող է բողոքարկել ոչ միայն մեղադրական, այլև արդարացման դատավճիռը (քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը) արդարացման հիմքերի մասով (Օրենսգրքի 66 հոդվածի 2-րդ մաս), քանի որ արդարացման կոնկրետ հիմքով պայմանավորված անձը կարող է ազատվել

³¹ Ռ. Ն. Մեյխրան, նշվ. աշխ., էջ 102:

³² Մեղադրյալն օրենքով նախատեսված դեպքերում օրենքի ուժով կարող է համարվել նաև դատապարտյալ կամ արդարացված: Սակայն հաշվի առնելով, որ մեղադրյալը դատապարտյալի կամ արդարացվածի կարգավիճակ է ձեռք բերում իր նկատմամբ կայացված մեղադրական կամ արդարացման դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, իսկ վճռաբեկ բողոքարկման առարկա են օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը, հետևաբար դատապարտյալը կամ արդարացվածը վճռաբեկ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շարքում նախատեսվել չի կարող: Իհարկե պետք է վերապահում անել այն առումով, որ վճռաբեկ բողոքարկման առարկա են նաև դատական ակտերի կատարման կապակցությամբ կայացված որոշումները, իսկ այս դեպքում վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունի դատապարտյալը:

ոչ միայն քրեական պատասխանատվությունից, այլև տուժողին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից: Որոշ տեսաբանների կարծիքով, անձը, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կարող է բողոքարկել դրա հիմքում ընկած պատճառաբանությունները, եթե դատավճռում տեղ գտած ձևակերպումներն այնպիսին են, որ անձի անմեղությունը կասկած է հարուցում³³:

Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում նախատեսված է նաև պաշտպանը: Թեև պաշտպանը քրեական դատավարության ինքնուրույն սուբյեկտ է և քրեական դատավարությունում իրականացնում է քրեադատավարական օրենքով իրեն վերապահված լիազորությունները, այդուհանդերձ վերջինս քրեական դատավարությունում ունի ոչ թե սեփական, այլ ներկայացվող շահ, ուստի վճռաբեկ բողոքարկման նրա իրավունքը սահմանափակված է պաշտպանյալի դիրքորոշմամբ: Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտներ են նաև տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի (մեղադրյալի) օրինական ներկայացուցիչները, տուժողի, քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչները: Եթե օրինական ներկայացուցիչն իրավունք ունի, անկախ տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի կամքից, ինքնուրույն բողոքարկելու ստորադաս դատարանի դատական ակտը, ապա ներկայացուցչի վճռաբեկ բողոքարկման իրավունքն ածանցվում է ներկայացվողի համապատասխան իրավունքից, և եթե ներկայացուցիչն ինքնուրույն և իր անունից է վճռաբեկ բողոք բերում, ապա այն բնականաբար պետք է համաձայնեցվի տուժողի կամ քաղաքացիական հայցվորի հետ:

Անդրադառնալով դատախազի վճռաբեկ բողոք բերելու իրավունքին ինչպես արդեն նշել ենք, Օրենսգրքի՝ սկզբնական խմբագրությամբ 404 հոդվածը նախատեսում էր, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող էին բերել գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները, իսկ մեղադրողը նշված իրավունքը կարող էր իրացնել միջնորդավորված կարգով՝ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանի միջոցով: Իսկ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ մեղադրողն ինքը անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք ուներ: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման բարդացված ընթացակարգ նախատեսելը, կարծում ենք, կարելի է բացատրել դատական ակտերի կայունության սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությամբ: Սակայն այդ տրամաբանության մեջ չեն տեղավորվում «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2006 թվականի հունիսի 1-ի թիվ ՀՕ-108-Ն օրենքով կատարված փոփոխությունները, երբ նախատեսվեց օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը ոչ միայն ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների,

³³ Տե՛ս Строгович М. С., նշվ. աշխ., էջ244:

այլև մեղադրողի կողմից անմիջականորեն բողոքարկելու հնարավորություն: «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի փետրվարի 21-ի թիվ ՀՕ-93-Ն օրենքի ընդունումից հետո վճռաբեկ բողոքարկման իրավունքը վերապահվեց բացառապես ՀՀ գլխավոր դատախազին և նրա տեղակալներին³⁴, իսկ մեղադրողը զրկվեց թե՛ միջնորդավորված կարգով և թե՛ անմիջականորեն վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքից: Քանի որ նույն օրենքով ներմուծվեց նաև հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտը, կարծում ենք՝ նշված փոփոխությունները պայմանավորված էին ավելի վաղ ընդունված՝ ՀՕ-152-Ն օրենքով բողոքը վարույթ ընդունելու հայեցողական կարգի ներմուծմամբ և բողոքին ներկայացվող բովանդակային պահանջների խստացմամբ: Մեր կարծիքով, օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի և դրանով պայմանավորված՝ վճռաբեկ վերանայման հայեցողական լիազորությունների առկայության պայմաններում վճռաբեկ բողոքարկման իրավունքը բացառապես ՀՀ գլխավոր դատախազին և նրա տեղակալներին վերապահելը միանգամայն իրավաչափ է, քանի որ նման կարգավորումը վճռաբեկ բողոքարկման տեղայնացված գործընթացը կենտրոնացնելու, այն առավել համակարգված դարձնելու նպատակ է հետապնդում: Դա կարող է նպաստել ՀՀ գլխավոր դատախազության կողմից պատշաճ, այսպես կոչված, ընտրողական քաղաքականության իրականացման, որպեսզի վճռաբեկ դատարան հասնեն այն գործերը, որոնցով բարձրացված իրավական խնդիրները համահունչ են այս դատարանի դերին ու կոչմանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների և վերջիններիս կողմից իրենց այդ իրավունքի իրացման կարգի տեսանկյունից գործող օրենսդրական կարգավորման զարգացումներն ընդհանուր առմամբ հիմքում ունեցել են բողոքարկման առարկայով, բողոքարկման կարգի փոփոխությամբ (խոսքը հայեցողական կարգի ներմուծման մասին է) պայմանավորված՝ տարբերակված կարգավորում նախատեսելու տրամաբանություն, թեև օրենսդիրը ոչ միշտ է հետևողական եղել այդ նպատակի իրացման հարցում: Դրա վառ օրինակն է այն, որ, նախատեսելով փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ընդհանուր առմամբ իրավաչափ մեխանիզմ, հետևողական չի

³⁴ Թեպետ օրենսդիրը վճռաբեկ բողոք բերելու իրավունքն ուղղակիորեն վերապահել է գլխավոր դատախազին և նրա տեղակալներին, այդուհանդերձ վճռաբեկ դատարանը Կ. Սահակյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի ԱՎԴ/0002/11/10 որոշման մեջ գտել է, որ դատախազին վճռաբեկ բողոքարկման իրավունք չտրամադրելու հակասում է մրցակցության սկզբունքն ամրագրող՝ Օրենսգրքի 23 հոդվածին: Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածը ամրագրված է օրենսգրքի ընդհանուր մասում, իսկ 404 հոդվածը՝ հատուկ մասում, համապատասխան կոլիզիոն կանոնների կիրառմամբ՝ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ գործում է ընդհանուր մասի դրույթը: Գործնականում, սակայն, այս որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը կիրառվել է մինչև արդեն հիշատակված՝ ՀՕ-48-Ն օրենքի ընդունումը:

եղել դրան համահունչ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխավորող կարգավորումներ նախատեսելու հարցում արժեզրկելով նաև նշված իրավաչափ մեխանիզմի դերն ու նշանակությունը: Ուստի առաջարկում ենք «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կարգավորումները հստակեցնել այն առումով, որ այդպիսիք տարածվեն նաև վերաքննիչ և վճռաբեկ վարույթների վրա, իսկ Օրենսգրքի 404 հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Նշված անձինք վերաքննիչ դատարանի դատական ակտի հրապարակման պահից իրավունք ունեն միջնորդություն ներկայացնելու վերաքննիչ դատարան վճռաբեկ բողոք բերելու համար գործով վարույթին փաստաբան ներգրավելու մասին, որը պետք է քննության առնվի և լուծվի եռօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան վերաքննիչ դատարանի դատական ակտը դատավարության մասնակիցներին ուղարկելը: Միջնորդությունը պետք է քննության առնվի և լուծվի անհապաղ, եթե վերաքննիչ դատարանի դատական ակտն արդեն ուղարկվել է դատավարության մասնակիցներին»:

Բանալի բառեր – *հատուկ պայմաններ, ընդհանուր պայմաններ, վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման կարգի մոդելներ, վճռաբեկ բողոքարկման միջնորդավորված կարգ, հավատարմագրված փաստաբան, հատուկ արտոնագիր ունեցող փաստաբան*

SAMVEL DILBANDYAN, TATEV SUJYAN – *Субъекты кассационного обжалования.* – В статье анализируются общие и специальные предпосылки осуществления права на кассационное обжалование, разделяются модели осуществления этого права. В контексте позиций Конституционного и Европейского суда выявлена правомерность подачи кассационной жалобы через адвоката и делается вывод, что такое регулирование объективно необходимо. В статье одобрено предложение о подаче кассационной жалобы исключительно Генеральным прокурором или его заместителем.

Ключевые слова: *специальные предпосылки, общие предпосылки, модели реализации права на кассационное обжалование, опосредованный порядок подачи кассационной жалобы, аккредитованный адвокат, адвокат со специальной лицензией*

SAMVEL DILBANDYAN, TATEV SUJYAN – *Subjects of Cassation Appeal.*–General and special preconditions to exercise the right to appeal are analyzed in the article presented. The article definishtiates the models of performance of the right to cassation appeal. In the light of the legal positions of the Constitutional Court and the European Court the article reveals the legitimacy of the requirement to file a complaint through a lawyer and the conclusion is made that such a regulation is necessary for the effective implementation of the right to a cassation appeal in case of clarification of legal assistance procedures at this stage. The author also analyzes the legitimacy of the requirement to file a cassation appeal only by the Prosecutor General or his deputy.

Key words: *special preconditions, general preconditions, models of performance of the right to cassation appeal, intermediary procedure of filing a complaint, accredited advocate, a lawyer with a special license*

ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ

ԱՆՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1993-2016 թթ.)


ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հասարակության անդամների անվտանգության ապահովումը, հանցավորության դեմ պայքարը յուրաքանչյուր պետության առաջնա-
յին, սակայն լուծման առումով բարդություն ներկայացնող խնդիրներից
են: Հանցավորության առկայությունը ինքնին պայմանավորված է սո-
ցիալ-տնտեսական, իրավական, մշակութային, քաղաքական, կազմա-
կերպական, գաղափարախոսական գործոններով, որոնք էլ խիստ
դժվարացնում են դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողության
սահմանումը: Միաժամանակ, հանցավորությունը իրական վտանգ է
պետության անվտանգությանը՝ հանգեցնելով սոցիալ-քաղաքական
անկայունության, խոչընդոտում է տնտեսական բարեփոխումների ի-
րականացումը¹:

Այդ առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ-ում
հանցավորության ուսումնասիրությունը: ՀՀ ոստիկանության ինֆոր-
մացիոն կենտրոնի տրամադրած վիճակագրական տվյալների համա-
ձայն՝ 1993 թ. համեմատ 2016 թ. հանցավորությունը ՀՀ-ում աճել է 1.4
անգամ, և դա այն դեպքում, որ ՀՀ-ում բնակչությունը էապես նվազել է
(1993 թ.-ին եղել է 3.753.500, իսկ 2016 թ.-ին՝ 2.986.500 մարդ):

Պատկեր 1

Հանցավորությունը ՀՀ-ում 1993-2016 թթ.



Պատահական չէ, որ 1993 թ. հանցավորության գործակիցը 100.000
բնակչի հարաբերակցությամբ եղել է 349.2, իսկ 2016-ին՝ արդեն 628.3,
այսինքն՝ աճել է 1.8 անգամ:

¹ Տե՛ս Կոժե՜վնիկով Ի. Ս., Երեմենկո Վ. Մ. Анализ состояния борьбы с преступностью несовершеннолетних. "Вестник Калининградского филиала Санкт-Петербургского университета МВД России", 2008, № 2-2, էջ 122:

Հանցավորությունը ՀՀ-ում 1993-2016 թթ.՝ գործակիցներով

Գործակից	Թվական
349.2	1993
264.4	1994
269.2	1995
330.1	1996
325.9	1997
283.3	1998
264.4	1999
316.9	2000
357.4	2001
376.1	2002
344.7	2003
313.6	2004
275.7	2005
302.8	2006
260.9	2007
286.3	2008
441.3	2009
474.4	2010
548.5	2011
518.8	2012
607.6	2013
582.8	2014
568.4	2015
628.3	2016

Պաշտոնական վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ հանցավորության ցուցանիշները սկսել են կտրուկ աճել 2009 թ.-ից, ինչը ՀՀ իրավապահ մարմինները բացատրում են բոլոր հանցագործությունները առավել հստակ գրանցելու հանգամանքով²: Սակայն նույնիսկ այդ պատճառաբանության պարագայում պետք է արձանագրել, որ հանցավորությունը դրսևորում է աճի միտում, ինչի ակնառու վկայությունն է 2009 թ. համեմատ 2016 թ. հանցավորության գործակցի գրեթե 1.4 անգամ աճը:

Նման պայմաններում առանձին հետաքրքրություն է ներկայացնում անչափահասների հանցավորության վիճակի գնահատումը: Դասականորեն նման ուսումնասիրության կարևորությունը պայմանավորված է այն բանով, որ դա դիտվում է որպես չափահասների հանցավորության պահուստային ենթակառուց, որը կանխորոշում է ապագայում ընդհանուր հանցավորության պատկերի փոփոխությունը³:

Անչափահասների հանցավորության մասնաբաժինը ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 1993-2016 թթ.

Մասն	Թվակ
3.3%	1993
3.8%	1994
4.1%	1995
4.0%	1996
6.0%	1997
5.5%	1998
5.8%	1999
5.1%	2000
4.8%	2001
4.3%	2002
5.0%	2003
5.5%	2004
5.8%	2005
5.2%	2006
6.7%	2007
5.8%	2008
3.7%	2009
3.5%	2010
3.2%	2011
2.6%	2012
2.3%	2013
2.2%	2014
2.3%	2015
2%	2016

1993-2016 թթ. ՀՀ-ում անչափահասների հանցավորության մասնաբաժինը ընդհանուր հանցավորության մեջ տատանվել է 2-ից 7 տոկոս: Պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ 1993 թ. համեմատ 2016 թ. ընդհանուր հանցավորության կառուցվածքում նկատվել է անչափահասների հանցավորության մասնաբաժնի կտրուկ նվազում՝ 3.3%-ից դարձել է 2%, և

² Տե՛ս <http://www.lragir.am/index/arm/0/comments/wv5k/24763>

³ Տե՛ս **Գաբույան Ա. Ա.** Տեսություններ և խնդիրներ հանցագործության կառուցվածքում: Եր., 2007, էջ 159, **Դեմիդովա-Պետրովա Ե. Բ.** Սպեցիֆիկա և փոփոխություններ անչափահասների հանցագործության կառուցվածքում: Մոսկվա, 2017, տ. 2, № 1(3), էջ 14:

դա այն պարագայում, երբ 2007 թ. այդ ցուցանիշը կազմել է 6.7%:

Նման վիճակը կարող է ունենալ մի քանի հնարավոր բացատրություն.

1. ավելի մեծ թվով չափահասներ են հանցավոր վարքագիծ դրսևորել, ինչն էլ հանգեցրել է ընդհանուր հանցավորության մեջ անչափահասների հանցավորության համամասնության նվազման,

2. անչափահասների հանցավորության վերահսկման գործում իրավապահ մարմինները դրսևորել են արդյունավետ աշխատանք, ինչը հանգեցրել է անչափահասների հանցավորության կտրուկ նվազման,

3. նախկինում անչափահասների հանցավորությունը ուստիկանությունը ավելի հետևողական է գրանցել, հետևաբար ներկայումս չափահասների հանցավորության գրանցման պահանջների խստացման պարագայում անչափահասների հանցավորության մասնաբաժինը նվազել է,

4. ինչպես և նախկինում, ներկայումս ևս անչափահասների հանցավորությանը բնորոշ է բարձր լատենտայնությունը՝ պայմանավորված ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով, հետևաբար՝ հանցագործության բոլոր դեպքերը արձանագրելու պահանջը անչափահասների հանցավորության լրիվ արտացոլման առումով էական դերակատարություն չի ունեցել,


5. փոփոխության է ենթարկվել անչափահասների հանցավորության կառուցվածքը, դրա մաս հանդիսացող առանձին տարրեր ապարեականացվել են, կամ դրանց գրանցման նկատմամբ իրավապահ մարմինների վերաբերմունքն է փոփոխվել, ինչն էլ վիճակագրական պատկերում հանգեցրել է անչափահասների հանցավորության նվազման:

Հասկանալու համար, թե առաջադրված տարբերակներից որն է առավել իրատեսական, անհրաժեշտ է վերլուծության ենթարկել անչափահասների հանցավորության վիճակի, կառուցվածքի փոփոխությունը:

ՀՀ ուստիկանության տրամադրած վիճակագրությունը վկայում է, որ անչափահասների հանցավորությունը դրսևորում է կայուն նվազման միտում: Մասնավորապես, եթե 1993 թ. գրանցվել է անչափահասների 436 հանցանք, ապա 2016 թ.՝ ընդամենը 375:

Պատկեր 2

Անչափահասների հանցավորությունը ՀՀ-ում՝ 1993-2016 թթ.



Անչափահասների հանցավորության՝ 100.000 բնակչության հարաբերակցությամբ գործակիցների համեմատությունը, սակայն, վկայում է, որ 1993 թ. համեմատ 2016 թ. անչափահասների հանցավորությունը աճել է՝ 11.7-ից դառնալով 12.6: Անչափահասների հանցավորության՝ գործակցային արտացոլմամբ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1997 թ. 19.5, որից հետո՝ 1998-2012 թթ., անչափահասների հանցավորության վիճակը եղել է անկայուն՝ դրսևորելով մերթ աճ, մերթ նվազում, իսկ վերջին 4 տարիների ընթացքում առկա է կայուն նվազման միտում, թեև այդ ցուցանիշը 1993 թ. համեմատ դեռևս շարունակում է մնալ բարձր:

Աղյուսակ 3

Անչափահասների հանցավորությունը 1993-2016 թթ.՝ գործակիցներով

Թվական	Գործակից
1993	11.7
1994	10.1
1995	11.2
1996	13.3
1997	19.5
1998	15.5
1999	15.5
2000	16
2001	17.2
2002	16.2
2003	17.2
2004	17.3
2005	15.9
2006	15.7
2007	17.4
2008	16.6
2009	16.4
2010	16.4
2011	17.4
2012	13.6
2013	13.9
2014	12.9
2015	12.8
2016	12.6

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն, որ, երբ 2009 թ. գրանցվեց հանցավորության կտրուկ աճ, անչափահասների հանցավորությունում նման պատկեր տեղ չգտավ. 2008 թ. համեմատ 2009 թ. անչափահասների հանցավորության գործակիցը 16.6-ից դարձավ 16.4, որը պահպանվեց նաև 2010 թ.:

Առաջին հայացքից ստեղծվում է տպավորություն, որ անչափահասների հանցավորությունն իրոք օբյեկտիվորեն նվազում է, ինչը կարող է բացատրվել այս երևույթի դեմ իրավապահ մարմինների մղած պայքարի արդյունավետությամբ: Չնսեմացնելով անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողություն սահմանելու գործում իրավապահ մարմինների ձեռնարկած միջոցառումների նշանակությունը, այնուհանդերձ դժվար է միայն դրանք համարել անչափահասների հանցավորության նվազման պատճառ, հատկապես երբ ուշադրություն ենք դարձնում անչափահասների հանցավորության գործակիցների բաշխմանը ըստ մարզերի:

Մասնավորապես, աղյուսակ 4-ում ներկայացված վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ ՀՀ մի շարք մարզերում, հատկապես Կոտայքում, Լոռիում, Տավուշում, Արմավիրում, Սյունիքում, Վայոց ձորի մարզում անչափահասների հանցավորությունը աճում է: Օրինակ, Տավուշում անչափահասների հանցավորության գործակիցը 2003 թ. եղել է 14.1, իսկ 2015 թ.՝ 23.9, Լոռիում՝ համապատասխանաբար՝ 12.7 և 19.6, Կոտայքում՝ 13.9 և 22.1, Արմավիրում՝ 8.3 և 9.8, Սյունիքում՝ 10.5 և 13.6, Վայոց ձորում՝ 7.2 և 9.8: Ուշագրավ է, որ անչափահասների հանցավորության աճ է գրանցվել ՀՀ-ում դասականորեն ցածր հանցա-

վորության մակարդակ ունեցող այնպիսի մարզում, ինչպիսին Վայոց ձորն է: Հետևաբար, նման պայմաններում դժվար է խոսել անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողության, անչափահասների հանցավորության կայուն նվազման մասին, և առավել իրատեսական է թվում դրա լատենտայնացումը:

Աղյուսակ 4

**Անչափահասների հանցավորության գործակիցները 2003-2015 թթ.՝
ըստ մարզերի**

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Երևան	26	19,8	19,8	16,9	27,1	21,9	16,6	18,8	15,6	18,9	20,1	14,1	14,3
Արագածոտն	12,2	5	8,6	2,1	10,7	9,9	9,2	4,9	7	3,8	9,1	3,8	6,2
Արարատ	9,9	26,3	12,4	12,4	65,5	26,3	13,7	12,8	16,7	14,6	9,2	10	5,8
Արմավիր	8,3	15,8	2,9	5	8,5	7,4	20	8	12,9	6,7	8,6	10,5	9,8
Գեղարքունիք	18,9	10	5,4	12,9	9,2	2,9	10,4	20,2	15,2	7,6	5,1	8,6	5,2
Լոռի	12,7	19,4	18	20,9	13,5	21,3	26,6	32,6	13,5	10,7	16,9	18,9	19,6
Կոտայք	13,9	14,9	29,8	9,8	9,4	19,4	14,6	14,9	28,2	11,8	18	16,9	22,1
Շիրակ	13,1	13,8	16,3	33,4	19,6	10,3	13,5	12,1	12,7	15,1	5,6	7,6	6,6
Սյունիք	10,5	15,7	9,2	12,4	16,4	5,2	6,5	9,2	9,2	8,5	9,1	8,6	13,6
Վայոց Ձոր	7,2	7,4	7,2	5	47,2	1,8	10,8	7,1	10,7	7,7	15,5	17,5	9,8
Տավուշ	14,1	15,6	17,1	20,9	17,9	12,7	29	12,6	32,6	19,5	8,7	26,8	23,9

Բացի այդ, անչափահասների հանցավորության մասին եզրահանգումներ կատարելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բնակչության մեջ քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասների համամասնությանը: ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա են 14-18 տարիքային խմբի անչափահասները:

ՀՀ վիճակագրական ծառայության պաշտոնական վերկայքում ներկայացված տեղեկատվության համաձայն⁴՝ հնարավոր է գնահատել առանձին տարիքային խմբի ներկայացուցիչների, այդ թվում՝ 15-19 տարեկան անձանց համամասնության փոփոխությունն ըստ տարիների:

Աղյուսակ 5

15-19 տարիքային խմբի ներկայացուցիչների համամասնությունը բնակչության ընդհանուր թվում՝ 2003-2015 թթ.

Թվական	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Համամասն.	9.9%	9.9%	9.9%	9.9%	9.7%	9.5%	8.9%	8.3%	8.3%	7.1%	6.6%	6.3%	5.9%

2003-2015 թթ. վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ 15-19 տարեկանների համամասնությունը տարեցտարի

⁴ Տե՛ս www.armstat.am

նվազում է՝ 2003 թ. 9.9%-ից 2015 թ. հասնելով 5.9%-ի, ինչը ևս պայմանավորում է անչափահասների հանցավորության նվազումը:

Համադրելով անչափահասների 2003 և 2015 թթ. կատարած հանցագործությունների քանակը և բնակչության շրջանում նույն թվականներին 15-19 տարիքային խմբի ներկայացուցիչների համամասնությունը՝ կտեսնենք, որ անչափահասների հանցավորության նվազումը կապված է բնակչության շրջանում այդ տարիքային խմբի ներկայացուցիչների համամասնության նվազմամբ: Մասնավորապես, 2003 թ. անչափահասների հանցագործությունների բացարձակ ցուցանիշը (553 հանցանք) 1.43 անգամ գերազանցել է 2015 թ. տվյալը (385 հանցանք), մինևույն ժամանակ 15-19 տարիքային խմբի ներկայացուցիչների քանակը բնակչության ընդհանուր զանգվածում 2003 թ. 1.78 անգամ (320.100) ավելին է եղել 2015 թ. (179.700) համեմատ: Հետևաբար, կրկին չենք կարող պնդել, որ անչափահասների հանցավորության նվազման պատկերը իրավապահ մարմինների խիստ արդյունավետ աշխատանքի արդյունք է:

Անչափահասների հանցավորության վիճակի մասին պատկերացում կազմելու համար կարևոր նշանակություն ունի անչափահասների հանցավորության կառուցվածքի ուսումնասիրությունը:

Աղյուսակ 6

Անչափահասների հանցավորության կառուցվածքային հիմնական բաղադրիչները 2003-2015 թթ. բացարձակ թվերով

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
սպանություն	5	5	4	2	3	3	2	3	0	3	1	2	0
մարմնակ. վնասվ.	64	81	50	45	39	33	79	73	85	75	66	74	55
ծեծ	3	0	3	5	2	2	35	49	41	60	66	69	52
առևանգել	1	2	1	1	0	0	1	2	3	0	1	1	1
սեքսուալ	3	3	3	0	3	0	4	0	1	6	3	3	3
ավագակություն	9	9	6	9	2	16	10	12	17	2	4	4	0
կողոպուտ	13	13	24	17	16	16	41	26	6	3	7	5	10
գողություն	396	379	354	361	435	414	259	286	318	203	210	181	195
խարդախություն	3	2	5	3	5	6	2	3	1	5	1	1	8
շորթում	1	1	1	1	1	3	3	2	0	2	1	0	1
մեքենայի տիրանալ	8	14	18	5	19	6	9	2	4	0	4	4	9
գույք ոչնչացնել	1	2	2	2	3	3	6	9	2	5	3	4	2
զենքի շրջանառ.	8	7	6	2	8	4	9	16	2	11	9	14	20
ՃՏՊ	5	7	11	11	6	3	11	9	7	11	8	6	6
խուլիգանություն	11	22	12	22	5	8	19	16	17	5	6	2	0
թմրան. շրջան.	0	3	5	3	3	8	5	1	7	5	8	6	4

Առաջինը, ինչ աչքի է զարնում, պաշտոնական վիճակագրության մեջ անչափահասների կատարած շահադիտական հանցագործությունների, հատկապես գողությունների թվաքանակի կրճատումն, է ինչին դժվար է հիմնավոր բացատրություն գտնելը: Ըստ այդ տվյալների՝ անչափահասների կատարած գողությունները 2015 թ. 2003 թ. համե-

մատ նվազել են գրեթե երկու անգամ: Եվ դա այն պարագայում, երբ ընդհանուր հանցավորության մեջ գողությունները բացարձակ թվերով 2015 թ., 2003 թ. ցուցանիշի համեմատ, աճել են 2.1 անգամ՝ 2829 դեպքից դառնալով 5995:

Առավել իրատեսական է թվում այն, որ անչափահասների կատարած գողությունների, հատկապես դրա հասարակ տեսակների մեծ մասը պարզապես մնում է լատենտային: Իրավապահ մարմիններն առավել հաճախ տեղեկանում են անչափահասների կատարած գողությունների՝ ծանրացնող հանգամանքներով դրսևորումների՝ հատկապես բնակարան մուտք գործելով կատարվածների մասին: Դրա վկայությունն է այն, որ 2003 թ. անչափահասների կատարած գողությունների 13.4%-ը եղել է բնակարան կամ պահեստարան մուտք գործելով, իսկ 2015 թ. այդ ցուցանիշը կազմել է 19.5%՝ այսինքն՝ առավել հաճախ գրանցվել են բնակարան կամ պահեստարան մուտք գործելով կատարված գողությունները:

Միաժամանակ, անչափահասների շրջանում իմ ուսումնասիրության արդյունքները ևս վկայում են, որ գողությունների թվաքանակը անչափահասների շրջանում չի նվազել: Այսպես, ՀՀ-ում 10-17 տարեկան դպրոցականների շրջանում 2006 թ. անցկացված ISRD-2 և 2014 թ. անցկացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ աճել է գողության զոհ դարձած անչափահասների թիվը. եթե ISRD-2 ուսումնասիրության արդյունքների համաձայն գողությունից տուժել էր հարցվածների 9%-ը, ապա ISRD-3 ուսումնասիրության արդյունքներով՝ 11.1%, հետևաբար անչափահասների շրջանում գողությունների քանակը օբյեկտիվորեն չի նվազել⁵:

Միաժամանակ հետաքրքիր է, որ կտրուկ նվազել են անչափահասների կողմից կատարված խուլիգանությունների դեպքերը: Դժվար է հավատալ, որ օբյեկտիվ իրականության մեջ անչափահասները խուլիգանական արարքներ չեն կատարում, սակայն վիճակագրական նման ցուցանիշները ևս ունեն իրենց բացատրությունը. խուլիգանություն հանդիսացող արարքների քրեաիրավական գնահատականի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ⁶ ընդունելու արդյունքում կտրուկ նվազել է այն արարքների շրջանակը, որոնք իրավապահ մարմինների կողմից կարող են որակվել որպես խուլիգանություն, ինչն էլ իր անմիջական արտացոլումն է գտել պաշտոնական վիճակագրության մեջ:

ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ անչափահասների հանցավորության կառուցվածքում աճել են ծեծի դեպքերը՝ հատկապես 2009 թ.-ից սկսած, երբ 2008 թ. համեմատ գրանցված ծեծի դեպքերը ավել-

⁵ Տե՛ս **Anna Margaryan, Ara Gabuzyan**. Juvenile self-reported delinquency in Armenia in 2006. *Juvenile Delinquency in Europe and Beyond*, Springer, [2010], էջ 369-382:

⁶ Տե՛ս Արման Մհերի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՎԲ-223/06 որոշումը, Շահեն Նշանի Հախվերդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԴ/0014/01/11 որոշումը:

լացան 17.5 անգամ: Նման վիճակը, հավանաբար, արդյունք է 2009 թ. հանցավորության գրանցման նկատմամբ ոստիկանության դիրքորոշման փոփոխման, երբ խնդիր դրվեց առավել հստակ գրանցել ոստիկանությանը հայտնի դարձած հանցագործությունները: Հետևաբար՝ պետք է ենթադրել, որ հանցագործությունների գրանցման առումով ոստիկանությունը թե՛ չափահասների, թե՛ անչափահասների հանդեպ դրսևորել է նույն մոտեցումը: Իհարկե չպետք է անտեսել նաև այն, որ մեր հասարակությունում նկատվում է բռնի վարքագծի տարածում: Վերջին փաստարկի վկայությունն են նաև հարցումների արդյունքները. 2006 թ. անցկացված ISRD-2 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ հարցված անչափահասների 1.4%-ն էր նշել, որ վերջին մեկ տարվա ընթացքում բռնություն են գործադրել, վնաս են հասցրել ուրիշի առողջությանը, մինչդեռ 2014 թ. անցկացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 5.5%-ը⁷:

Այն, որ բռնությունը անչափահասների շրջանում առավել տարածում է ստանում, ակնառու է, առաջին հերթին, անչափահասների կողմից կատարվող շահադիտական և բռնի հանցագործությունների համամասնությունների համեմատությամբ:

Աղյուսակ 7-ից երևում է, որ անչափահասների հանցավորության կառուցվածքը վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ-ում ենթարկվել է որոշակի փոփոխության: Թեև պահպանվում է այն միտումը, որ անչափահասների կողմից առավել հաճախ կատարվում են շահադիտական, քան բռնի հանցանքներ, սակայն 2009 թ.-ից սկսած այդ համամասնությունը, ըստ պաշտոնական վիճակագրության, փոխվել է:

Աղյուսակ 7

Անչափահասների կողմից կատարվող բռնի և շահադիտական հանցագործությունների համամասնությունը 2003-2015 թթ. բացարձակ թվերով

տարեթիվ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
բռնի	16%	20%	14%	15%	9%	9%	27%	27%	28%	36%	34%	39%	29%
շահադիտական	76%	73%	76%	77%	82%	85%	59%	62%	65%	52%	53%	49%	56%

Եթե 2003 թ. անչափահասների հանցավորության կառուցվածքում նրանց կողմից կատարված շահադիտական հանցավորության մասնաբաժինը 76% էր, իսկ բռնիինը՝ 16%, ապա 2015 թ. այդ համամասնությունը համապատասխանաբար 56% և 29% էր: Այսինքն՝ անչափահասների կողմից բռնությամբ կատարվող հանցագործությունները կառուցվածքային առումով աճել են գրեթե 2 անգամ, մինչդեռ շահադիտականի մասնաբաժինը նվազել է:

Ստացված տվյալները հատկապես հետաքրքրական են, երբ դրանք համեմատում ենք ընդհանուր հանցավորության կառուցված-

⁷ Տե՛ս Anna Margaryan, Ara Gabuzyan, նշվ. աշխ., էջ 369-382:

քային առանձնահատկությունների հետ: Այստեղ շահադիտական և բռնի հանցավորության մասնաբաժինների փոփոխությունը այլ կերպ է զարգացել: Մասնավորապես, եթե անչափահասների հանցավորության կառուցվածքում նկատվում են շահադիտական հանցավորության մասնաբաժնի նվազում և բռնությամբ կատարվող հանցագործությունների տոկոսային հարաբերակցության աճ, ապա ընդհանուր հանցավորության մեջ աճել են ինչպես բռնի, այնպես էլ շահադիտական հանցագործությունները:

Աղյուսակ 8

Բռնի և շահադիտական հանցագործությունների համամասնությունը ընդհանուր հանցավորության մեջ 2003-2015 թթ.՝ բացարձակ թվերով

տարեթիվ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
բռնի	16%	18%	14%	13%	12%	12%	21%	21%	22%	27%	24%	26%	26%
շահադիտակ.	31%	35%	36%	39%	40%	43%	36%	32%	32%	33%	32%	34%	39%

Անչափահասների հանցավորության կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ կարևոր նշանակություն ունի նաև այն հարցի պարզաբանումը, թե որքան հաճախ են անչափահասները հանցանք կատարել խմբի կազմում:

Բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ վկայում են, որ անչափահասները հանցանք են կատարում առավելապես խմբի կազմում⁸: ՀՀ-ում այդ օրինաչափությունը ևս պահպանվում է, թեև 2003 թ. համեմատ նկատվում է խմբի կազմում հանցանքի կատարման հաճախականության նվազում:

Աղյուսակ 9

Խմբի կազմում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների տոկոսային հարաբերակցությունը՝ 2003-2015 թթ.

տարեթիվ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
անչափահասների կատարած	34.4	37.7	38.9	39.7	53.5	45.9	36.3	39.0	38.0	22.0	22.3	20.8	21.0

Ներկայացված պատկերը դեռևս չի նշանակում, որ անչափահասների կողմից խմբի կազմում հանցանքի կատարման միտումները կայուն կերպով նվազում են, ինչի վկայությունը ՀՀ մարզերում կատարված ուսումնասիրության արդյունքներն են: Մասնավորապես, 2003 թ. համեմատ Կոտայքում, Սյունիքում և Տավուշում նկատվում է անչափահասների կողմից խմբի կազմում հանցավոր վարքագծի դրսևորման ակտիվացում:

⁸ St´u Юзиханова Э. Г. Статистические показатели и тенденции преступности несовершеннолетних в новейшей России // "Юридическая наука и правоохранительная практика", 2014, № 4 (30), էջ 84, Игнатенко В. И. Групповая преступность несовершеннолетних как объект криминологического исследования // "Юрист Юга России и Закавказья", 2016, № 2 (14), էջ 34:

Աղյուսակ 10

Խմբի կազմում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների տոկոսային հարաբերակցությունը ըստ մարզերի՝ 2003-2015 թթ. (տոկոսային հարաբերությամբ)

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Երևան	30,8	33,9	36,7	38,5	54	42,4	31,4	33,6	24,4	22,3	20,9	9,9	10,4
Արագածոտն	29,4	42,9	8,3	33,3	46,7	50	23,1	28,6	20	0	16,7	0	12,5
Արարատ	29,6	41,7	17,7	52,9	33,3	20,6	36,8	44,4	36,2	10,8	33,3	26,9	0
Արմավիր	39,1	56,8	25	57,1	50	33,3	47,4	43,4	45,1	0	8,7	14,3	7,7
Գեղարքունիք	68,9	25	38,5	58,1	81,8	14,3	56	49	46	22,2	16,7	10	41,7
Լոռի	30,6	36,4	31,6	37,3	42,1	61,7	36	35,9	21,1	28	43,6	18,6	22,7
Վոտայք	34,2	46,3	75,6	59,3	46,2	81,5	17,1	52,4	56,3	3,3	13	58,1	39,3
Շիրակ	35,1	35,9	47,8	30,9	61,8	58,6	26,3	41,2	41,7	39,5	21,4	11,1	6,3
Սյունիք	3,3	58,3	42,9	47,4	68	12,5	30	57,1	35,7	0	23,1	16,7	42,1
Վայոց Ձոր	25	0	50	66,7	0	0	33,3	50	83,3	50	0	0	0
Տավուշ	31,6	23,8	4,4	7,1	45,8	58,8	64,1	23,5	52,3	52	45,5	47,1	53,3

Անչափահասների հանցավորության վիճակի ուսումնասիրությունը նաև թույլ տվեց վեր հանել մեկ այլ հետաքրքիր միտում. ՀՀ-ում նկատվում է իզական սեռի անչափահասների հանցավոր վարքագծի ակտիվացում: 2003 թ. հանցանք կատարած և քրեական պատասխանատվության ենթարկված անչափահասների ընդհանուր զանգվածում իզական սեռի ներկայացուցիչների մասնաբաժինը 2.5% էր, մինչդեռ 2015 թ.՝ արդեն 8.3%: Նման միտումը մտահոգիչ է, քանի որ վկայում է ՀՀ-ում սոցիալական ոչ ֆորմալ հսկողության խիստ թուլացման մասին, որը հատկապես ակնառու է աղջիկների պարագայում:

Աղյուսակ 11

Քրեական պատասխանատվության ենթարկված իզական սեռի անչափահասների համամասնությունը հանցանք կատարած անչափահասների զանգվածում՝ 2003-2015 թթ. (տոկոսային հարաբերությամբ)

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
ՀՀ	2.5	1.8	2.0	1.8	2.2	2.5	6.7	6.0	3.4	5.4	6.8	5.1	8.3

Իզական սեռի անչափահասների հանցավոր վարքագծի մեջ ներգրավման աստիճանը տարբեր է ըստ մարզերի. առավել խիստ, ավանդական մոտեցումներ ունեցող հասարակություններում, որտեղ ուժեղ է սոցիալական հսկողությունը իզական սեռի ներկայացուցիչների նկատմամբ, ավելի ցածր է հանցագործության մեջ նրանց ներգրավվածության աստիճանը:

Աղյուսակ 12

**Քրեական պատասխանատվության ենթարկված իգական սեռի
անչափահասների համամասնությունը հանցանք կատարած
անչափահասների զանգվածում՝ 2003-2015 թթ. ըստ մարզերի
(տոկոսային հարաբերությամբ)**

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Երևան	2,1	2,7	1,7	1,4	2,1	3,9	5,2	5,7	6	7	6,4	6,8	11,8
Արագածոտն	5,6	0	0	0	5,6	0	7,7	16,7	5,6	0	8,3	20	0
Արարատ	0	3,5	0	0	0	0	7,1	7,7	0	5,3	9,5	0	0
Արմավիր	0	0	0	0	6,3	0	3	8,7	3,7	5,6	4	5,6	5
Գեղարքունիք	6,7	0	8,3	5	6,3	0	8,6	6,5	2,6	0	1,1	5,6	9,1
Լոռի	0	4,3	4,1	2	0	5,7	7,6	5,6	7	0	10,3	5,3	0
Կոտայք	3,2	0	0	0	0	0	6,1	3,9	0	3,9	8	0	6,9
Շիրակ	6,5	0	2,6	1,9	4,9	3,9	10,8	9,7	0	3,6	5,9	0	0
Սյունիք	0	0	0	0	0	0	0	0	5,6	9,1	0	7,7	12,5
Վայոց Ձոր	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տավուշ	5,3	0	5,9	8,7	0	0	12	4,4	0	10,5	0	5,9	11,1

Կառուցվածքային առումով հաջորդ դիտարկումը վերաբերում է հանցանք կատարած անձանց տարիքային կազմին. քրեական պատասխանատվության ենթարկված անչափահասների շուրջ 1/5-ը հանցանքի կատարման պահին եղել է 14-15 տարեկան:

Աղյուսակ 13

**Քրեական պատասխանատվության ենթարկված 14-15 տարեկան
անչափահասների համամասնությունը հանցանք կատարած
անչափահասների զանգվածում՝ 2003-2015 թթ. ըստ մարզերի
(տոկոսային հարաբերությամբ)**

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Երևան	22,9	31,5	34,8	25,7	29,3	26,2	20,9	14,1	22	19	13,9	13,6	22,9
Արագածոտն	11,1	33,3	14,3	20	39	40	30,8	16,7	33,3	20	16,7	60	0
Արարատ	12,5	31	36	33,3	33,3	41,7	28,6	30,8	20,6	7,9	23,8	12,5	15,4
Արմավիր	23,5	5,3	42,9	54,6	56,3	35,3	15,2	34,8	29,6	11,1	16	25	40
Գեղարքունիք	40	14,3	58,3	45	31,3	0	34,3	30,4	20,5	11,1	16,7	11,1	36,7
Լոռի	25,6	31,9	32,7	22	25	17,1	31,8	25	20,9	37,5	37,9	26,3	19,1
Կոտայք	19,4	45,5	37,7	26,9	30,8	28	21,2	34,6	56,7	19,2	28	32,1	20,5
Շիրակ	22,6	39,3	42,1	44,2	39	30,8	16,2	19,4	29	3,6	23,5	25	5,6
Սյունիք	21,1	38,9	15,8	31,6	33,3	44,4	44,4	28,6	27,8	182	25	15,4	18,8
Վայոց Ձոր	40	0	80	50	25	0	28,6	25	88,9	100	37,5	62,5	33,3
Տավուշ	15,8	57,9	35,3	34,8	25	29,4	32	26,1	26,3	31,6	40	17,7	38,9

Ընդ որում, այդ համամասնությունը ՀՀ-ում գրեթե չի փոխվել 2003-2015 թթ.՝ 22.2-ից դառնալով 23.1%, սակայն առանձին մարզերում, օրինակ՝ Տավուշում, նկատվել է այս տարիքային խմբի ներկայացուցիչների հանցավոր վարքագծի ակտիվացում:

Անչափահասների հանցավորության վիճակի գնահատման առումով կարևորություն ներկայացնող գործոններից է նաև ռեցիդիվը՝ դիտավորյալ հանցանքի կատարումը այն անձի կողմից, ով դատվածություն ունի դիտավորյալ հանցանք կատարելու համար:

ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հանցանք կատարած անձանց շրջանում ռեցիդիվ դրսևորած անձանց թիվը զգալիորեն պակասել է՝ 2003 թ. 17.8%-ից դառնալով 2.6%: Թվում է, թե սա պետք է ուրախացուցիչ գործոն լիներ, սակայն միաժամանակ դա վկայում է, որ ավելի ու ավելի մեծ թվով անձինք են հանցավոր վարքագիծ դրսևորում. օրինակ՝ Տավուշի մարզում հանցավորության աճի ֆոնին նկատվում է ռեցիդիվ դրսևորած անձանց մասնաբաժնի նվազում՝ 2003 թ. 10.3%-ից 2015 թ. հասնելով 1.1%-ի: Նույն պատկերն է նաև Կոտայքում՝ 2003 թ. 16.7%-ից ռեցիդիվի ցուցանիշը հասել է 0.9%-ի, Սյունիքում՝ 23.5-ից՝ 6.1%:

Անչափահասների շրջանում այդ ցուցանիշները ևս նվազում են. ՀՀ-ում 2003 թ. քրեական պատասխանատվության ենթարկված անչափահասներից ռեցիդիվ է դրսևորել 12.2%-ը, իսկ 2015 թ.՝ 0.3%-ը:

Աղյուսակ 14

Ռեվիդիվ դրսևորած անչափահասների համամասնությունը (տոկոսային հարաբերությամբ) հանցանք կատարած անչափահասների զանգվածում՝ 2003-2015 թթ. ըստ մարզերի

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Երևան	13,8	9,4	10,1	9,3	7,1	2,9	2,9	2,8	1,8	0	0	0	0,6
Արագածոտն	16,7	0	14,3	0	11,1	6,7	0	0	5,6	0	0	0	0
Արարատ	6,3	3,4	0	0	0	4,2	4,8	0	0	0	0	0	0
Արմավիր	0	10,5	0	0	0	5,9	3	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	0	4,8	0	0	6,3	16,7	0	0	0	0	0	0	0
Լոռի	11,6	4,3	8,2	0	3,6	8,6	10,6	6,6	4,7	0	0	0	0
Կոտայք	12,9	3	3,8	0	3,9	4	6,1	7,7	0	0	0	0	0
Շիրակ	19,4	3,6	2,6	3,9	7,3	0	0	0	6,5	0	0	0	0
Սյունիք	15,8	11,1	5,3	5,3	12,5	22,2	0	14,3	0	0	0	0	0
Վայոց Ձոր	0	0	0	0	0	0	0	0	0	0	25	0	0
Տավուշ	10,5	5,3	5,9	13	16,7	0	4	4,3	0	0	0	0	0

Նշենք նաև, ինչպես և չափահասների պարագայում, անչափահասների շրջանում ևս մեծանում է նախկինում հանցանք չկատարած

անձանց առավել ակտիվ ներգրավվածությունը հանցանքի կատարմանը, ինչն առավել ակնառու է ըստ մարզերի անչափահասների շրջանում ռեցիդիվը գնահատելիս:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ թեև ՀՀ-ում պաշտոնապես գրանցվում է անչափահասների հանցավորության նվազում, սակայն դա ոչ թե իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքի, անչափահասների արժեքային համակարգի, բարոյական հայացքների բարելավման շնորհիվ է, այլ անչափահասների հանցավոր վարքագծի լատենտայնության մեծացման և բնակչության զանգվածում անչափահասների մասնաբաժնի նվազման հետևանք:

Բանալի բառեր – *անչափահասների հանցավորություն, լատենտայնություն, հանցավորության կառուցվածք, հանցավորության վիճակ, հանցագործությունների գրանցում, հանցավորության գործակից*

АННА МАРГАРЯН – Состояние преступности несовершеннолетних в Республике Армения (1993–2016). – Эффективная борьба с преступностью – важная и чрезвычайно сложная задача любого государства. Согласно официальной статистике, за период 1993-2016 гг. преступность в РА выросла в 1.4 раза. За тот же период зарегистрировано снижение преступности несовершеннолетних, а также уменьшение её процента. В статье проанализированы возможные причины этого. Делается вывод, что ситуация объясняется большей латентностью преступности несовершеннолетних, а также падением доли несовершеннолетних в общей массе населения.

Ключевые слова: *преступность несовершеннолетних, латентность, структура преступности, состояние преступности, регистрация преступлений, коэффициент преступности*

ANNA MARGARYAN – Juvenile Criminality in the Republic of Armenia (1993-2016). – Fight against crime is one of the most important, but at the same time the most challenging tasks of any state. According to RA official crime statistics, over the period of 1993-2016 the crime has increased for more than 1.4 time. However, the same trend can not be constated when looking over the development of juvenile crime, as the latter one has declined. The author has analysed the possible factors which brought to such a situation and came to the conclusion, that the decline of youth crime in the official statistics is a result of increased latency of the crimes committed by juveniles in parallel with the decrease of juveniles' proportion in the total population.

Key words: *juvenile crime, latency, structure of crime, situation of crime, registration of crimes, crime coefficient*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. Արթուր Վաղարշյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
Артур Вагаршян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ
Artur Vagharshyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU
Էլ. փոստ՝ avagharshyan@ysu.am
- 2. Գևորգ Դանիելյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ
Геворг Даниелян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой конституционного права ЕГУ
Gevorg Danielyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Constitutional Law, YSU
Էլ. փոստ՝ gdanielyan@ysu.am
- 3. Արմեն Հայկյանց** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
Армен Айкянц – доктор юридических наук, профессор кафедры гражданского права ЕГУ
Armen Haykyants – Sc. D. in Legal Sciences, Professor at the Chair of Civil Law, YSU
Էլ. փոստ՝ ahaykyants@ysu.am
- 4. Մովսես Խաչատրյան** – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ
Мовсес Хачатрян – аспирант кафедры гражданского права ЕГУ
Movses Khachatryan – PhD student, Chair of Civil Law, YSU
- 5. Գևորգ Պետրոսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ
Геворг Петросян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского процесса ЕГУ
Gevorg Petrosyan – PhD in Legal Sciences, Associate Professor, Chair of Civil Procedure, YSU

6. **Մամվել Դիլբանդյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ
Самвел Дилбандян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса и криминалистики ЕГУ
Samvel Dilbandyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Էլ. փոստ՝ s.dilbandyan@ysu.am
7. **Տաթև Սույջյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ
Татев Суджян – кандидат юридических наук, ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
Tatev Sujyan – PhD in Legal Sciences, Assistant, Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Էլ. փոստ՝ tatevsujyan@ysu.am
8. **Աննա Մարգարյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
Анна Маргарян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ
Anna Margaryan – PhD, Associate Professor, Chair of Criminal Law, YSU
Էլ. փոստ՝ annamargaryan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА THEORY AND HISTORY OF STATE AND LAW

- Արթուր Վաղարշյան* – «Իրավունքի կիրառում» հասկացության հիմնա-
հարցերը..... 3
Артур Вагаршян – Проблемы понятия "применение права"
Artur Vagharshyan – Issues on the Concept of Application of Law

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО CONSTITUTIONAL LAW

- Ջևորգ Դանիելյան* – Սահմանադրական իրավունքների իրացման իրա-
վական մշակույթը..... 18
Геворг Даниелян – Правовая культура реализации конституционных прав
Gevorg Danielyan – Legal Culture for Exercising Constitutional Rights

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ГРАЖДАНСКОЕ ПРАВО CIVIL LAW

- Արմեն Հայկյանց, Մովսես Խաչատրյան* – Անարդար պայմանները ապա-
հովազրության պայմանագրում..... 33
Армен Айкянци, Мовсес Хачатрян – Несправедливые условия в договорах
страхования
Armen Haykyants, Movses Khachatryan – Unfair Terms in Insurance Contracts

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ТРУДОВОЕ ПРАВО LABOUR LAW

- Ջևորգ Պետրոսյան* – Աշխատանքային իրավունքների չարաչափման
խնդրի շուրջ (ՀՀ աշխատանքային օրենսգրքի գիտագործնական
մեկնաբանություններ)..... 44
Геворг Петросян – О злоупотреблении трудовыми правами (Научно-
практические комментарии к Трудовому кодексу РА)
Gevorg Petrosyan – On the Issue of Abuse of Labour Rights (Scientific-practical
interpretations of Labour Code of RA)

ՔՐԵԱՎԱՆ ԴԱՏԱՎԱԴՈՒԹՅՈՒՆ
УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС
CRIMINAL PROCEDURE

Սամվել Դիրանյան, Տաթև Սուջյան – Վճռարեկ բողոքարկման սուբյեկտները..... **54**
Самвел дилбандян, Татев Суджян – Субъекты кассационного обжалования
Samvel Dilbandyan, Tatev Sujyan – Subjects of Cassation Appeal

ՎՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ
КРИМИНАЛОГИЯ
CRIMINOLOGY

Աննա Մարգարյան – Անչափահասների հանցավորության վիճակը Հայաստանի Հանրապետությունում (1993-2016 թթ.) **71**
Анна Маргарян – Состояние преступности несовершеннолетних в Республике Армения (1993-2016)
Anna Margaryan – Juvenile Criminality in the Republic of Armenia (1993-2016)

Տեղեկություններ հեղինակների մասին **84**
Сведения об авторах
Information about the Authors

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Правоведение" выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Jurisprudence" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

**Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan**

Հեռ. 060 710 218, 060 710 219

**Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am**

**Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader**

**Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan**

**Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer**

**Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan**

**Ստորագրված է տպագրության 03. 09. 2017:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ:**